Թողարկման 15-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2008

մարտ

թիվ 3 (115)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները մի շարք ապահովագրական ՍՊԸ-ներ և ՓԲԸ-ներ վերագրանցելու և լիցենզիաներ տրամադրելու, ինչպես նաև գրավատան կազմակերպման և բրոքերային գործունեության լիցենզիաների գործողությունը դադարեցնելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները «Մանի Գրեմ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն, արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու, վերալիցենզավորելու, մասնաճյուղը գրանցելու, ինչպես նաև մի շարք արտարժույթի փոխանակման կետերի լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու և նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 55Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 43-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

6 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 44-Ն որոշումը «Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ը հաստատելու մասին»

10 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 47-Ն որոշումը «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում փոփոխություններ կատարելու մասին»

11 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 50-Ն որոշումը «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին»

169 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 51-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

170 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 52-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի օգոստոսի 30-ի թիվ 444-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

172 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 53-Ն որոշումը «Տասը հազար դրամ անվանական արժեքով 2008 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները շրջանառության մեջ դնելու մասին»

175 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Վերագրանցվել և լիցենզիաներ են տրամադրվել*** «Ռասկո», «Լոնդոն-Երևան Կօ» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ, «Կասկադ Ինշուրանս», «Գարանտ-Լիմենս», «Սիլ Ինշուրանս», «Ինգո Արմենիա», «Նաիրի Ինշուրանս», «Պատիվ-Հայաստան» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 57Ա, 100Ա, 58Ա, 77Ա, 94Ա, 97Ա, 98Ա,101Ա):
- ***Ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզիա է տրամադրվել*** «Լիդեր Բրոք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 59Ա):
- ***Դադարեցվել է*** «էՅ. էՄ. ԱՐ. Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատան կազմակերպման, ինչպես նաև «Սարինյան և Ընկ.» ինվեստիցիոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բրոքերային գործունեության լիցենզիաների գործողությունը (որոշումներ թիվ 60Ա, 62Ա):
- ***«Մանի Գրեմ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Ինեկոբանկ» և «Արցախբանկ» փակ բաժնետիրական և «Պրոմեթեյ բանկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 61Ա, 87Ա, 86Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «Նորմեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 67Ա):
- ***Վերալիցենզավորվել են*** «Ռեզոլուշն ապահովագրական բրոքեր» և «ԱԿԲԱ ապահովագրական բրոքեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները (որոշումներ թիվ 95Ա, 99Ա):
- ***Գրանցվել և լիցենզավորվել է*** «ՎՏԲ Լիզինգ» լիզինգային վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (որոշում թիվ 96Ա):
- Հայաստանի Հանրապետության արժութային օրենսդրության պահանջները խախտելու համար 7 արտարժույթի փոխանակման կետերի ***լիցենզիաները ուժը կորցրած են ճանաչվել*** (որոշումներ թիվ 82Ա, 83Ա, 88Ա-92Ա), 1 արտարժույթի փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշում թիվ 1/175Ա):
- ***Գրանցվել է*** «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Հրազդան» մասնաճյուղը (որոշում թիվ 1/275Ա):

ՅԻ ՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 55Ա որոշմամբ 2008 թվականի մարտի 4-ից ***ՀՀ կենտրոնական բանկի կողմից կնքվող ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը սահմանվել է 6.25%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային վարկերի տոկոսադրույքը՝ 9.25%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներգրավվող ավանդների տոկոսադրույքը՝ 3.25%:***

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին *

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ը հաստատելու մասին» թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 10) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) Կանոնակարգ 10-ի գլուխ 2-ի 3-րդ կետը լրացնել նոր «ժդ» ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«ժդ. Կենտրոնական բանկի պահանջով՝ հիմնավորումներ այն մասին, որ հայտատուն հանդիսանում է նաև տվյալ խանութում առուվաճառք իրականացնող իրավաբանական անձը կամ տվյալ առևտրի կենտրոնում առևտրի իրականացման կազմակերպիչը կամ տվյալ հյուրանոցում հյուրանոցային ծառայություններ մատուցող իրավաբանական անձը:»:

2) Կանոնակարգ 10-ի գլուխ 2-ի 4-րդ կետը լրացնել նոր «ի» ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«ի. Կենտրոնական բանկի պահանջով՝ հիմնավորումներ այն մասին, որ հայտատուն հանդիսանում է նաև տվյալ խանութում առուվաճառք իրականացնող իրավաբանական անձը կամ տվյալ առևտրի կենտրոնում առևտրի իրականացման կազմակերպիչը կամ տվյալ հյուրանոցում հյուրանոցային ծառայություններ մատուցող իրավաբանական անձը:»:

3) Կանոնակարգ 10-ի գլուխ 2-ի 5-րդ կետը լրացնել նոր «է» ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«է. Կենտրոնական բանկի պահանջով՝ հիմնավորումներ այն մասին, որ հայտատուն հանդիսանում է նաև տվյալ խանութում առուվաճառք իրականացնող իրավաբանական անձը կամ տվյալ առևտրի կենտրոնում առևտրի իրականացման կազմակերպիչը կամ տվյալ հյուրանոցում հյուրանոցային ծառայություններ մատուցող իրավաբանական անձը:»:

4) Կանոնակարգ 10-ի գլուխ 8-ի 49-րդ կետի «զ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«զ. արտարժույթի առուվաճառքի փոխարժեքները արտացոլող վահանակ (վահանակներ),»:

5) Կանոնակարգ 10-ի գլուխ 8-ի 49-րդ կետի «է» ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

6) Կանոնակարգ 10-ի գլուխ 9-ի 57-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«57. Եթե փոխանակման կետի փոխարժեքները արտացոլող վահանակի վրա արտացոլված է տվյալ արժույթի փոխարժեքը, և եթե դրամարկղում առկա են պահանջվող գումարը և համապատասխան անվանական արժեքով դրամանիշեր, ապա փոխանակման կետը չի մերժում տվյալ գործարքի իրականացումը:»:

7) Կանոնակարգ 10-ի գլուխ 9-ի 59-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«59. Փոխանակման կետը փոխանակման կետի դրամարկղի ներսում հաճախորդի համար տեսանելի տեղում տեղակայված փոխարժեքները արտացոլող վահանակի (վահանակների) վրա փակցնում է իր կողմից իրականացվող արտարժույթի առուվաճառքի գործառնությունների տեսակների ցանկը և փոխարժեքները: Փոխանակման կետը կարող է նաև փոխարժեքները արտացոլող վահանակ (վահանակներ) տեղադրել հաճախորդների սպասարկման սրահում, իսկ առևտրի (սպասարկման) սրահ ունեցող խանութներում, փակ (ոչ բացօթյա) առևտրի կենտրոններում, հյուրանոցներում, օդանավակայանների և երկաթուղային կայարանների տարածքներում գտնվող փոխանակման կետերը կարող են՝ նաև նշված տարածքներում (սպասարկման սրահներում):»:

8) Կանոնակարգ 10-ի հավելվածի Ձև 1-ը հաստատել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
18 փետրվարի 2008 թ., N 43-Ն

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. փետրվարի 12-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 11.03.08 թ. (ՀՀԳՏ N10 (284), 1.04.08):

Ձև 1
«Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների
լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ի հավելված

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ
ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
պարոն _____

Խնդրում եմ տրամադրել արտարժույթի առուվաճառքի լիցենզիա:

Լիցենզավորվող անձի անվանումը _____
Կազմակերպական-իրավական ձևը _____
Գտնվելու վայրը _____
Գործունեության վայրը _____
Հեռախոսահամարը (գործադիր մարմնի ղեկավարի և/կամ նման պարտականություններ կատարող այլ պաշտոնատար անձի) _____

Կից ներկայացնում եմ (հերթական դասավորությամբ նշել ներկայացվող փաստաթղթերը).

1. _____
2. _____
3. _____

Դիմող՝ _____ _____
(անուն, ազգանունը) *(ստորագրությունը)*

Պաշտոնը՝

Կ. Տ.

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը, 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 3-րդ մասը, 72-րդ և 73-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. փետրվարի 12-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 11.03.08 թ. (ՀՀԳՏ N10 (284), 1.04.08):

1. Հաստատել «Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի ապրիլի 1-ից, բացառությամբ սույն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ի 2-րդ գլխի 3-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից:

3. 2008 թվականի հունիսի 30-ից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի ««Մասնագիտացված անձանց գործունեության տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը և հաշվարկում օգտագործվող մեծությունների կազմը» կանոնակարգ 42-ը հաստատելու մասին» թիվ 145-Ն որոշումը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
18 փետրվարի 2008 թ., N 44-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի փետրվարի 12-ի թիվ 44-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/02

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐԸ, ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՏԱՐՐԵՐԻ ԿԱԶՄԸ, ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՉԱՓԸ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Սույն կանոնակարգը սահմանում է ներդրումային ընկերությունների գործունեության պարտադիր տնտեսական նորմատիվները (այսուհետ՝ նորմատիվ), դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը և սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը:

ԳԼՈՒԽ 2. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը ներդրումային ընկերությունների համար սահմանում է ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափերի նորմատիվը:

2. Ներդրումային ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սահմանվում է.

1) 20 միլիոն ՀՀ դրամ, եթե ներդրումային ընկերությունը չի տիրապետում հաճախորդի միջոցներին (արժեթղթերին և (կամ) դրամական միջոցներին) և իրավունք ունի իրականացնել հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում,

2) 100 միլիոն ՀՀ դրամ, եթե ներդրումային ընկերությունն իրավունք ունի իրականացնել «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-ից 6-րդ կետերում նշված ներդրումային ծառայությունները և 26-րդ հոդվածի 1-ին կետում նշված ոչ հիմնական ծառայությունը,

3) 150 միլիոն ՀՀ դրամ, եթե ներդրումային ընկերությունն իր կանոնադրության համաձայն իրավունք ունի իրականացնել վարկային կազմակերպության գործունեություն:

3. Ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը սահմանվում է սույն գլխի 2-րդ կետով սահմանված ընդհանուր կապիտալի նվազագույն չափին համապատասխան:

4. Ներդրումային ընկերությունը տիրապետում է հաճախորդի միջոցներին (արժեթղթերին և (կամ) դրամական միջոցներին), եթե այդ ընկերությունը հաճախորդի միջոց-

ները պահում է իր հաշվում կամ փաստացի հնարավորություն ունի տիրապետել դրանք:

5. Մեկից ավելի գործունեությունների իրականացման դեպքում ներդրումային ընկերության նկատմամբ կիրառվում է դրանցից յուրաքանչյուրի համար սահմանված նորմատիվի այն սահմանաչափը, որն ավելի խիստ է:

ԳԼՈՒԽ 3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՏԱՐՐԵՐԻ ԿԱԶՄԸ

6. Ներդրումային ընկերության ընդհանուր կապիտալը նրա հիմնական (առաջնային) և լրացուցիչ (երկրորդային) կապիտալների հանրագումարն է՝ համապատասխան նվազեցումները կատարելուց հետո: Ընդ որում, ընդհանուր կապիտալի մեծությունը հաշվարկելիս լրացուցիչ կապիտալը հիմնական կապիտալի հաշվարկում ընդգրկվում է հիմնական կապիտալի (սույն կանոնակարգի 8-րդ կետի համաձայն կատարվող նվազեցումները հաշվի առած) առավելագույնը 50%-ի չափով:

7. Ներդրումային ընկերության հիմնական կապիտալը հետևյալ տարրերի հանրագումարի և հիմնական կապիտալի մեծությունից նվազեցվող տարրերի տարբերությունն է՝

1) վճարված կանոնադրական կապիտալ, ներառյալ՝ բաժնետոմսերի հավելավճար,

2) չբաշխված շահույթ,

3) գլխավոր պահուստ:

8. Հիմնական կապիտալի մեծությունից նվազեցվող տարրերն են՝

1) ոչ նյութական ակտիվների (այդ թվում՝ շահագործումից դուրս) հաշվեկշռային արժեքը (բացառությամբ՝ ներդրումային ընկերության կողմից ներդրումային ծառայությունների ընթացքում օգտագործվող համակարգչային ծրագրերի և դրանց օգտագործման իրավունքների վճարումների),

2) ներդրումային ընկերության կողմից հետ գնված կամ ձեռք բերված սեփական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի գումարը,

3) բանկի, վարկային կազմակերպության կամ այլ ներդրումային ընկերության կանոնադրական կապիտալներում իրականացված ներդրումների հաշվեկշռային արժեքը, բացառությամբ, եթե այդ ներդրումը կատարվել է առևտրական նպատակներով այնպիսի բաժնային արժեթղթերում, որոնք «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հրապարակային առաջարկի առարկա են կամ թույլատրվել են կարգավորվող շուկայում (այդ թվում՝ ֆոնդային բորսայում) առևտրին,

4) ներդրումային ընկերության սեփականությունը հանդիսացող և ներդրումային ծառայությունների համար չօգտագործվող նյութական ակտիվների (հիմնական միջոցների և այլ նյութական ակտիվների, այդ թվում՝ գրավի տնօրինման արդյունքում կամ այլ պահանջներից առաջացած սեփականացված ակտիվների, շահագործումից դուրս այլ հիմնական միջոցների, ինչպես նաև ներդրումային ծառայությունների համար չօգտագործվող հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների) հաշվեկշռային արժեքը՝ այդ ակտիվները օրենքով սահմանված կարգով ներդրումային ընկերության սեփականությունը համարվելու օրվանից վեց ամիս հետո,

5) ներդրումային ընկերության սեփականությունը հանդիսացող և ներդրումային ծառայությունների համար օգտագործվող այն նյութական ակտիվների (ներառյալ՝ այդ ակտիվների վրա կատարված կապիտալ ներդրումների) հաշվեկշռային արժեքը, որոնց որևէ մասը վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով տրվել է այլ անձանց,

6) ներդրումային ընկերության սեփականությունը հանդիսացող և ներդրումային ծառայությունների համար օգտագործվող նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը (հիմնական միջոցների, այդ թվում՝ անշարժ գույքի (շենքերի և շինությունների), այլ հիմնական միջոցների, ինչպես նաև ներդրումային ծառայությունների համար օգտագործվող հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների) սույն կանոնակարգի 7-րդ կետի 1-ից 3-րդ ենթակետերում նշված մեծությունների հանրագումարի 25 տոկոսը գերազանցող գումարի չափով,

7) ներդրումային ընկերության վարձակալած հիմնական միջոցի բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումների հաշվեկշռային մնացորդը,

8) այլ անձանց (բացառությամբ սույն գլխի 8-րդ կետի 3-րդ ենթակետում նշված անձանց) կանոնադրական կապիտալներում իրականացված ներդրումների հաշվեկշռային արժեքը, բացառությամբ՝

ա. այն արժեթղթերի, որոնք «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հրապարակային առաջարկի առարկա են կամ թույլատրվել են կարգավորվող շուկայում (այդ թվում՝ ֆոնդային բորսայում) առևտրին, կամ

բ. այն օտարերկրյա արժեթղթերի, որոնք Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված օտարերկրյա պետությունների ցանկում ընդգրկված որևէ պետությունում թույլատրված են հրապարակային առաջարկին (վաճառքին) և (կամ) առևտրին՝ տվյալ պետության արժեթղթերի օրենսդրությամբ սահմանված կարգով, կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկաների ցանկում ընդգրկված որևէ կարգավորվող շուկայում թույլատրված են առևտրին՝ տվյալ կարգավորվող շուկայի կանոններով սահմանված կարգով,

9) ներդրումային ընկերության հետ փոխկապակցված անձանց տրամադրված փոխառությունները (այդ թվում՝ պարտատոմսերը և պարտքային այլ արժեթղթերը) և ցանկացած այլ գումարները, նրանց նկատմամբ այլ պահանջները, բացառությամբ՝ նրանց նկատմամբ ներդրումային ծառայությունների շրջանակում մատուցած ծառայությունների պայմանագրերից բխող դեբիտորական պարտքերի, փոխկապակցված բանկերում բանկային հաշիվների և ավանդների,

10) ցանկացած անձի (բացառությամբ սույն գլխի 8-րդ կետի 9-րդ ենթակետում նշված անձանց) տրամադրված փոխառություններ (այդ թվում՝ պարտատոմսերի և պարտքային այլ արժեթղթերի միջոցով) և այլ գումարներ, ինչպես նաև ցանկացած անձի պարտավորությունների կատարումն ապահովող այլ միջոցներ, բացառությամբ՝

ա. ներդրումային ծառայությունների շրջանակում մատուցած ծառայությունների պայմանագրերից բխող դեբիտորական պարտքերի,

բ. բանկերին և վարկային կազմակերպություններին տրամադրված միջոցների,

գ. այն արժեթղթերի, որոնք «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հրապարակային առաջարկի առարկա են կամ թույլատրվել են կարգավորվող շուկայում (այդ թվում՝ ֆոնդային բորսայում) առևտրին, կամ

դ. այն օտարերկրյա արժեթղթերի, որոնք Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված օտարերկրյա պետությունների ցանկում ընգրկված որևէ պետությունում թույլատրված են հրապարակային առաջարկին (վաճառքին) և (կամ) առևտրին՝ տվյալ պետության արժեթղթերի օրենսդրությամբ սահմանված կարգով, կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկաների ցանկում ընդգրկված որևէ կարգավորվող շուկայում թույլատրված են առևտրին՝ տվյալ կարգավորվող շուկայի կանոններով սահմանված կարգով,

11) հիմնական կապիտալի հաշվարկից նվազեցվող՝ ներդրումային ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող ֆինանսական ակտիվների վերաչափումից ստացված օգուտը,

12) աշխատակիցներին տրված առհաշիվ գումարներ, կանխավճարներ և ցանկացած այլ գումարներ, որոնք գերազանցում են ընդհանուր կապիտալի 2 տոկոսը,

13) ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռքբերման համար կատարված կանխավճարներ կամ առհաշիվ տրված գումարներ այլ անձանց, որոնք գերազանցում են ընդհանուր կապիտալի 2 տոկոսը,

14) 30 օրից ավելի ժամկետանց, վերանայված պայմաններով կամ վերաֆինանսավորված ստացվելիք ցանկացած գումարները, որոնք չեն հանդիսանում ներդրումային ծառայությունների շրջանակում մատուցած ծառայությունների պայմանագրերից բխող դեբիտորական պարտավորություններ: Վերանայված պայմաններով ակտիվներն այն ակտիվներն են, որոնք պայմանագրի համաձայն վերաֆինանսավորվել են, կամ որոնց մարման ժամկետները կամ այլ պայմանները վերանայվել (վերաձևակերպվել) են, գումարները փոխանցվել են ակտիվային (վարկային) նոր գործիքներին, կամ պայմանները վերանայվել են այլ կերպ: Վերաֆինանսավորված ակտիվներն այն ակտիվներն են, որոնց մարումն իրականացվել է նոր ստանձնած պարտավորությունների աղբյուրների հաշվին:

9. Լրացուցիչ կապիտալը բաղկացած է հիմնական կապիտալի հաշվարկից չնվազեցվող ակտիվների վերագնահատման (վերաչափման) պահուստներից:

10. Սույն կանոնակարգի իմաստով՝ ներդրումային ծառայությունների մատուցման համար օգտագործվող նյութական ակտիվներ են այն ակտիվները, որոնք ներդրու-

մային ընկերության կողմից օգտագործվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ներդրումային ծառայություններ մատուցելու համար: Ընդ որում, ներդրումային ծառայությունների համար օգտագործվող սեփական շենքեր և շինություններ (անշարժ գույք) են համարվում այն նյութական ակտիվները, որտեղ ներդրումային ընկերությունները և (կամ) նրա մասնաճյուղերը մատուցում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ներդրումային ծառայություններ, ինչպես նաև այն շենքերը և շինությունները, որոնք զբաղեցված են ներդրումային ընկերությունների ներկայացուցչությունների կողմից:

11. Ներդրումային ընկերությունը պետք է յուրաքանչյուր ամսվա միջին օրական հաշվարկով (ամսվա ընթացքում ընդհանուր կապիտալի օրական մեծությունների հանրագումարը հարաբերած ամսվա տվյալ օրերի թվին) ապահովի ընդհանուր կապիտալի նվազագույն մեծությունը:

ԳԼՈՒԽ 4. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՉԱՓԸ, ՈՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆ ԿԱՐՈՂ Է ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉՎԵԼ

12. Ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը, որպես պատասխանատվության միջոց, կարող է կիրառվել տնտեսական նորմատիվների սահմանված չափերից 10 և ավելի տոկոս նվազման դեպքում՝ յուրաքանչյուր նորմատիվի համար:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*«Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում փոփոխություններ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ը հաստատելու մասին» թիվ 347-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 14) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1. Ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգ 14-ի հավելված 1-ի 2-րդ կետի «դ» և «ե» ենթակետերը:

1.2. Ուժը կորցրած ճանաչել Կանոնակարգ 14-ի հավելված 1-ի 3-րդ կետի «դ» և «ե» ենթակետերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի ապրիլի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
18 փետրվարի 2008 թ., N 47-Ն

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. փետրվարի 12-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 11.03.08 թ. (ՀՀԳՏ N10 (284), 1.04.08):

*«Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Հաստատել բանկերի հաշվետվությունների ձևերը՝ համաձայն հավելված 2-ի (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի թիվ 126-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հուլիսի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
27 փետրվարի 2008 թ., N 50-Ն

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 3

ԲԱՆԿԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

ԳԼՈՒԽ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի (այսուհետև՝ բանկեր) կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) ներկայացվող հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգն ու ժամկետները:

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. փետրվարի 26-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 11.03.08 թ. (ՀՀԳՏ N10 (284), 1.04.08):

ԳԼՈՒԽ II. ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Բանկերը Կենտրոնական բանկ են ներկայացնում հաշվետվությունների ներքոհիշյալ ձևերը՝ նշված պարբերականությամբ:

	Հաշվետվության անվանումը	Հաշվետվության համարը	Ներկայացման հաճախականությունը
1	*2*	*3*	*4*
1	Հաշվեկշիռ	1	ամսական, տարեկան
2	Հաշվեկշիռ	2	շաբաթական
3	Հաշվետվություն Ն1, Ն2^1, Ն2^2, Ն3^1, Ն3^2 ,Ն4^1, Ն4^2 և ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվների վերաբերյալ	3	ամսական
4	Հաշվետվություն ՀՀ կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորման նորմատիվի վերաբերյալ	4	14-օրյա
5	Հաշվետվություն բանկի եկամուտների և ծախսերի վերաբերյալ	5	ամսական, եռամսյակային, տարեկան
6	Հաշվետվություն վարկային ներդրումների, դեբիտորական պարտքերի և ինվեստիցիոն արժեթղթերի վերաբերյալ	6	ամսական
7	Հաշվետվություն արտարժութային դիրքերի վերաբերյալ	7	շաբաթական
8	Հաշվետվություն ներգրավված և տեղաբաշխված միջոցների ծախսատարության և եկամտաբերության վերաբերյալ	8	ամսական
9	Հաշվետվություն ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետայնությունների վերաբերյալ	9	ամսական
10	Հաշվետվություն կանոնադրական կապիտալի ձևավորման վերաբերյալ	10	յուրաքանչյուր փոփոխության դեպքում
11	Հաշվետվություն նորմատիվային ընդհանուր կապիտալի փոփոխության վերաբերյալ	11	ամսական, եռամսյակային, տարեկան
12	Հաշվետվություն դրամարկղային շրջանառության վերաբերյալ (ամփոփ և ըստ մասնաճյուղերի)	13	ամսական
13	Հաշվետվություն Ն3^1 և Ն3^2 նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող ցուցանիշների հաշվարկի վերաբերյալ	14	ամսական
14	Հաշվետվություն «խոշոր» պարտատերերի վերաբերյալ	15	ամսական
15	Հաշվետվություն արտասահմանյան և հայրենական բանկերի հետ «լորո» և «նոստրո» հաշիվների վերաբերյալ	16	ամսական
16	Հաշվետվություն նախորդող շաբաթվա ընթացքում ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջին տոկոսադրույքների վերաբերյալ	17	շաբաթական
17	Հաշվետվություն բանկի և ոչ ռեզիդենտների միջև իրականացվող գործառնությունների վերաբերյալ	18	եռամսյակային
18	Հաշվետվություն արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների վերաբերյալ	19	օրական
19	Հաշվետվություն հաճախորդների, նրանց հաշիվների, կատարված փոխանցումների, մատուցած վճարային ծառայությունների և վճարային գործիքների վերաբերյալ	20	ամսական
20	Հաշվետվություն արժեթղթերի թողարկման արդյունքների վերաբերյալ	21	յուրաքանչյուր թողարկման համար
21	Հաշվետվություն բանկի կողմից թողարկված արժեթղթերի և կատարված ներդրումների վերաբերյալ	22	տարեկան
22	Հաշվետվություն ֆիզիկական անձանց անունով բանկերի միջոցով արտերկրից մուտք եղած և արտերկիր ուղարկված գումարների վերաբերյալ	24	ամսական
23	Հաշվետվություն բանկի աշխատակազմի վերաբերյալ	25	եռամսյակային
24	Հաշվետվություն կատարված զեղծարարությունների, զեղծարարության փորձերի վերաբերյալ	28	զեղծարարության կամ զեղծարարության փորձի դեպքում
25	Հաշվետվություն բանկի մասնաճյուղերի վերաբերյալ	29	եռամսյակային
26	Հաշվետվություն շահագործման հանձնված և շահագործումից հանված տերմինալների վերաբերյալ	30	ամսական (եթե տվյալ ամսվա ընթացքում առկա են փոփոխություններ)
27	Հաշվետվություն տրամադրված քարտերի, դրանց տեսակների, քարտային գործառնությունների և սպասարկման միջոցների վերաբերյալ	31	ամսական

3. Բանկերը սույն Կանոնակարգի կետ 2-ով սահմանված հաշվետվությունները, ծանուցումները, կից տեղեկանքները ներկայացնում են բացառապես էլեկտրոնային փոստով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, Կենտրոնական բանկի կողմից տրամադրվող ֆայլերին համապատասխան: Սի-Բի-էյ-նեթ համակարգի խափանման դեպքում հաշվետվությունները ներկայացվում են մագնիսական կրիչներով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն: Հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի հաշվետվությունների ընդունման և ամփոփման համար պատասխանատու ստորաբաժանման կողմից բանկերին ուղարկված պաշտպանված ֆայլերով («Մայքրոսոֆթ օֆիս 97» կամ դրա կատարելագործված տարբերակով), որոնց փոփոխումն արգելվում է: Այլ կերպ ներկայացված հաշվետվությունը համարվում է չընդունված:

Հաշվետվություններում նշվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթվերը (օրինակ՝ շաբաթական հաշվետվություններում նշվում է կիրակի օրվա ամսաթիվը, իսկ ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններում՝ ամսվա վերջին օրվա ամսաթիվը): Ամսաթիվը նշվում է հետևյալ ֆորմատով՝ օր. ամիս. տարի (օրինակ՝ 31/01/2003): Ընդ որում, հաշվետվությունները կազմելիս մեկ տարին պետք է հասկանալ 365 կամ 366 օր, այսինքն՝ օրացուցային օրերի քանակը (եթե կոնկրետ հաշվետվության մեկնաբանությունները հստակ չեն սահմանում տվյալ հաշվետվության իմաստով մեկ տարվա օրերի քանակը):

Հաշվետվությունները լրացնելիս ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների անունները, վերջիններիս վերաբերող այլ տեղեկատվությունը պետք է ներկայացնել առանց չակերտների, միայն հայերեն տառերով (տառատեսակ՝ Թայմզ Արմենիան): Բացառություն են կազմում բանկերի Սվիֆտ կոդերը և Տելեքս համարները:


Վարկերի ու դեբիտորական պարտքերի (հետհաշվեկշռային պարտավորությունների) և ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստները սույն կանոնակարգով սահմանված հաշվետվություններում արտացոլվում են (իսկ հաշվետվություններում ներկայացվող հիմնական տնտեսական նորմատիվների և չբաշխված շահույթի հաշվարկում ընդգրկվում են) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1998 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 188 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման»* կարգերին համապատասխան հաշվարկված գումարների չափով:

Բանկերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, ինչպես նաև տեղեկությունները, պետք է լինեն արժանահավատ և ամբողջական, բավարարեն «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի «է» կետով սահմանված պահանջները:

Սույն կետով սահմանված պահանջներին համապատասխան՝ Կենտրոնական բանկի կողմից ընդունված հաշվետվությունները, ծանուցումները, կից տեղեկանքները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածով սահմանված գրավոր ապացույցներ:

4. Հաշվետվությունները մագնիսական կրիչներով կամ էլեկտրոնային փոստով ներկայացնելիս ֆայլերը կոդավորվում են:

Ֆայլի կոդն ունի հետևյալ կառուցվածքը.



* *Պաշտոնական հրապարակման մեջ որոշման վերնագրում սպրդել է տեխնիկական վրիպակ:*

Կոդավորման նշված կարգի պահպանումը պարտադիր է: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող ֆայլերը, բացի տվյալ օրը ներկայացվող հաշվետվության ձևերից, այլ տեղեկատվություն չպետք է պարունակեն:

5. Թիվ 1 և 2 հաշվետվությունները լրացվում են Կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի օգոստոսի 6-ի թիվ 258-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի օգոստոսի 27-ի թիվ 629-Ն հրամանով համատեղ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշիվների պլանին» և «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի կիրառման հրահանգին» համապատասխան՝ հազար դրամներով, առանց տասնորդական միավորների:

«I խմբի արտարժույթ» և «II խմբի արտարժույթ» սյունակներում արտարժույթի խմբավորումն իրականացվում է համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի (այսուհետև՝ Կանոնակարգ 2): «I խմբի արտարժույթ», «II խմբի արտարժույթ» և «Այդ թվում՝ ՌԴ ռուբլի» սյունակներում լրացվում են Կանոնակարգ 2-ով սահմանված արտարժութային դիրքի հաշվարկի մեջ մասնակցող բանկի արտարժույթով ակտիվների և պարտավորությունների մնացորդները, ինչպես նաև արտարժութային ռիսկ պարունակող ակտիվների և պարտավորությունների մնացորդները: «Այդ թվում՝ ՌԴ ռուբլի» սյունակում լրացվում են «II խմբի արտարժույթ» սյունակում ընդգրկված ռուսական ռուբլով ակտիվների և պարտավորությունների մնացորդները: Հետհաշվեկշռային հաշիվները լրացվում են հազար դրամներով: Հաշվետվությունները պետք է պարունակեն հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա (եթե բանկն աշխատել է նաև շաբաթ, կիրակի կամ օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրը, ապա՝ այդ օրվա) դրությամբ տվյալները: Բանկի կողմից ինքնուրույն բացված հաշիվները Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում չեն արտացոլվում որպես առանձին հաշիվ:

6. Թիվ 3 հաշվետվությունը բաղկացած է 17 էջից:

1-ին էջում ներկայացվում և ամփոփվում են հիմնական տնտեսական նորմատիվների (բացառությամբ՝ պարտադիր պահուստավորման նորմատիվի) հաշվարկին մասնակցող միջին ամսական ցուցանիշներն ու տնտեսական նորմատիվների փաստացի մեծությունները՝ հաշվարկված համաձայն Կանոնակարգ 2-ի: 1-ից 9-րդ սյունակներում, բացառությամբ 7-րդ սյունակի, ամփոփվում են, համապատասխանաբար, ընդհանուր կապիտալի, ընդհանուր ակտիվների, վարկային ռիսկի, արտարժութային ռիսկի, տոկոսադրույքի ռիսկի, կապիտալի գործիքների գնային ռիսկի, բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների նորմատիվային միջին ամսական մեծությունները, իսկ 7-րդ սյունակում՝ գործառնական ռիսկի նորմատիվային մեծությունը: 3-րդ սյունակի վարկային ռիսկի հաշվարկն իրականացվում է 3, 4, 5, 6, 7 էջերի համաձայն: 10-րդ և 12-րդ սյունակների տվյալները վերցվում են սույն կանոնակարգի ձև թիվ 14 «Հաշվետվություն $Ն3^1$ և $Ն3^2$ նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող ցուցանիշների հաշվարկի վերաբերյալ» հաշվետվությունից: Եթե բանկը թույլ չի տվել մեկ փոխառուի և բանկի հետ կապված մեկ անձի գծով բանկի ռիսկի առավելագույն չափի նորմատիվների խախտում, ապա 10-րդ և 11-րդ սյունակներում ներկայացվում են, համապատասխանաբար, մեկ փոխառուի և բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի ամենամեծ գումարները: Եթե նորմատիվները խախտվել են, ապա 10-րդ և 11-րդ սյունակների 1-ին տողում ցույց է տրվում ամենամեծ խախտումն առաջացնող գումարը, իսկ հաջորդ տողերում՝ խախտում առաջացրած բոլոր այլ գումարները՝ ըստ նվազման հաջորդականության: 12-րդ և 13-րդ սյունակներում, համապատասխանաբար, լրացվում են խոշոր փոխառուների և բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն գումարները: Բանկը հաշվետվությանը կից ներկայացնում է տեղեկանք՝ խախտում առաջացրած բոլոր գումարների տրամադրման պահի դրությամբ խախտման փաստի առկայության մասին:

2-րդ էջում ներկայացվում են ընդհանուր կապիտալի ու նրա տարրերի հաշվեկշռային և նորմատիվային մեծությունները, ինչպես նաև նորմատիվային մեծությունների հաշվարկի համար Կանոնակարգ 2-ով նախատեսված անհրաժեշտ պակասեցումներն՝ ըստ ամսվա բոլոր օրերի: Նորմատիվային լրացուցիչ կապիտալի հաշվարկում չընդգրկվող գումարներն այն գումարներն են, որոնք հաշվառվում են որպես կապիտալ (ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի օգոստոսի 6-ի թիվ 258-Ն

որոշմամբ և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի օգոստոսի 27-ի թիվ 629-Ն հրամանով համատեղ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանի» «5000» կարգ), սակայն համաձայն Կանոնակարգ 2-ի՝ չեն մտնում նորմատիվային լրացուցիչ կապիտալի հաշվարկի մեջ: 3-րդ հաշվետվության 2-րդ էջում ընդգրկվող հաշիվները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Ընդհանուր կապիտալի և նրա տարրերի հաշվարկն ըստ օրերի

Աղյուսակ 1

Հ/հ	Սյունակ	Ցուցանիշ	Ներառվող հաշիվները
1	1	Հաշվեկշռային հիմնական կապիտալ	501 + 502 + 503 + 504 + 511 + 531 + 532
2	2	Հաշվեկշռային լրացուցիչ կապիտալ	512
3	4	Նորմատիվային կապիտալի հաշվարկի համար անհրաժեշտ՝ հիմնական կապիտալից պակասեցվող գումարներ	• 1225 + 1226 + 1244 + 1245 + 1323 + 1324 + 1328 + 1333 + 1334 + 1338 + 1341 + 1343 + 1361 + 1363 + 1381 + 1402 + 1403 + 1404 + 1405 + 1525 + 1526 + 1545 + 1546 + 1612 + 1615 + 1631 + 1632 + 1633 + 1635 + 1651 + 1653 + 1661 + 1681 + 1683 + 1693 + 1913 + 1914 + 2021 + 2022 + 2023 + 2024 + 2025 + 2041 + 2042 + 2043 + 2044 + 2045 + (1701 + 1702 + 2071) (սույն ենթակետում նշված հաշիվների մասով) հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ում նկարագրված երկարաժամկետ ստորադաս փոխատվության պահանջները • 521 (բացարձակ մեծությամբ) • 2221 + 2312 + 2313+ 2319 + 2322 + 2323 + 2329 + 2517 + 2712 (ընդգծված հաշիվները հաշվարկում ներառվում են մասնակիորեն) (2312, 2313, 2319 հաշիվների մասով) + 2722 (2517 հաշիվի մասով) հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի 28.1 կետի պահանջները • 1221 + 1222 + 1223 + 1241 +1242 + 1243 + 1521 + 1522 + 1523 + 1541 + 1542 + 1543 + 211 + 212 + (1701 + 1702 + 2071 + 2151) (սույն ենթակետում նշված հաշիվների մասով) հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի 28.1 կետի «դ» ենթակետի պահանջները • (241 - 2417) + (242 - 2427 - 2429) + 2211 + (251 - 2517) + 2711 + 2721 + 2611 + 2911 + 2912 հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի 28.1 կետի «ե» ենթակետի պահանջները • (241 - 2417) + (242 - 2427 - 2429) + 2211 + 2611 + 2711 - ((501 + 502 + 503 + 504 + 511 + 531 + 532) * 25%), որը բավարարում է Կանոնակարգ 2-ի 28.1 կետի «զ» ենթակետի պահանջները • 2231 + 2429, որը բավարարում է Կանոնակարգ 2-ի 28.1 կետի «է» ենթակետի պահանջները
4	5	Նորմատիվային լրացուցիչ կապիտալի հաշվարկում չընդգրկվող գումարներ	• (5121 + 5122) - (501 + 502 + 503 + 504 + 511 + 531 + 532) * 25% - ((241 - 2417) + 2211 - (242 - 2427 - 2429) - 2711, եթե ((501 + 502 + 503 + 504 + 511 + 531 + 532) * 25% - ((241 - 2417) + 2211 - (242 - 2427 - 2429) - 2711)) ≥ 0 (բանկի սեփականություն հանդիսացող և բանկային գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների մասով) • (5121 + 5122), եթե ((501 + 502 + 503 + 504 + 511 + 531 + 532) * 25% - ((241 - 2417) + 2211 - (242 - 2427 - 2429) - 2711)) < 0 (բանկի սեփականություն հանդիսացող և բանկային գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների մասով) • (5121 + 5122) (բանկային գործունեության համար չօգտագործվող նյութական ակտիվների մասով) • 5130 (բացառությամբ համակարգչային ծրագրերի վերագնահատման պահուստի)

3-րդ էջում ներկայացվում են բանկի ընդհանուր կապիտալի համարժեքության Ն1 նորմատիվի վարկային ռիսկի հաշվարկում մասնակցող ակտիվներն՝ ըստ ռիսկի կշիռների, և դրանց գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստների մեծությունները: Ընդ որում, 3-րդ էջում չեն ներկայացվում այն ակտիվները, որոնց վրա տարածվում է վարկային ռիսկի զսպման մեխանիզմը (այսուհետ՝ ՎՌԶՄ): 3-րդ էջի 1-ին, 3-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ և 13-րդ սյունակներում լրացվում են ըստ ռիսկի կշիռների խմբավորված ակտիվների հանրագումարները, իսկ 2-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ և 14-րդ սյունակներում՝ համապատասխան ռիսկի կշիռ ունեցող ակտիվների հնարավոր կորուստների պահուստների մեծությունները: 15-րդ սյունակում ամփոփվում է այն ակտիվների գծով վարկային ռիսկը, որոնց վրա չի տարածվում ՎՌԶՄ-ն: 4-րդ և 5-րդ էջերում ներկայացվում են միայն այն ակտիվները, որոնց վրա, համաձայն Կանոնակարգ 2-ի, տարածվում են ՎՌԶՄ-ները: 3-րդ հաշվետվության 3-րդ էջում ընդգրկվող հաշիվները ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Ակտիվներ (որոնց վրա չեն տարածվում ՎՌՉՄ-ները) ըստ ռիսկերի կշիռների

Աղյուսակ 2

Հ/հ	Սյունակ	Ցուցանիշ	Ներառվող հաշիվները
1	1	Ռիսկի 0% կշիռ	• 1011 + 1013 + 1015 հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.1 կետի պահանջները • 1111 հաշվի այն գումարը, որը բավարարում է Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.2 կետի պահանջները • 102 + 1401 + 1801 + 1842 + 1844 + 1847 (Կանոնակարգ 2-ի 6.9 կետի պահանջներին չհամապատասխանող մասով) • 120 + 121 + 1251 + 1252 + 1253 + 1254 + 1255 + 1256 + 1257 + 1259 + 150 + 151 + 200 + 201 հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.4 կետի պահանջները • 1931 + 1932 + 1933 ենթաբաժնի հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են «Կանոնակարգ 2»-ի հավելված 3-ի 6.5 կետի պահանջները • 1033 + 1034 + 1036 + 1037 + 1043 + 1044 + 1045 + 124 + 1322 + 1324 + 1326 + 1327 + 1328 + 1329 + 1332 + 1334 + 1336 + 1337 + 1338 + 1339 + 1343 + 1344 + 1347 + 1348 + 1363 + 1364 + 1367 + 1368 + 138 + 1392 + 1394 + 1403 + 1405 + 154 + 1683 + 1684 + 1687 + 1688 + 1691 + 1692 + 1693 + 1694 + 1863 + 1883 + 1884 + 1898 + 1914 + 1924 + 204 + 211 + 212 + 2919 այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.6 կետի պահանջները • 103 + 104 + 122 + 123 + 124 + 1258 + 1259 + 126 + 127 + 132 + 133 + 134 + 136 + 138 + 139 + 1402 + 1403 + 1404 + 1405 + 152 + 153 + 154 + 155 + 16 + 182 + 183 + 185 + 186 + 187 + 188 + 189 + 190 + 191 + 192 + 202 + 203 + 204 + 205 + 206 + 211 + 212 + 28 + 2919 ենթաբաժինների հաշիվների և 2914 + 2915 հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.7 կետերի պահանջները • 141 + 142 + 143 + 144 + 145 հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.8 կետի պահանջները • 180 + 184 հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.9 կետի պահանջները • 1033 + 1034 + 1035 + 1036 + 1037 + 123 + 1245 + 1246 + 1247 + 1258 + 1259 + 1268 + 127 + 1322 + 1324 + 1326 + 1343 + 1344 + 1347 + 1348 + 1381 + 1383 + 1392 + 1394 + 1403 + 1415 + 1416 + 1445 + 1446 (Կանոնակարգ 2-ի 6.8 կետի պահանջներին չհամապատասխանող մասով) + 153 + 1545 + 1546 + 1547 + 1558 + 1829 + 1830 + 1839 + 1840 + 1863 + 1883 + 1894 + 1898 + 1899 + 190 + 191 + 1924 + 193 + 203 + 204 + 2068 + 2069 + 2070 + 2814 + 2915 + 2919 հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.15 կետի պահանջները 0% ռիսկի կշիռ ստանալու վերաբերյալ
2	2	Ակտիվների հնարավոր կորստի պահուստ	• 1701 + 1951 + 1952 + 2071 + 2151 հաշիվների այն մնացորդները, որոնք ձևավորվել են 3-րդ էջի 1-ին սյունակում ընդգրկված հաշիվների գծով (ընդհանուր պահուստի մասով)
3	3	Ռիսկի 10% կշիռ	• 120 + 121 + 1251 + 1252 + 1253 + 1254 + 1255 + 1256 + 1257 + 1259 + 150 + 151 + 200 + 201 հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.10 կետի պահանջները • 103 + 104 + 122 + 124 + 126 + 127 + 132 + 133 + 134 + 136 + 138 + 139 + 140 + 152 + 154 + 155 + 16 + 182 + 183 + 185 + 186 + 187 + 188 + 189 + 190 + 191 + 192 + 202 + 204 + 205 + 206 + 211 + 212 + 28 ենթաբաժինների հաշիվների և 2914 + 2915 + 2919 հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.11 կետի պահանջները
4	4	Ակտիվների հնարավոր կորստի պահուստ	• 1701 + 1951 + 1952 + 2071 + 2151 հաշիվների այն մնացորդները, որոնք ձևավորվել են 3-րդ էջի 3-րդ սյունակում ընդգրկված հաշիվների գծով (ընդհանուր պահուստի մասով)
5	5	Ռիսկի 20% կշիռ	• 121 + 1251 + 1253 + 1255 + 1257 + 1259 + 151 + 201 (փոխանցելի ՀՀ պետական մուրհակների մասով) հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.12 կետի պահանջները • 1012 + 1015 + 1121 հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.13 կետի պահանջները • 1031 + 1032 + 1041 + 1042 հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են «Կանոնակարգ 2»-ի հավելված 3-ի 6.14 կետի պահանջները • 1033 + 1034 + 1035 + 1036 + 1037 + 123 + 1245 + 1246 + 1247 + 1258 + 1259 + 1268 + 127 + 1322 + 1324 + 1326 + 1343 + 1344 + 1347 + 1348 + 1381 + 1383 + 1392 + 1394 + 1403 + 1415 + 1416 + 1445 + 1446 (Կանոնակարգ 2-ի 6.8 կետի պահանջներին չհամապատասխանող մասով) + 153 + 1545 + 1546 + 1547 + 1558 + 1829 + 1830 + 1839 + 1840 + 1863 + 1883 + 1894 + 1898 + 1899 + 190 + 191 + 1924 + 193 + 203 + 204 + 2068 + 2069 + 2070 + 2814 + 2915 + 2919 հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.15 կետի պահանջները 20% ռիսկի կշիռ ստանալու վերաբերյալ • 123 + 1258 + 1259 + 153 + 1863 + 1886 + 1894 + 1898 + 1899 + 190 + 191 + 1924 + 193 + 203 + 2068 + 2069 + 2070 + 2814 + 2919 հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.16 կետի պահանջները 20% ռիսկի կշիռ ստանալու վերաբերյալ

			• 1033 + 1034 + 1035 + 1036 + 1037 +1043 + 1044 + 1045 + 124 + 1258 + 1259 + 1268 + 127 + 1322 + 1324 + 1326 + 1332 + 1334 + 1336 + 1343 + 1344 + 1347 + 1348 + 1381 + 1383 + 1392 + 1394 + 1403 + 1415 + 1416 + 1445 + 1446 (Կանոնակարգ 2-ի 6.8 կետի պահանջներին չհամապատասխանող մասով) + 154 + 1558 + (1687 + 1688 + 1691 + 1692) (բանկերի մասով) + 1693 + 1694 + 1803 + 1849 (Կանոնակարգ 2-ի 6.9 կետի պահանջներին չհամապատասխանող մասով) (1829 + 1830 + 1839 + 1840 + 1863) (բանկերի մասով) + 1873 + 1878 + 1883 + 1894 + 1898 + 1899 + 190 + 1914 + 1924 + 204 + (2068 + 2069 + 2070) (բանկերի մասով) + 2113 + 2116 + 2119 + 2123 +2126 + 2130 + 2814 + 2915 + 2919 հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.17, 6.18 կետերի պահանջները 20% ռիսկի կշիռ ստանալու վերաբերյալ • 122 + 1258 + 1259 + 1262 + 1263 + 1264 + 1265 + 1267 + 127 + 1361 + 1362 + 1365 + 1366 + 1404 + 1417 + 1418 + 1421 + 1422 + 1423 + 1424 + 1448 + 1451 + 1452 (Կանոնակարգ 2-ի 6.8 կետի պահանջներին չհամապատասխանող մասով) + 152 + 1553 + 1554 + 1555 + 1557 + 1631 + 1632 + 1633 + 1634 + 1637 + 1638 + 1639 + 1640 + 1643 + 1644 + 1645 + 1646 + 1681 + 1682 + 1685 + 1686 + 1689 + 1690 + 1804 + 1806 + 1845 + 1846 + 1847 + 1848 (Կանոնակարգ 2-ի 6.9 կետի պահանջներին չհամապատասխանող մասով)1823 + 1824 + 1825 + 1826 + 1833 + 1834 + 1835 + 1836 + 1853 + 1855 + 1856 + 1857 + 1861 + 1872 + 1875 + 1879 + 1882 + 1885 + 1894 + 1896 + 1897 + 1899 + 190 + 1913 + 1923 + 202 + 2054 + 2055 + 2056 + 2057 + 2058 + 2059 + 2060 + 2061 + 2065 + 2066 + 2067 + 2110 + 2112 + 2117 + 2122 + 2127 + 2129 + 2812 + 2813 + 2815 + 2919 հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.19 կետի պահանջները 20% ռիսկի կշիռ ստանալու վերաբերյալ • 124 + 1258 + 1259 + 1268 + 127 + 1327 + 1328 + 1329 + 1337 + 1338 + 1339 + 1363 + 1364 + 1367 + 1368 + 1405 + 1419 + 1420 + 1425 + 1426 + 1449 + 1450 + 1453 + 1454 (Կանոնակարգ 2-ի 6.8 կետի պահանջներին չհամապատասխանող մասով) + 154 + 1558 + 1635 + 1636 + 1641 + 1642 + 1647 + 1648 + 1683 + 1684 + 1687 + 1688 + 1691 + 1692 + 1805 + 1807 + 1849 (Կանոնակարգ 2-ի 6.9 կետի պահանջներին չհամապատասխանող մասով) 1829 + 1830 + 1839 + 1840 + 1863 + 1874 + 1876 + 1880 + 1884 + 1886 + 1894 + 1898 + 1899 + 190 + 1914 + 1924 + 204 + 2068 + 2069 + 2070 + 2114 + 2118 + 2119 + 2124 + 2128 + 2130 + 2814 + 2919 հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.20, 6.21 կետերի պահանջները 20% ռիսկի կշիռ ստանալու վերաբերյալ
6	6	Ակտիվների հնարավոր կորստի պահուստ	• 1701 + 1951 + 1952 + 2071 + 2151 հաշիվների այն մնացորդները, որոնք ձևավորվել են 3-րդ էջի 5-րդ սյունակում ընդգրկված հաշիվների գծով
7	7	Ռիսկի 50 % կշիռ	• 1033 + 1034 + 1035 + 1036 + 1037 + 123 + 1245 + 1246 + 1247 + 1258 + 1259 + 1268 + 127 + 1322 + 1324 + 1326 + 1343 + 1344 + 1347 + 1348 + 1381 + 1383 + 1392 + 1394 + 1403 + 1415 + 1416 + 1445 + 1446 (Կանոնակարգ 2-ի 6.8 կետի պահանջներին չհամապատասխանող մասով) + 153 + 1545 + 1546 + 1547 + 1558 + 1829 + 1830 + 1839 + 1840 + 1863 + 1883 + 1894 + 1898 + 1899 + 190 + 191 + 1924 + 193 + 203 + 204 + 2068 + 2069 + 2070 + 2814 + 2915 + 2919 հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.15 կետի պահանջները 50% ռիսկի կշիռ ստանալու վերաբերյալ • 123 + 1258 + 1259 + 153 + 1863 + 1886 + 1894 + 1898 + 1899 + 190 + 191 + 1924 + 193 + 203 + 2068 + 2069 + 2070 + 2814 + 2919 հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.16 կետի պահանջները 50% ռիսկի կշիռ ստանալու վերաբերյալ • 1033 + 1034 + 1035 + 1036 + 1037 +1043 + 1044 + 1045 + 124 + 1258 + 1259 + 1268 + 127 + 1322 + 1324 + 1326 + 1332 + 1334 + 1336 + 1343 + 1344 + 1347 + 1348 + 1381 + 1383 + 1392 + 1394 + 1403 + 1415 + 1416 + 1445 + 1446 (Կանոնակարգ 2-ի 6.8 կետի պահանջներին չհամապատասխանող մասով) + 154 + 1558 + (1687 + 1688 + 1691 + 1692) (բանկերի մասով) + 1693 + 1694 + 1803 + 1849 (Կանոնակարգ 2-ի 6.9 կետի պահանջներին չհամապատասխանող մասով) (1829 + 1830 + 1839 + 1840 + 1863) (բանկերի մասով) + 1873 + 1878 + 1883 + 1894 + 1898 + 1899 + 190 + 1914 + 1924 + 204 + (2068 + 2069 + 2070) (բանկերի մասով) + 2113 + 2116 + 2119 + 2123 +2126 + 2130 + 2814 + 2915 + 2919 հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.17, 6.18 կետերի պահանջները 50% ռիսկի կշիռ ստանալու վերաբերյալ • 122 + 1258 + 1259 + 1262 + 1263 + 1264 + 1265 + 1267 + 127 + 1361 + 1362 + 1365 + 1366 + 1404 + 1417 + 1418 + 1421 + 1422 + 1423 + 1424 + 1448 + 1451 + 1452 (Կանոնակարգ 2-ի 6.8 կետի պահանջներին չհամապատասխանող մասով) + 152 + 1553 + 1554 + 1555 + 1557 + 1631 + 1632 + 1633 + 1634 + 1637 + 1638 + 1639 + 1640 + 1643 + 1644 + 1645 + 1646 + 1681 + 1682 + 1685 + 1686 + 1689 + 1690 + 1804 + 1806 + 1845 + 1846 + 1847 + 1848 (Կանոնակարգ 2-ի 6.9 կետի պահանջներին չհամապատասխանող մասով) 1823 + 1824 + 1825 + 1826 + 1833 + 1834 + 1835 + 1836 + 1853 + 1855 + 1856 + 1857 + 1861 + 1872 + 1875 + 1879 + 1882 + 1885 + 1894 + 1896 + 1897 + 1899 + 190 + 1913 + 1923 + 202 + 2054 + 2055 + 2056 + 2057 + 2058 + 2059 + 2060 + 2061 + 2065 + 2066 + 2067 + 2110 + 2112 + 2117 + 2122 + 2127 + 2129 + 2812 + 2813 + 2815 + 2919 հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.19 կետի պահանջները 50% ռիսկի կշիռ ստանալու վերաբերյալ

			• 124 + 1258 + 1259 + 1268 + 127 + 1327 + 1328 + 1329 + 1337 + 1338 + 1339 + 1363 + 1364 + 1367 + 1368 + 1405 + 1419 + 1420 + 1425 + 1426 + 1449 + 1450 + 1453 + 1454 (Կանոնակարգ 2-ի 6.8 կետի պահանջներին չհամապատասխանող մասով) + 154 + 1558 + 1635 + 1636 + 1641 + 1642 + 1647 + 1648 + 1683 + 1684 + 1687 + 1688 + 1691 + 1692 + 1805 + 1807 + 1849 (Կանոնակարգ 2-ի 6.9 կետի պահանջներին չհամապատասխանող մասով) 1829 + 1830 + 1839 + 1840 + 1863 + 1874 + 1876 + 1880 + 1884 + 1886 + 1894 + 1898 + 1899 + 190 + 1914 + 1924 + 204 + 2068 + 2069 + 2070 + 2114 + 2118 + 2119 + 2124 + 2128 + 2130 + 2814 + 2919 հաշիվների այն մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.20, 6.21 կետերի պահանջները 50% ռիսկի կշիռ ստանալու վերաբերյալ • 1611 + 1613 + 1614 + 1616 + 1617 + 1619 + 1620 + 1622 + 1623 + 1625 + 1626 + 1628 + 167 + (168 + 169 - 1693 - 1694) հաշիվների մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.22 կետի պահանջները • 122 + 1258 + 1259 + 1261 + 127 + 1321 + 1323 + 1325 + 1331 +1333 + 1335 + 1341 + 1342 + 1345 + 1346 + 1391 + 1393 + 1402 + 1413 + 1414 + 1443 + 1444 (Կանոնակարգ 2-ի 6.8 կետի պահանջներին չհամապատասխանող մասով) + 152 + 1551 + 1693 + 1694 + 1802 + 1843 + 1844 (Կանոնակարգ 2-ի 6.9 կետի պահանջներին չհամապատասխանող մասով) + 1821 + 1822 + 1831 + 1832 + 1851 + 1871 + 1877 + 1881 + 1894 + 1895 + 190 + 1913 + 1923 + 202 + 2051 + 2052 + 2053 + 2111 + 2115 + 2121 + 2125 + 2811 + 2914 + 2919 հաշիվների մնացորդները, որոնք բավարարում են Կանոնակարգ 2-ի հավելված 3-ի 6.23 կետի պահանջները
2-րդ էջի 2.1, 2.2, 2.3 և 2.4 տողերում ընդգրկվում են տվյալ մասնաճյուղի կողմից ստացված դրամական մուտքերը համապատասխանաբար ՀՀ կենտրոնական բանկից, ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերից, հաճախորդներից, ինչպես նաև 2.5 տողում՝ գլխամասից և տվյալ բանկի այլ մասնաճյուղերից ստացված մուտքերը: Աղյուսակի 2.6 տողում արտացոլվում են բոլոր այն մուտքերը, որոնք չեն ներառվել 2-րդ էջի վերը նշված տողերում: Նույն էջի 3.1, 3.2, 3.3, 3.4 և 3.5 տողերում ընդգրկվում են համապատասխանաբար ՀՀ կենտրոնական բանկին, ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ բանկերին, հաճախորդներին, բանկի գլխամասին և տվյալ բանկի այլ մասնաճյուղերին վճարած գումարները, իսկ 3.6 տողում արտացոլվում են բոլոր այն դրամական ելքերը, որոնք չեն ներառվել այլ ելքային տողերում: 13-րդ հաշվետվության 1-ին և 2-րդ էջերում ընդգրկվող հաշիվները ներկայացված են Աղյուսակ 32-ում:

Դրամարկղային շրջանառության վերաբերյալ

Աղյուսակ 32

Հ/հ	Ցուցանիշ	Ներառվող հաշիվները
1	Դրամարկղի մնացորդը հաշվետու ամսվա սկզբին	Նախորդ ամսվա վերջին դրամարկղի մնացորդը = 1011 + 1013 (դրամով)
2	Դրամարկղի մնացորդը հաշվետու ամսվա վերջին	1011 + 1013 (դրամով)

16. Թիվ 14 հաշվետվությունը բաղկացած է 2 էջից:

Առաջին էջում ներկայացվում են Կանոնակարգ 2-ի համաձայն մեկ փոխառուի և խոշոր փոխառուների ռիսկի առավելագույն չափի $Ն3^1$ և $Ն3^2$ նորմատիվների հաշվարկի համար անհրաժեշտ տարրերը: Հաշվետվության մեջ արտացոլվում են այն խոշոր փոխառուները, որոնց գծով բանկի ռիսկը (համաձայն Կանոնակարգ 2-ի 37-րդ կետով սահմանված փոխառուի նկատմամբ ռիսկի հաշվարկման մեթոդաբանության) գերազանցում է բանկի՝ միջին ամսական նորմատիվային ընդհանուր կապիտալի 5 տոկոսը: 7-րդ և 14-րդ սյուներում լրացվում է խոշոր պարտատիրոջ հետ փոխկապակցված անձանց հանդեպ ունեցած պահանջի ընդհանուր գումարը մեկ տողով

(խոշոր պարտատիրոջ հետ փոխկապակցված անձանց անունները բացվում են հաշվետվության երկրորդ էջում): Եթե բանկն ունի միմյանց հետ փոխկապակցված մի քանի փոխառու (փոխկապակցված խումբ), որոնց գծով բանկի նկատմամբ ռիսկերի հանրագումարը գերազանցում է միջին ամսական նորմատիվային ընդհանուր կապիտալի 5 տոկոս սահմանաչափը, ապա թիվ 14 հաշվետվության «Կազմակերպության (փոխառուի) անվանումը» սյունակում լրացվում է փոխկապակցված խմբի «կապող օղակ» հանդիսացող փոխառուն, իսկ 7-րդ և 14-րդ սյունակներում՝ այդ փոխառուի հետ փոխկապակցված անձանց հանդեպ ունեցած պարտքի ընդհանուր գումարը մեկ տողով: Հաշվետվության առաջին էջի 8-րդ և 9-րդ սյունակներում լրացվում են փոխառուի կողմից «Այլ անձին (որը փոխառուի հետ փոխկապակցված անձ չէ) նույն բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների դիմաց տրված երաշխավորությունների, ինչպես նաև ցանկացած այլ ապահովվածության արժեքի (ապահովված ընդհանուր պարտավորությունը չգերազանցող գումարի) չափով. ընդ որում, այլ անձանց անունները բացվում են հաշվետվության երկրորդ էջում: Օրինակ, «Ա» փոխառուն փոխկապակցված է «Բ» փոխառուի հետ, իսկ վերջինս փոխկապակցված է նաև «Գ» փոխառուի հետ: Հաշվետվության «Կազմակերպության (փոխառուի) անվանումը» սյունակում կլրացվի «Բ» փոխառուն: Եթե բանկն ունի միմյանց հետ փոխկապակցված երկու խոշոր փոխառուներ, որոնց անհատական ռիսկերը հավասար են կամ գերազանցում են բանկի միջին ամսական ընդհանուր կապիտալի 5 տոկոսը, ապա հաշվետվության «Կազմակերպության (փոխառուի) անվանումը» սյունակում լրացվում է փոխկապակցված անձանցից ամենամեծ պարտավորություն ունեցող անձի անվանումը: Միևնույն անձի հանդեպ ունեցած պահանջները պետք է արտացոլվեն միայն մեկ անգամ: Օրինակ, երբ «Ա» փոխառուն, որի գծով բանկի ռիսկը կազմում է 0.6%, փոխկապակցված է «Բ» (5%), «Գ» (0.62%), «Դ» (5%) փոխառուների հետ, և «Բ» փոխառուն փոխկապակցված է նաև «Ե» (5%) փոխառուի հետ, ապա հաշվետվության առաջին էջի առանձին տողում՝ «Կազմակերպության (փոխառուի) անվանումը» սյունակում, կլրացվի «Ա» փոխառուի անվանումը, 7-րդ և 14-րդ սյունակներում՝ «Ա» փոխառուի հետ փոխկապակցված «Բ», «Գ», «Դ» փոխառուների հանդեպ բանկի ունեցած պահանջների հանրագումարը, իսկ հաջորդ տողում՝ «Կազմակերպության (փոխառուի) անվանումը» սյունակում, կլրացվի «Ե» փոխառուի անվանումը, իսկ 7-րդ և 14-րդ սյունակներում ոչինչ չի լրացվի: 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9-րդ սյունակներում լրացվող հոդվածները ռիսկով չեն կշռվում: «Նոստրո» թղթակցային հաշիվները, միջբանկային ավանդները, միջբանկային վարկերը, օտարերկրյա կառավարությունների և կենտրոնական բանկերի նկատմամբ պահանջները արտացոլվում են 13-րդ և 14-րդ սյունակներում: «Գումարը՝ համապատասխան ռիսկի կշռով» սյունակը լրացվում է նվազող հաջորդականությամբ: «Ն3^2 նորմատիվի հաշվարկման մեջ ընդգրկվող մեծությունը» սյունակում արտացոլվում է 18-րդ սյունակում հաշվարկվող գումարը նվազեցված բանկի խոշոր փոխառու հանդիսացող անձին (որը փոխառուի հետ փոխկապակցված անձ չէ) նույն բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների դիմաց տրված երաշխավորությունների, ինչպես նաև ցանկացած այլ ապահովվածության արժեքի (ապահովված ընդհանուր պարտավորությունը չգերազանցող գումարի) չափով: 14-րդ հաշվետվության 1-ին էջում ընդգրկվող հաշիվները ներկայացված են Աղյուսակ 33-ում:

Կանոնակարգ 2-ի համաձայն մեկ փոխառուի և խոշոր փոխառուների նկատմամբ ունեցած պահանջները

Աղյուսակ 33

Հ/հ	Սյունակ	Ցուցանիշ	Ներառվող հաշիվները
1	2	Ժամկետային վարկի մնացորդը	1361 + 1363 + 1365 + 1367 + 1611 + 1612 + 1614 + 1615 + 1617 + 1618 + 1620 + 1621 + 1623 + 1624 + 1626 + 1627 + 1631 + 1632 + 1633 + 1635 + 1637 + 1638 + 1639 + 1641 + 1643 + 1644 + 1645 + 1647 + 1651 + 1653 + 1655 + 1657 + 1659 + 1661 + 1671 + 1673 + 1675 + 1681 + 1683 + 1685 + 1687 + 1689 + 1691 (տվյալ փոխառուին տրված ժամկետային վարկերի մասով)
2	3	Երկարաձգված և ժամկետանց վարկի մնացորդը	1361 + 1363 + 1365 + 1367 + 1611 + 1612 + 1614 + 1615 + 1617 + 1618 + 1620 + 1621 + 1623 + 1624 + 1626 + 1627 + 1631 + 1632 + 1633 + 1635 + 1637 + 1638 + 1639 + 1641 + 1643 + 1644 + 1645 + 1647 + 1651 + 1653 + 1655 + 1657 + 1659 + 1661 + 1671 + 1673 + 1675 + 1681 + 1683 + 1685 + 1687 + 1689 + 1691 (տվյալ փոխառուին տրված երկարաձգված և ժամկետանց վարկերի մասով)

3	4	Հետհաշվեկշռային երաշխավորություններ, ակրեդիտիվներ, վարկային գծերի, քարտերի և օվերդրաֆտների չօգտագործված մասեր	801 + 8022 + 8024 + 8026 + 8031
4	5	Ժամկետային այլ փոխառությունների և բանկի նկատմամբ այլ պարտավորությունների մնացորդը	(1211 + 1212) (բացառությամբ ՀՀ պետական պարտատոմսերի)+ 1221 + 1222 + 1223 + 1225 + 1227 + 1241 + 1242 + 1243 + 1245 + 1247 + 1258 + 1259 + 126 + 1327 + 1328 + 1337 + 1338 + 1402 + 1403 + 1404 + 1405 + 1413 + 1415 + 1417 + 1419 + 1421 + 1422 + 1423 + 1425 + 1427 + 1429 + 1431 + 1433 + 1443 + 1445 + 1447 + 1449 + 1451 + 1453 + (1511 + 1512) (բացառությամբ ՀՀ պետական պարտատոմսերի) + 1521 + 1522 + 1523 + 1525 + 1526 + 1541 + 1542 + 1543 + 1545 + 1546 + 155 + 171 + 172 (սույն կետում ընդգրկված հաշիվների մասով) + 185 + 186 + 188 + 191 + 192 + 193 + (2011 + 2012 + 2013 + 2014 + 2015) (բացառությամբ ՀՀ պետական պարտատոմսերի) + 2021 + 2022 + 2023 + 2024 + 2025 + 2041 + 2042 + 2043 + 2044 + 2045 + 2051 + 2052 + 2054 + 2055 + 2057 + 2058 + 2059 + 2060 + 2062 + 2063 + 2065 + 2066 + 2068 + 2069 + 211 + 212 + 281 (տվյալ փոխառուին վերաբերող ժամկետային այլ փոխառությունների և բանկի նկատմամբ այլ պարտավորությունների մասով)
5	6	Երկարաձգված և ժամկետանց այլ փոխառությունների և բանկի նկատմամբ այլ պարտավորությունների մնացորդը	(1211 + 1212) (բացառությամբ ՀՀ պետական պարտատոմսերի)+ 1221 + 1222 + 1223 + 1225 + 1227 + 1241 + 1242 + 1243 + 1245 + 1247 + 1258 + 1259 + 126 + 1327 + 1328 + 1337 + 1338 + 1402 + 1403 + 1404 + 1405 + 1413 + 1415 + 1417 + 1419 + 1421 + 1422 + 1423 + 1425 + 1427 + 1429 + 1431 + 1433 + 1443 + 1445 + 1447 + 1449 + 1451 + 1453 + (1511 + 1512) (բացառությամբ ՀՀ պետական պարտատոմսերի) + 1521 + 1522 + 1523 + 1525 + 1526 + 1541 + 1542 + 1543 + 1545 + 1546 + 155 + 171 + 172 (սույն կետում ընդգրկված հաշիվների մասով) + 185 + 186 + 188 + 191 + 192 + 193 + (2011 + 2012 + 2013 + 2014 + 2015) (բացառությամբ ՀՀ պետական պարտատոմսերի) + 2021 + 2022 + 2023 + 2024 + 2025 + 2041 + 2042 + 2043 + 2044 + 2045 + 2051 + 2052 + 2054 + 2055 + 2057 + 2058 + 2059 + 2060 + 2062 + 2063 + 2065 + 2066 + 2068 + 2069 + 211 + 212 + 281 (տվյալ փոխառուին վերաբերող երկարաձգված և ժամկետանց այլ փոխառությունների և բանկի նկատմամբ այլ պարտավորությունների մասով)
6	7	Տվյալ փոխառուի հետ փոխկապակցված անձանց ընդհանուր պարտավորությունների գումարը	(1211 + 1212) (բացառությամբ ՀՀ պետական պարտատոմսերի)+ 1221 + 1222 + 1223 + 1225 + 1227 + 1241 + 1242 + 1243 + 1245 + 1247 + 1258 + 1259 + 126 + 1327 + 1328 + 1337 + 1338 + 1402 + 1403 + 1404 + 1405 + 1413 + 1415 + 1417 + 1419 + 1421 + 1422 + 1423 + 1425 + 1427 + 1429 + 1431 + 1433 + 1443 + 1445 + 1447 + 1449 + 1451 + 1453 + (1511 + 1512) (բացառությամբ ՀՀ պետական պարտատոմսերի) + 1521 + 1522 + 1523 + 1525 + 1526 + 1541 + 1542 + 1543 + 1545 + 1546 + 155 + 171 + 172 (սույն կետում ընդգրկված հաշիվների մասով) + 185 + 186 + 188 + 191 + 192 + 193 + (2011 + 2012 + 2013 + 2014 + 2015) (բացառությամբ ՀՀ պետական պարտատոմսերի) + 2021 + 2022 + 2023 + 2024 + 2025 + 2041 + 2042 + 2043 + 2044 + 2045 + 2051 + 2052 + 2054 + 2055 + 2057 + 2058 + 2059 + 2060 + 2062 + 2063 + 2065 + 2066 + 2068 + 2069 + 211 + 212 + 281 + 801 + 8022 + 8024 + 8026 + 803 (տվյալ փոխառուի հետ փոխկապակցված անձանց մասով)
7	8	Այլ անձին (որը փոխառուի հետ փոխկապակցված անձ չէ) նույն բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների դիմաց տրված երաշխավորությունների, ինչպես նաև ցանկացած այլ ապահովվածության արժեքի (ապահովված ընդհանուր պարտավորությունը չգերազանցող գումարի) չափով	812
8	10	Հնարավոր կորուստների պահուստ	170 + 195 + 2071 + 2151 (1-ից 8-րդ սյունակներում ընդգրկված հոդվածների մասով)
9	12	Միջբանկային ավանդներ, թղթակցային հաշիվներ, օտարերկրյա կառավարությունների և կենտրոնական բանկերի նկատմամբ պահանջներ՝ փոխառուի գծով	1041 + 1043 + 1231 + 1232 + 1258 + 1259 + 1321 + 1322 + 1323 + 1324 + 1331 + 1332 + 1333 + 1334 + 1341 + 1343 + 1345 + 1347 + 1381 + 1416 + 1445 + 1531 + 1532 + 1541 + 1542 + 1543 + 1545 + 1546 + 1558 + 1683 + 1687 + 1691 + 1693 + 1712 + 1829 + 1863 + 1883 + 1886 + 1914 + 1924 + 2031 + 2032 + 2033 + 2034 + 2035 + 2041 + 2042 + 2043 + 2044 + 2045 + 2068 + 2069 + 2814 + 2815 (տվյալ փոխառուի մասով)
10	13	Միջբանկային ավանդներ, թղթակցային հաշիվներ, օտարերկրյա կառավարությունների և կենտրոնական բանկերի նկատմամբ պահանջներ՝ փոխառուի հետ փոխկապակցված անձանց գծով	1041 + 1043 + 1231 + 1232 + 1258 + 1259 + 1321 + 1322 + 1323 + 1324 + 1331 + 1332 + 1333 + 1334 + 1341 + 1343 + 1345 + 1347 + 1381 + 1416 + 1445 + 1531 + 1532 + 1541 + 1542 + 1543 + 1545 + 1546 + 1558 + 1683 + 1687 + 1691 + 1693 + 1712 + 1829 + 1863 + 1883 + 1886 + 1914 + 1924 + 2031 + 2032 + 2033 + 2034 + 2035 + 2041 + 2042 + 2043 + 2044 + 2045 + 2068 + 2069 + 2814 + 2815 (տվյալ փոխառուի հետ փոխկապակցված անձանց մասով)
11	14	Հնարավոր կորուստների պահուստ	170 + 195 + 2071 + 2151 (12-րդ և 13-րդ սյունակներում ընդգրկված հոդվածների մասով)

Երկրորդ էջում ներկայացվում է հաշվետվության առաջին էջի 7-րդ, 8-րդ, 9-րդ և 14-րդ սյունակների հանրագումարների մանրամասն նկարագրությունը: Երկրորդ էջի 2-րդ սյունակում առանձին տողերով պետք է արտացոլվեն տվյալ խոշոր փոխառուի հետ փոխկապակցված և բանկի հանդեպ պարտավորություններ ստանձնած բոլոր անձանց անունները (անվանումները): Ընդ որում, մնացած սյունակները լրացվում են, միայն եթե տվյալ տողում արտացոլված խոշոր փոխառուի հետ փոխկապակցված անձի հանդեպ բանկի ունեցած պահանջները ներառված են առաջին էջում՝ տվյալ խոշոր փոխառուի համապատասխան տողի 7-րդ և 14-րդ սյունակների հանրագումարներում, իսկ 3-րդ սյունակում լրացնել այն անձանց անունները, որոնք ներառված են առաջին էջում՝ տվյալ խոշոր փոխառուի համապատասխան տողի 8-րդ և 9-րդ սյունակներում: Ստորև աղյուսակի տեսքով բերվում է խոշոր փոխառուի հետ փոխկապակցված անձանց հանդեպ ունեցած պահանջների, ինչպես նաև խոշոր փոխառուի կողմից այլ անձին կամ անձանց (որոնք փոխառուի հետ փոխկապակցված անձինք չեն) նույն բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների դիմաց տրված երաշխիքների, երաշխավորությունների, ինչպես նաև ցանկացած այլ ապահովվածության արժեքների լրացման ձևի օրինակը: Խոշոր փոխառուի հետ փոխկապակցված անձանց անունները (անվանումները), ինչպես նաև խոշոր փոխառուի կողմից այլ անձին (անձանց), որը փոխառուի հետ փոխկապակցված չէ, նույն բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների դիմաց տրված երաշխիքների, երաշխավորությունների, ինչպես նաև ցանկացած այլ ապահովվածության արժեքների գումարները լրացվում են նվազող հերթականությամբ:

Կապված-փոխադրամ (փոխառուն) անվանումը	Տվյալ խոշոր փոխառուի հետ փոխկապակցված անձանց անունները (անվանումները)	Այն անձանց անունները (անվանումները), որոնք փոխառուի հետ փոխկապակցված անձինք չեն), որոնց կողմից խոշոր փոխառուն ունի բանկի հանդեպ ունեցած երաշխավորությունների դիմաց ցանկացած այլ ապահովվածության արժեքներ	Ժամկետ-ային վարկի մնացորդը	Հետհաշվեկշռային երաշխավորություններ, ակրեդիտիվներ, վարկային գծերի, քարտերի և օվերդրաֆտների մասով չօգտագործված մնացորդներ	Այլ անձին (որը փոխառուի հետ փոխկապակցված անձ չէ) նույն բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների դիմաց տրված երաշխիքների, երաշխավորությունների, ինչպես նաև ցանկացած այլ ապահովվածության արժեքների (գրավի) չափով ընդունված չօգտագործված մնացորդներ	Ընդամենը
«ԱԱԱ» ՍՊԸ	«ԲԲ» ՍՊԸ		500 000	100 000		600 000
«ԱԱԱ» ՍՊԸ	Պողոսյան Պ.			300 000		300 000
«ԱԱԱ» ՍՊԸ		«ԱԲԳ» ՍՊԸ			200 000	200 000

14-րդ հաշվետվության 2-րդ էջում ընդգրկվող հաշիվները ներկայացված են Աղյուսակ 34-ում:

Մեկ փոխառուի և խոշոր փոխառուների հետ փոխկապակցված անձանց նկատմամբ ունեցած պահանջները և վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները

Աղյուսակ 34

Հ/հ	Սյունակ	Ցուցանիշ	Ներառվող հաշիվները
1	4	Ժամկետային վարկի մնացորդը	1361 + 1363 + 1365 + 1367 + 1611 + 1612 + 1614 + 1615 + 1617 + 1618 + 1620 + 1621 + 1623 + 1624 + 1626 + 1627 + 1631 + 1632 + 1633 + 1635 + 1637 + 1638 + 1639 + 1641 + 1643 + 1644 + 1645 + 1647 + 1651 + 1653 + 1655 + 1657 + 1659 + 1661 + 1671 + 1673 + 1675 + 1681 + 1683 + 1685 + 1687 + 1689 + 1691 (տվյալ տողի 2-րդ սյունակում նշված անձին տրված ժամկետային վարկերի մասով)
2	5	Երկարաձգված և ժամկետանց վարկի մնացորդը	1361 + 1363 + 1365 + 1367 + 1611 + 1612 + 1614 + 1615 + 1617 + 1618 + 1620 + 1621 + 1623 + 1624 + 1626 + 1627 + 1631 + 1632 + 1633 + 1635 + 1637 + 1638 + 1639 + 1641 + 1643 + 1644 + 1645 + 1647 + 1651 + 1653 + 1655 + 1657 + 1659 + 1661 + 1671 + 1673 + 1675 + 1681 + 1683 + 1685 + 1687 + 1689 + 1691 (տվյալ տողի 2-րդ սյունակում նշված անձին տրված երկարաձգված և ժամկետանց վարկերի մասով)

3	6	Հետհաշվեկշռային երաշխավորություններ, ակրեդիտիվներ, վարկային գծերի, քարտերի և օվերդրաֆտների չօգտագործված մասեր	801 + 8022 + 8024 + 8026 + 8031 (տվյալ տողի 2-րդ սյունակում նշված անձի մասով)
4	7	Ժամկետային այլ փոխառությունների և բանկի նկատմամբ այլ պարտավորությունների մնացորդը	(1211 + 1212) (բացառությամբ ՀՀ պետական պարտատոմսերի)+ 1221 + 1222 + 1223 + 1225 + 1227 + 1241 + 1242 + 1243 + 1245 + 1247 + 1258 + 1259 + 126 + 1327 + 1328 + 1337 + 1338 + 1402 + 1403 + 1404 + 1405 + 1413 + 1415 + 1417 + 1419 + 1421 + 1422 + 1423 + 1425 + 1427 + 1429 + 1431 + 1433 + 1443 + 1445 + 1447 + 1449 + 1451 + 1453 + (1511 + 1512) (բացառությամբ ՀՀ պետական պարտատոմսերի)+ 1521 + 1522 + 1523 + 1525 + 1526 + 1541 + 1542 + 1543 + 1545 + 1546 + 155 + 171 + 172 (սույն կետում ընդգրկված հաշիվների մասով) + 185 + 186 + 188 + 191 + 192 + 193 + (2011 + 2012 + 2013 + 2014 + 2015) (բացառությամբ ՀՀ պետական պարտատոմսերի) + 2021 + 2022 + 2023 + 2024 + 2025 + 2041 + 2042 + 2043 + 2044 + 2045 + 2051 + 2052 + 2054 + 2055 + 2057 + 2058 + 2059 + 2060 + 2062 + 2063 + 2065 + 2066 + 2068 + 2069 + 211 + 212 + 281 (տվյալ տողի 2-րդ սյունակում նշված անձին վերաբերող ժամկետային այլ փոխառությունների և բանկի նկատմամբ այլ պարտավորությունների մասով)
5	8	Երկարաձգված և ժամկետանց այլ փոխառությունների և բանկի նկատմամբ այլ պարտավորությունների մնացորդը	(1211 + 1212) (բացառությամբ ՀՀ պետական պարտատոմսերի)+ 1221 + 1222 + 1223 + 1225 + 1227 + 1241 + 1242 + 1243 + 1245 + 1247 + 1258 + 1259 + 126 + 1327 + 1328 + 1337 + 1338 + 1402 + 1403 + 1404 + 1405 + 1413 + 1415 + 1417 + 1419 + 1421 + 1422 + 1423 + 1425 + 1427 + 1429 + 1431 + 1433 + 1443 + 1445 + 1447 + 1449 + 1451 + 1453 + (1511 + 1512) (բացառությամբ ՀՀ պետական պարտատոմսերի)+ 1521 + 1522 + 1523 + 1525 + 1526 + 1541 + 1542 + 1543 + 1545 + 1546 + 155 + 171 + 172 (սույն կետում ընդգրկված հաշիվների մասով) + 185 + 186 + 188 + 191 + 192 + 193 + (2011 + 2012 + 2013 + 2014 + 2015) (բացառությամբ ՀՀ պետական պարտատոմսերի)+ 2021 + 2022 + 2023 + 2024 + 2025 + 2041 + 2042 + 2043 + 2044 + 2045 + 2051 + 2052 + 2054 + 2055 + 2057 + 2058 + 2059 + 2060 + 2062 + 2063 + 2065 + 2066 + 2068 + 2069 + 211 + 212 + 281 (տվյալ տողի 2-րդ սյունակում նշված անձին վերաբերող երկարաձգված և ժամկետանց այլ փոխառությունների և բանկի նկատմամբ այլ պարտավորությունների մասով)
6	9	Այլ անձին (որը փոխառուի հետ փոխկապակցված անձ չէ) նույն բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների դիմաց տրված երաշխավորությունների, ինչպես նաև ցանկացած այլ ապահովվածության արժեքի (ապահովված ընդհանուր պարտավորությունը չգերազանցող գումարի) չափով	812
7	10	Հնարավոր կորուստների պահուստ	170 + 195 + 2071 + 2151 (4-ից 8-րդ սյունակներում ընդգրկված հոդվածների մասով)
8	13	Միջբանկային ավանդներ, թղթակցային հաշիվներ, օտարերկրյա կառավարությունների և կենտրոնական բանկերի նկատմամբ պահանջներ	1041 + 1043 + 1231 + 1232 + 1258 + 1259 + 1321 + 1322 + 1323 + 1324 + 1331 + 1332 + 1333 + 1334 + 1341 + 1343 + 1345 + 1347 + 1381 + 1416 + 1445 + 1531 + 1532 + 1541 + 1542 + 1543 + 1545 + 1546 + 1558 + 1683 + 1687 + 1691 + 1693 + 1712 + 1829 + 1863 + 1883 + 1886 + 1914 + 1924 + 2031 + 2032 + 2033 + 2034 + 2035 + 2041 + 2042 + 2043 + 2044 + 2045 + 2068 + 2069 + 2814 + 2815 (տվյալ տողի 2-րդ կամ 3-րդ սյունակում նշված անձանց մասով)
9	14	Հնարավոր կորուստների պահուստ	170 + 195 + 2071 + 2151 (13-րդ սյունակում ընդգրկված հոդվածների մասով)

17. Թիվ 15 հաշվետվությունում պետք է արտացոլվեն բոլոր այն պարտատերերը, որոնց անհատական պահանջները բանկի նկատմամբ հավասար են կամ գերազանցում են բանկի հաշվետու ամսվա միջին օրական ընդհանուր պարտավորությունների 5% սահմանաչափը (11-րդ սյունակում լրացվում է խոշոր պարտատիրոջ հետ փոխկապակցված անձանց հանդեպ ունեցած պարտքի ընդհանուր գումարը մի տողով):

Եթե բանկն ունի իրար հետ փոխկապակցված մի քանի պարտատերեր, որոնց հանդեպ բանկի ունեցած պարտավորությունների ընդհանուր գումարը հավասար է կամ գերազանցում է 5% սահմանաչափը, ապա թիվ 15 հաշվետվության «Պարտատիրոջ անվանումը» սյունակում լրացվում է փոխկապակցված անձանցից ամենամեծ պարտատիրոջ անվանումը, 11-րդ սյունակում՝ այդ պարտատիրոջ հետ փոխկապակցված անձանց հանդեպ ունեցած պարտքի ընդհանուր գումարը մի տողով:

Եթե թիվ 15 հաշվետվության իմաստով՝ անձը համարվում է և՛ խոշոր պարտատեր, և՛ խոշոր պարտատիրոջ հետ փոխկապակցված անձ, ապա նրա հանդեպ ունեցած պարտավորության գումարը հաշվետվության մեջ ցույց է տրվում երկու անգամ:

Եթե պարտատերը ֆիզիկական անձ է, ապա «Սեփականության ձևը» սյունակում անհրաժեշտ է նշել «ֆիզիկական անձ», եթե պարտատերը իրավաբանական անձ է և իր բաժնեմասերի 50%-ից ավելին պատկանում է պետությանը՝ «պետական մասնակցությամբ», մնացած դեպքերում՝ «ոչ պետական»:

«Պարտքի տեսակը» սյունակում անհրաժեշտ է նշել պարտավորության անվանումը (օրինակ՝ ավանդ, վարկ, լիզինգ, ֆակտորինգ, օվերնայթ, տոկոսագումարները և այլն):

«Արժույթի տեսակը» 8-րդ սյունակում անհրաժեշտ է նշել արժույթի Ստանդարտների միջազգային կազմակերպության կոդը:

Հաշվետվության մեջ 2-րդ և 3-րդ սյունակները պետք է լրացվեն միայն մեծատառերով և առանց չակերտների:

6-րդ սյունակում անհրաժեշտ է լրացնել պարտավորության ձևավորման ամսաթիվը (ըստ պայմանագրի), ցպահանջ, ընթացիկ հաշիվների համար լրացվում է այն ամսաթիվը, որից սկսած՝ պարտատիրոջ նկատմամբ բանկի բոլոր պարտավորությունների հանրագումարը գերազանցել է հաշվետու ամսվա՝ բանկի միջին օրական ընդհանուր պարտավորությունների 5%-ը: 7-րդ սյունակում լրացվում է պարտքի պայմանագրով նախատեսված մարման ամսաթիվը, եթե պարտավորությունը ժամկետային է, եթե ոչ՝ ապա սյունակը չի լրացվում: Տոկոսների համար 6-րդ սյունակում լրացվում է տվյալ տոկոսագումարի կուտակման առաջին օրվա ամսաթիվը, իսկ 7-րդ սյունակում՝ պայմանագրով նախատեսված տվյալ տոկոսագումարի մարման/վճարման ամսաթիվը:

«Պարտքի գումարը» սյունակում (9-րդ սյունակ) անհրաժեշտ է լրացնել պարտքի գումարն առանձին պարտքի գծով, 10-րդ սյունակում՝ միայն մեկ պարտատիրոջ նկատմամբ բոլոր տեսակի պարտավորությունների հանրագումարը (ընդ որում, լրացվում է միայն վերջին պարտքի տողին կից վանդակը), իսկ 11-րդ սյունակում՝ տվյալ պարտատիրոջ հետ փոխկապակցված անձանց նկատմամբ բանկի ունեցած պարտավորությունների գումարը (ընդ որում, լրացվում է միայն 10-րդ սյունակում արտացոլված գումարին կից վանդակը): 15-րդ հաշվետվությունում ընդգրկվող հաշիվները ներկայացված են Աղյուսակ 35-ում:

«Խոշոր» պարտատերերի վերաբերյալ

Աղյուսակ 35

Հ/հ	Սյունակ	Ցուցանիշ	Ներառվող հաշիվները
1	9	Պարտքի գումար	3000 + 4000 հաշվեկշռային հաշիվների միջին օրական գումար (տվյալ պարտատիրոջ մասով)

18. Թիվ 16 հաշվետվությունում պարտադիր ցույց են տրվում բացված բոլոր թղթակցային հաշիվները՝ անկախ մնացորդի չափից (եթե նույնիսկ թղթակցային հաշվի մնացորդը «0» է): Թիվ 16 հաշվետվության մեջ չեն ընդգրկվում Կենտրոնական բանկում, ինչպես նաև սնանկ ճանաչված, լուծարվող և ինքնալուծարվող բանկերում թղթակցային և (կամ) լուծարային հաշիվները: Եթե թղթակցային հաշիվը բազմարժութային է (մուլտի), ապա յուրաքանչյուր արժույթով մնացորդը լրացվում է առանձին տողով: Եթե բազմարժութային թղթակցային հաշվի բոլոր ենթահաշիվների մնացորդները «0» են, ապա հաշվետվության մեջ «Արժույթի տեսակը» սյունակում նշվում է «Մուլտի» բառը: Եթե բազմարժութային թղթակցային հաշվի մեկ (կամ ավելի) ենթահաշվում առկա է մնացորդ, իսկ մնացած ենթահաշիվների մնացորդները «0» են, ապա հաշվետվության մեջ առանձին տողով լրացվում է մնացորդ ունեցող ենթահաշիվը (նշելով համապատասխան արտարժույթը), իսկ մնացած հաշիվների համար հաջորդ տողում նշվում է «0»-ական մնացորդ և «Արժույթի տեսակը» սյունակում նշվում է «Մուլտի» բառը: «Բանկի կոդը/վարկանիշը» սյունակում ռեզիդենտ բանկերի համար նշվում է սույն կանոնակարգով սահմանված՝ տվյալ բանկի կոդը, իսկ ոչ ռեզիդենտ բանկերի համար՝ տվյալ բանկի վարկանիշը (եթե տվյալ բանկը վարկանիշ չունի, ապա 2-րդ սյունակում դրվում է գծիկ «-»): «Գտնվելու վայրը» մասի «Կոդ» սյունակում լրացվում է տվյալ երկրի եռանիշ կոդը՝ համաձայն ISO 3166-1 alpha-3 միջազգային ստանդարտի: Թիվ 16 հաշվետվությունը ռեզիդենտ բանկերի մասով լրացվում է ըստ «Մնացորդը (հազար դրամ)» սյունակի հաշվի մնացորդի՝ նվազող հաջորդականությամբ, իսկ ոչ ռեզիդենտ բանկերի մասով լրացվում է ըստ «Բանկի կոդը/վարկանիշը» սյունակի վարկանիշի՝

նվազող հաջորդականությամբ (եթե տվյալ բանկը վարկանիշ չունի, ապա լրացվում է ոչ ռեզիդենտ բանկերի համար նախատեսված աղյուսակի վերջին տողերում): 16-րդ հաշվետվությունում ընդգրկվող հաշիվները ներկայացված են Աղյուսակ 36-ում:

«Խոշոր» պարտատերերի վերաբերյալ

Աղյուսակ 36

Հ/հ	Բաժին	Սյունակ	Տող	Ներառվող հաշիվները
1	Նոստրո	Մնացորդը	Ընդամենը (ռեզիդենտ բանկեր)	1031 + 1041 + 1402 + 2914 (թղթակցային հաշիվների մասով)
2	Նոստրո	Մնացորդը	Ընդամենը (ոչ ռեզիդենտ բանկեր)	1033 + 1043 + 1403 + 2915 (թղթակցային հաշիվների մասով)
3	Լորո	Մնացորդը	Ընդամենը (ռեզիդենտ բանկեր)	3111
4	Լորո	Մնացորդը	Ընդամենը (ոչ ռեզիդենտ բանկեր)	3113

19. Թիվ 17 հաշվետվությունը լրացվում է միայն հաշվետու շաբաթվա ընթացքում կնքված նոր ավանդային, վարկային (այդ թվում՝ վարկային, օվերդրաֆտային և քարտերով տրված վարկերը), օվերնայթային, ռեպո համաձայնագրերի, արժութային սվոփի, ֆակտորինգի, լիզինգի ինչպես նաև նախկինում կնքված պայմանագրերի համաձայն հաշվետու ժամանակաշրջանում ներգրավված կամ տեղաբաշխված միջոցների հիման վրա՝ հազար միավորներով: Հաշվետվության մեջ ընդգրկվում են միայն այն երկարաձգված ներգրավված և տեղաբաշխված միջոցները, որոնց տոկոսադրույքները, համաձայն կնքված պայմանագրերի, փոփոխվել են: Կենտրոնական բանկի հետ կատարված գործարքները հաշվետվության մեջ չեն ընդգրկվում: Մասնակի մարումների սահմանված գրաֆիկով ներգրավված/տեղաբաշխված միջոցները հաշվետվության մեջ արտացոլել ըստ կնքված պայմանագրի վերջնական ժամկետի: Ավանդային պայմանագրերի համաձայն ավանդի վրա կապիտալացվող տոկոսագումարները հաշվետվության մեջ չեն արտացոլվում:

«Ֆիզիկական անձանց հիփոթեքային վարկեր» և «Ֆիզիկական անձանց սպառողական և այլ վարկեր» տողերում արտացոլվում են սույն կանոնակարգի 9-րդ կետում հիփոթեքային և սպառողական վարկերին համապատասխանող վարկերը:

«Միջազգային վարկային ծրագրերով» և «Կառավարության երաշխիքով» տողերում արտացոլվող տեղաբաշխված միջոցները չպետք է արտացոլել «Տնտեսավարող սուբյեկտներին», «Ֆիզիկական անձանց», «Ֆիզիկական անձ տնտեսավարող սուբյեկտներին», «Հայաստանի Հանրապետության բանկերում», «Այլ բանկերում», «Դրամով ռեպո համաձայնագիր» և «Արտարժույթով ռեպո համաձայնագիր» տողերում: Միջազգային վարկային ծրագրերով ներգրավված և տեղաբաշխված գումարները պետք է արտացոլվեն միայն, համապատասխանաբար, «Ներգրավված միջոցներ» բաժնի «Միջազգային վարկային ծրագրերով» կամ «Տեղաբաշխված միջոցներ» բաժնի «Միջազգային վարկային ծրագրերով» տողերում: Ընդ որում, «Միջազգային վարկային ծրագրերով» տողերում արտացոլվում են միջազգային բոլոր վարկային ծրագրերով ներգրավված և տեղաբաշխված միջոցները (Գերմանա-հայկական հիմնադրամից և այլն): Շաբաթվա ընթացքում տրված վարկերի միջին տարեկան տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Մտ = (Վ1*Տ1+Վ2*Տ2+ ... + Վm*Տm) / (Վ1+Վ2+...+Վm),$$

որտեղ՝
Վ-ն տրված վարկերի ծավալն է,
Տ-ն՝ տրված վարկերի տարեկան տոկոսները,
1-ո-ը՝ տրված վարկերի քանակը:

Ավանդների դիմաց վճարվող միջին տարեկան տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$Մտ = (Ա1*Տ1+Ա2*Տ2+ ... + Ան*Տn)/(Ա1+Ա2+...+Ան),$$

որտեղ՝
Ա-ն՝ ավանդների ծավալն է,
Տ -ն՝ ավանդների դիմաց վճարվող տարեկան տոկոսները,
1-ո-ը՝ ավանդների քանակը: Չևերը լրացվում են տարեկան տոկոսադրույքներով:

Շաբաթվա ընթացքում կայացած ռեպո գործարքների միջին ռեպո տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Մտ = (Ռ1*S1+Ռ2*S2+...+Ռո*Sո)/(Ռ1+Ռ2+...+Ռո),$$

որտեղ՝

Ռ-ն կնքված ռեպո գործարքների ծավալն է,

Տ-ն՝ կնքված ռեպո գործարքների տոկոսադրույքները,

1-ո-ը՝ կայացած գործարքների քանակը:

Առանձին աղյուսակում լրացվում են այն բանկերի անվանումները, որոնց հետ իրականացվել են գործարքները՝ նշելով ներգրավված կամ տեղաբաշխված միջոցի ծավալը, ժամկետը և միջին տարեկան տոկոսադրույքը՝ ըստ արժույթի տեսակի, և գործարքի տեսակը (օրինակ՝ օվերնայթ, ավանդ, վարկ, ռեպո և այլն):

«Այլ արժույթներ (ներառյալ ոսկին)» տողերը լրացվում են դրամական արտահայտությամբ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով:

Բանկերի հետ իրականացված գործարքների արտացոլման համար նախատեսված աղյուսակում բանկերին տրամադրված օվերնայթները պետք է արտացոլել առանձին տողերով՝ շաբաթվա յուրաքանչյուր օրվա համար: 17-րդ հաշվետվության 1-ին և 2-րդ էջերում ընդգրկվող հաշիվները ներկայացված են համապատասխանաբար Աղյուսակ 37-ում և Աղյուսակ 38-ում:

Ներգրավված միջոցների միջին տոկոսադրույքները

Աղյուսակ 37

Հ/հ	Տող	Ցուցանիշ	Ներառվող հաշիվները
1	1.1	Տնտեսավարող սուբյեկտներից ներգրավված	3211 + 3213 + 3215 + 3217 + 3231 + 3233 + 3335 + 3336 + 3337 + 3339 + 3341 + 3343 + 3347 + 3357 + 3358 + 3359 + 3361 + 3363 + 3365 + 3367 + 3691 + 3693 + 3723 + 3724 (տնտեսավարող սուբյեկտներից ներգրավված միջոցների մասով) հաշիվների գծով՝ ըստ արժույթների և ժամկետայնության
2	1.2	Ֆիզիկական անձանցից ներգրավված	3331 + 3333 + 3351 + 3354 հաշիվների գծով՝ ըստ արժույթների և ժամկետայնության
3	1.3	Ֆիզիկական անձ տնտեսավարող սուբյեկտներից ներգրավված	3345 + 3346 + 3352 + 3355 հաշիվների գծով՝ ըստ արժույթների և ժամկետայնության
4	1.4	ՀՀ բանկերից ներգրավված	3121 + 3125 + 3141 + 3145 հաշիվների գծով՝ ըստ արժույթների և ժամկետայնության
5	1.5	Այլ բանկերից ներգրավված	3123 + 3127 + 3143 + 3147 հաշիվների գծով՝ ըստ արժույթների և ժամկետայնության
6	1.6	Միջազգային վարկային ծրագրերով ներգրավված	3021 (միջազգային կազմակերպություններից ներգրավված, սակայն ԿԲ միջոցով տրամադրված) + 3235 + 3421 (միջազգային կազմակերպություններից ներգրավված, սակայն Կառավարության միջոցով տրամադրված) + 3413 + 3414 հաշիվների գծով՝ ըստ արժույթների և ժամկետայնության
7	1.7	Ռեպո համաձայնագրերով տնտեսավարող սուբյեկտներից ներգրավված դրամով միջոցներ	3247 + 3249 + 3261 + 3262 + 3263 + 3265 + 3267 + 3269 (դրամով) հաշիվների գծով՝ ըստ ժամկետայնության
8	1.7	Ռեպո համաձայնագրերով ֆիզիկական անձանցից և անհատ ձեռնարկատերերից ներգրավված դրամով միջոցներ	3271 + 3272 + 3274 + 3275 (դրամով) հաշիվների գծով՝ ըստ ժամկետայնության
9	1.7	Ռեպո համաձայնագրերով ՀՀ բանկերից ներգրավված դրամով միջոցներ	3243 (դրամով) հաշվի գծով՝ ըստ ժամկետայնության
10	1.7	Ռեպո համաձայնագրերով այլ բանկերից ներգրավված դրամով միջոցներ	3245 (դրամով) հաշվի գծով՝ ըստ ժամկետայնության
11	1.8	Ռեպո համաձայնագրերով ներգրավված արտարժույթով միջոցներ	3243 + 3245 + 3247 + 3249 + 3261 + 3262 + 3263 + 3265 + 3267 + 3269 + 3271 + 3272 + 3274 + 3275 (արտարժույթով) հաշիվների գծով՝ ըստ ժամկետայնության
12	1.9	Արժութային սվոփ տնտեսավարող սուբյեկտների հետ	3287 + 3289 + 3291 + 3293 (բացառությամբ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի)
13	1.9	Արժութային սվոփ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի հետ	3291 + 3293 (ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասով)
14	1.9	Արժութային սվոփ ՀՀ բանկերի հետ	3283
15	1.9	Արժութային սվոփ այլ բանկերի հետ	3285

16	1.10	Դրամով լիզինգ տնտեսավարող սուբյեկտների հետ	3641 + 3643 (բացառությամբ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի) + 4213 + 4214 (դրամով)
17	1.10	Դրամով լիզինգ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի հետ	3641 + 3643 (ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասով) (դրամով)
18	1.10	Դրամով լիզինգ ՀՀ բանկերի հետ	3645 + 4211 (դրամով)
19	1.10	Դրամով լիզինգ այլ բանկերի հետ	3646 + 4212 (դրամով)
20	1.11	Արտարժույթով լիզինգ	3641 + 3643 + 4213 + 4214 (արտարժույթով)

Տեղաբաշխված միջոցների միջին տոկոսադրույքները

Աղյուսակ 38

Հ/հ	Տող	Ցուցանիշ	Ներառվող հաշիվները
1	2.1	Տնտեսավարող սուբյեկտներին տրամադրված	1327 + 1328 + 1337 + 1338 + 1361 + 1363 + 1365 + 1367 + 1631 + 1632 + 1633 + 1635 + 1637 + 1638 + 1639 + 1641 + 1643 + 1644 + 1645 + 1647 + 1651 + 1653 + 1655 + 1657 + 1659 + 1661 + 1681 + 1683 + 1685 + 1687 + 1689 + 1691 (տնտեսավարող սուբյեկտների մասով) հաշիվների գծով՝ ըստ արժույթների և ժամկետայնության
2	2.2	Ֆիզիկական անձանց տրամադրված հիփոթեքային վարկեր	1611 + 1614 + 1617 + 1620 + 1623 + 1626 + 1671 + 1673 + 1675 + 1681 + 1683 + 1685 + 1687 + 1689 + 1691 (ֆիզիկական անձանց տրամադրված հիփոթեքային վարկերի մասով) հաշիվների գծով՝ ըստ արժույթների և ժամկետայնության
3	2.3	Ֆիզիկական անձանց տրամադրված սպառողական և այլ վարկեր	1611 + 1614 + 1617 + 1620 + 1623 + 1626 + 1671 + 1673 + 1675 + 1681 + 1683 + 1685 + 1687 + 1689 + 1691 (ֆիզիկական անձանց տրամադրված սպառողական և այլ վարկերի մասով) հաշիվների գծով՝ ըստ արժույթների և ժամկետայնության
4	2.4	Ֆիզիկական անձ տնտեսավարող սուբյեկտներին տրամադրված	1612 + 1615 + 1618 + 1621 + 1624 + 1627 + 1681 + 1683 + 1685 + 1687 + 1689 + 1691 (ֆիզիկական անձ տնտեսավարող սուբյեկտների մասով) հաշիվների գծով՝ ըստ արժույթների և ժամկետայնության
5	2.5	Հայաստանի Հանրապետության բանկերում տեղաբաշխված	1321 + 1323 + 1331 + 1333 + 1341 + 1345 + 1685 + 1689 + 1693 (ՀՀ բանկերի մասով) հաշիվների գծով՝ ըստ արժույթների և ժամկետայնության
6	2.6	Այլ բանկերում տեղաբաշխված	1322 + 1324 + 1332 + 1334 + 1343 + 1347 + 1381 + 1683 + 1687 + 1691 + 1693 (այլ բանկերի մասով) հաշիվների գծով՝ ըստ արժույթների և ժամկետայնության
7	2.7	Դրամով ռեպո համաձայնագրեր տնտեսավարող սուբյեկտների հետ	1417 + 1419 + 1421 + 1422 + 1423 + 1425 + 1427 + 1429 (դրամով) հաշիվների գծով՝ ըստ ժամկետայնության
8	2.7	Դրամով ռեպո համաձայնագրեր ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի հետ	1431 + 1433 (դրամով) հաշիվների գծով՝ ըստ ժամկետայնության
9	2.7	Դրամով ռեպո համաձայնագրեր ՀՀ բանկերի հետ	1413 (դրամով) հաշվի գծով՝ ըստ ժամկետայնության
10	2.7	Դրամով ռեպո համաձայնագրեր այլ բանկերի հետ	1415 (դրամով) հաշվի գծով՝ ըստ ժամկետայնության
11	2.8	Արտարժույթով ռեպո համաձայնագրեր	1413 + 1415 + 1417 + 1419 + 1421 + 1422 + 1423 + 1425 + 1427 + 1429 + 1431 + 1433 (արտարժույթով) հաշիվների գծով՝ ըստ ժամկետայնության
12	2.9	Միջազգային վարկային ծրագրերով	վերը նշված հաշիվները (միջազգային վարկային ծրագրերի մասով)
13	2.10	Կառավարության երաշխիքով	վերը նշված հաշիվները (Կառավարության երաշխիքների մասով)
14	2.11	Արժութային սվոփ տնտեսավարող սուբյեկտների հետ	1447 + 1449 + 1451 + 1453 (բացառությամբ անհատ ձեռնարկատերերի)
15	2.11	Արժութային սվոփ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի հետ	1451 + 1453 (ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասով)
16	2.11	Արժութային սվոփ ՀՀ բանկերի հետ	1443
17	2.11	Արժութային սվոփ այլ բանկերի հետ	1445
18	2.12	Դրամով ֆակտորինգ և լիզինգ տնտեսավարող սուբյեկտների հետ	1262 + 1263 + 1264 + 1265 + 1267 + 1268 (բանկ չհանդիսացող անձանց մասով) + 1552 + 1553 + 1554 + 1555 + 1557+ 1558 (բանկ չհանդիսացող անձանց մասով) + 1853 + 1855 + 1856 + 1857 + 1861 + 1863 (բանկ չհանդիսացող անձանց մասով) + 2054 + 2055 + 2057 + 2058 + 2059 + 2060 + 2065 + 2066 + 2068 + 2069 (բանկ չհանդիսացող անձանց մասով) + 2812 + 2813 + 2814 (բանկ չհանդիսացող անձանց մասով) + 2815 (դրամով)

19	2.12	Դրամով ֆակտորինգ և լիզինգ ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի հետ	1266 + 1268 + 1556 + 1558 + 1859 + 1863 + 2062 + 2063+ 2065 + 2066 + 2068 + 2069 + 2813 + 2814 (ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասով)+ 2816 (դրամով)
20	2.12	Դրամով ֆակտորինգ և լիզինգ ՀՀ բանկերի հետ	1261 + 1551 + 1851 + 2051 + 2052 + 2811 (դրամով)
21	2.12	Դրամով ֆակտորինգ և լիզինգ այլ բանկերի հետ	1268 + 1558 + 1863 + 2814 (ոչ ռեզիդենտ բանկերի մասով) (դրամով)
22	2.13	Արտարժույթով ֆակտորինգ և լիզինգ	1261 + 1262 + 1263 + 1264 + 1265 + 1266 + 1267 + 1268 + 1551 + 1552 + 1553 + 1554 + 1555 + 1556 + 1557+ 1558 + 1851 +1853 + 1855 + 1856 + 1857 + 1859 + 1861 + 1863 + 2051 + 2052 + 2054 + 2055 + 2057 + 2058 + 2059 + 2060 + 2062 + 2063 + 2065 + 2066 + 2068 + 2069 + 2811 + 2812 + 2813 + 2814 + 2815 + 2816 (արտարժույթով)

20. Թիվ 18 հաշվետվությունը բաղկացած է 2 աղյուսակից: Տվյալները լրացվում են միայն հաշվետվության ազատ վանդակներում:

Հաշվետվության I աղյուսակում գրանցվում են բանկի կողմից ոչ ռեզիդենտների հետ իրականացված բոլոր գործառնությունները, իսկ II աղյուսակում՝ միայն ոչ ռեզիդենտներից ներգրաված վարկերի ու դրանց սպասարկման վերաբերյալ տվյալները:

Հաշվետվությունը լրացվում է միլիոն դրամներով՝ բացառությամբ հաշվետվության I աղյուսակի 12-րդ և 23-րդ սյունակների և II աղյուսակի 5-րդ սյունակի: Նշված սյունակներից 12-րդ և 23-րդ սյունակներում տվյալները լրացվում են ԱՄՆ դոլարով, իսկ 5-րդ սյունակում՝ համապատասխան արժույթի միավորով, ընդ որում, գումարները նշվում են ամբողջությամբ:

Հաշվետվությունում յուրաքանչյուր գործառնություն տարանջատվում է ըստ արժույթների. Հայաստանի Հանրապետության դրամ, ԱՄՆ դոլար, եվրո, ռուսական ռուբլի և այլ արժույթ (ներառյալ ոսկին):

Հաշվետվության մեջ լրացվող արտարժույթով արտահայտված բոլոր գումարները (բացառությամբ՝ «Կապիտալի արժեթղթեր» բաժնի «Պասիվ» մասում (բացառությամբ՝ շահաբաժինների) լրացվող տվյալների) վերածվում են դրամի՝ հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ համապատասխան արժույթի գործող հաշվարկային փոխարժեքով:

Բոլոր բաժինները, բացառությամբ «Շահաբաժիններ» ու «Եկամուտներ և ծախսեր» տողերի, լրացվում են համապատասխան ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ հաշվեկշռային մնացորդների տվյալների հիման վրա:

«Շահաբաժիններ» հոդվածների «Ակտիվ» մասում լրացվում են տարեսկզբից աճողական տվյալներ հայտարարված (ստացվելիք) շահաբաժինների, իսկ «Պասիվ» մասում՝ հայտարարված (վճարվելիք) շահաբաժինների վերաբերյալ:

«Եկամուտներ և ծախսեր» տողերի «Ակտիվ» մասում լրացվում են ստացված ու ստացվելիք (հաշվեգրված) եկամուտների, իսկ «Պասիվ» մասում՝ վճարված ու վճարվելիք (հաշվեգրված) ծախսերի վերաբերյալ տվյալներ: «Հաշվետու ժամանակաշրջան» սյունակը լրացվում է աճողական տվյալներով՝ տարեսկզբից մինչև հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ ստացված (վճարված) և հաշվեգրված եկամուտների և ծախսերի չափով: «Նախորդ ժամանակաշրջան» սյունակում լրացվում են նախորդ եռամսյակի վերջին օրվա դրությամբ աճողական տվյալները:

«Կապիտալի արժեթղթեր» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են բանկի կողմից որևէ ոչ ռեզիդենտ կազմակերպության բաժնետիրական կապիտալում կատարված ուղղակի և պորտֆելային ներդրումները, իսկ «Պասիվ» մասում՝ բանկի բաժնետիրական կապիտալում ոչ ռեզիդենտների կողմից կատարված ուղղակի և պորտֆելային ներդրումները: Ընդ որում, «Պասիվ» մասի տվյալները պետք է համապատասխանեն թիվ 10 հաշվետվության՝ ոչ ռեզիդենտների կողմից բանկում կատարված ներդրումների տվյալներին:

Կապիտալի արժեթղթերի հետ կապված գործարքների բաժանումը «Ուղղակի ներդրումների» և «Պորտֆելային ներդրումների»՝ կատարվում է հետևյալ սկզբունքներով.

«Ուղղակի (նշանակալից մասնակցություն) համարվում են այն ներդրումները, որոնց գումարը կազմում է բաժնետիրական կապիտալի 10 և ավելի տոկոսը, իսկ պորտֆելային (ոչ նշանակալից մասնակցություն)՝ այն ներդրումները, որոնց գումարը կազմում է բաժնետիրական կապիտալի մինչև 10 տոկոսը:

«Պարտքային արժեթղթեր» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են ոչ ռեզիդենտների կողմից թողարկված և բանկի կողմից ձեռք բերված ցանկացած տեսակի պարտքային

արժեթղթերի և դրանց հետ կապված ստացվելիք տոկոսների վերաբերյալ տվյալներ, իսկ «Պասիվ» մասում՝ հաշվետու բանկի կողմից թողարկված և ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված պարտքային արժեթղթերի և դրանց հետ կապված վճարվելիք տոկոսների վերաբերյալ տվյալներ:

«Կարճաժամկետ» տողում գրանցվում են տվյալներ այն պարտքային արժեթղթերի վերաբերյալ, որոնց համար ձեռքբերման պահին մինչև մարումը մնացած ժամկետը չի գերազանցում մեկ տարին ներառյալ, իսկ մնացածը գրանցվում է «Երկարաժամկետ» տողում:

Ժամկետայնության տարանջատման նշված սկզբունքն ըստ կարճաժամկետ և երկարաժամկետ գործառնությունների՝ տարածվում է նաև «Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր» և «Ավանդներ» բաժինների վրա:

«Կանխիկ դրամական միջոցներ» բաժնում լրացվում են բանկի կանխիկ արտարժութային միջոցների վերաբերյալ տվյալներ: Ընդ որում, համապատասխան ժամանակաշրջանի ընդհանուր գումարը պետք է հավասար լինի տվյալ եռամսյակի վերջին օրվա դրությամբ բանկի հաշվեկշռի 101 հաշվի արտարժույթով մնացորդին:

«Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր» բաժինը լրացվում է հետևյալ կերպ.

ա. վարկային գծերի և օվերդրաֆտների ծավալները գրանցվում են փաստացի մնացորդի (օգտագործված մասի) չափով,

բ. «Ակտիվ» մասում լրացվում են բանկի կողմից ոչ ռեզիդենտներին տրամադրված զուտ վարկերի (տրված և մարված) և դրանց հետ կապված ստացվելիք տոկոսների գումարները: «Պասիվ» մասում լրացվում են ոչ ռեզիդենտների կողմից բանկին տրամադրված զուտ վարկերի (տրված և մարված) և դրանց հետ կապված վճարվելիք տոկոսների գումարները, ինչպես նաև ոչ ռեզիդենտ բանկերից ներգրավված երկարաժամկետ ժամկետային ավանդների և դրանց հետ կապված վճարվելիք տոկոսների գումարները: Ընդ որում, այս բաժնում պետք է ներառել նաև ռեպո գործառնությունների, ֆակտորինգի, վարձակալության և արժութային սվոփի հետևանքով առաջացած պահանջներն ու պարտավորությունները:

«Ավանդներ» բաժինը լրացվում է «Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր» բաժնում լրացվող սկզբունքով: «Ավանդներ» բաժնում, բացի ավանդներից, գրանցվում են նաև թղթակցային «նոստրո» և «լորո» հաշիվների ու դրանց հետ կապված ստացվելիք (վճարվելիք) տոկոսների վերաբերյալ տվյալները, ընդ որում, «Պասիվ» մասում չեն լրացվում ոչ ռեզիդենտ բանկերից ներգրավված ժամկետային ավանդները և դրանց հետ կապված վճարվելիք տոկոսները:

«Ծառայությունների դիմաց ստացվելիք (վճարվելիք) գումարներ» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են տվյալներ բանկի կողմից ոչ ռեզիդենտներին, իսկ «Պասիվ» մասում՝ ոչ ռեզիդենտների կողմից բանկին մատուցված ծառայությունների (փոխանցումներ, հավատարմագրային ծառայություններ, փոխարկումներ, երաշխիքներ, ակրեդիտիվներ կամ այլ նմանատիպ ծառայություններ) դիմաց ստացվելիք («Ակտիվ») և վճարվելիք («Պասիվ») գումարների վերաբերյալ:

Օրինակ՝ հայկական «Ա» բանկը որևէ ծառայություն է մատուցում իր ոչ ռեզիդենտ հաճախորդին: Այդ ծառայության համար բանկը գանձում է 3 մլն դրամ, որը վճարվելու է հաճախորդի կողմից ծառայությունը մատուցվելուց մեկ ամսվա ընթացքում: Ենթադրենք՝ ծառայությունը մատուցվում է հաշվետու եռամսյակում, իսկ վարձը գանձվում է հաջորդ եռամսյակում: Այս դեպքում հաշվետվությունը կլրացվի հետևյալ կերպ.

մլն դրամ

		Ակտիվ									
		Նախորդ ժամանակաշրջան					Հաշվետու ժամանակաշրջան				
		ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուսական ռուբլի	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուսական ռուբլի	Այլ արտարժույթ
6	Ծառայությունների դիմաց ստացվելիք (վճարվելիք) գումարներ						3				
	եկամուտներ և ծախսեր						3				

Հաջորդ եռամսյակում, երբ բանկը գանձի ծառայության դիմաց 3 մլն դրամի վճարը, հաշվետվությունը կստանա հետևյալ տեսքը.

մլն դրամ

		Ակտիվ									
		Նախորդ ժամանակաշրջան					Հաշվետու ժամանակաշրջան				
		ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	եվրո	Ռուսական ռուբլի	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	եվրո	Ռուսական ռուբլի	Այլ արտարժույթ
6	Ծառայությունների դիմաց ստացվելիք (վճարվելիք) գումարներ	3									
	եկամուտներ և ծախսեր	3					3				

«Այլ գործառնություններ» բաժնում գրանցվում են այն բոլոր գործառնությունները, որոնք տվյալ բանկն իրականացնում է ոչ ռեզիդենտների հետ, և որոնք չեն հանդիսանում վերը նշված գործառնություններից ոչ մեկը (Օրինակ՝ «ՍՎԻՖԹ»-ի անդամավճարները, ոչ ռեզիդենտների հետ կնքված ֆինանսական ածանցյալները և այլն): «Այլ գործառնություններ» հոդվածի մեջ ներառվում են նաև անդամավճարները և նմանատիպ վճարները ոչ ռեզիդենտ կազմակերպություններին: Ըստ որում, եթե անդամավճարից բացի վճարվում է նաև կոնկրետ ծառայությունների դիմաց վճար նույն կազմակերպությանը, այդ վճարները պետք է ներառվեն «Ծառայությունների դիմաց ստացվելիք (վճարվելիք) գումարներ» հոդվածում: Օրինակ, կազմակերպությունը կարող է անդամակցել ոչ ռեզիդենտ վարկային ռեգիստրին: Այս դեպքում անդամակցության համար վճարված գումարը պետք է ներառվի «Այլ գործառնություններ» տողում, իսկ վարկային ռեգիստրից ստացված տեղեկատվության համար վճարված գումարները՝ «Ծառայությունների դիմաց ստացվելիք (վճարվելիք) գումարներ» հոդվածում:

Հաշվետվության մեջ, համապատասխան սյունակներում, լրացվում է նաև տեղեկատվություն ակտիվների դուրսգրման և պարտքերի ներման վերաբերյալ: Յուրաքանչյուր նման գործառնություն վերածվում է ԱՄՆ դոլարի ձևակերպման օրվա հաշվարկային փոխարժեքով: Ընդ որում, ակտիվի դուրսգրման և վերադարձման, ինչպես նաև վարկերի ներման և վերադարձման հետ կապված գործառնությունները գրանցվում են զուտ տեսքով:

Հաշվետվության I մասի 4-րդ կետի՝ «Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր» բաժնի «Պասիվ» մասի վերաբերյալ մանրամասն տվյալները հավաքագրվում են սույն հաշվետվության II աղյուսակում: Հաշվետվության II աղյուսակը լրացվում է հետևյալ կերպ.

2-րդ սյունակում նշվում է վարկ տրամադրող ոչ ռեզիդենտի երկիրը: Այն դեպքում, երբ վարկը տրամադրված է միջազգային ֆինանսական կազմակերպության կողմից, սյունակում նշվում է կազմակերպության անունը (օրինակ, Միջազգային Ֆինանսական Կորպորացիա):

3-րդ սյունակում նշվում է վարկ տրամադրող ոչ ռեզիդենտի հատվածի պատկանելությունը՝ ըստ հետևյալ տառերի.

ա) Ֆ-ն ընդգրկում է ոչ ռեզիդենտ բանկերը, ապահովագրական ընկերությունները, ներդրումային հիմնադրամները, բորսաները, այլ ոչ բանկային ֆինանսական հաստատությունները,

բ) Ֆ՛-ն ընդգրկում է այլ պետությունների կենտրոնական բանկերը,

գ) Մ-ն ընդգրկում է միջազգային ֆինանսական կազմակերպությունները,

դ) Պ-ն ընդգրկում է այլ պետությունների կառավարությունները (կենտրոնական և տեղական մակարդակներով),

ե) Ի-ն ընդգրկում է Ֆ-ում և Պ-ում չներառված ոչ ռեզիդենտ կազմակերպությունները (այսինքն՝ պետական մասնակցությամբ կազմակերպությունները, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ պետական կազմակերպությունները, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող սուբյեկտները և շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունները):

4-րդ սյունակում նշվում է տնտեսության այն ճյուղը (ճյուղերը), որի ֆինանսավորմանն է ուղղվել ներգրավված վարկը: Տնտեսության ճյուղը լրացվում է՝ համաձայն

սույն կանոնակարգի թիվ 6 հաշվետվության մեջ նշված տնտեսության ճյուղերի դասակարգման:

5-րդ, 6-րդ սյուներում նշվում են վարկային պայմանագրում տվյալ արժույթով նշված վարկի գումարը և արժույթի՝ Ստանդարտների միջազգային կազմակերպության կոդը:

7-րդ սյունակում լրացվում է վարկային պայմանագրում նշված վարկի ներգրավման ժամկետը՝ հետևյալ ֆորմատով՝ 25/03/98:

8-րդ սյունակում լրացվում է վարկային պայմանագրում նշված վարկի մարման ժամկետը՝ հետևյալ ֆորմատով՝ 25/06/06:

9-րդ սյունակում նշվում է վարկի տոկոսադրույքը: Եթե, օրինակ, տոկոսադրույքը կազմում է ԼԻԲՕՐ գումարած 5%, ապա այն լրացվում է « ԼԻԲՕՐ+5»:

10-րդ սյունակում լրացվում է հաշվետու եռամսյակի սկզբի դրությամբ ինչպես ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության տնտեսությունում ըստ համապատասխան ուղղությունների դրանց տեղաբաշխված գումարների հաշվեկշռային մնացորդը՝ ըստ յուրաքանչյուր ճյուղի:

11-րդ սյունակում նշվում է հաշվետու եռամսյակի ընթացքում ներգրավված վարկի մասնաբաժինը կամ մասնաբաժինները (եթե վարկը տրամադրվում է մի քանի մասնաբաժնով) կամ վարկի ընդհանուր գումարը (եթե վարկը տրամադրվում է ամբողջությամբ):

12-րդ սյունակում լրացվում է հաշվետու եռամսյակում վարկի հիմնական գումարի մարմանն ուղղված վճարումների ծավալը (եթե վարկը մարվում է մի քանի մասնաբաժիններով): Տվյալ եռամսյակում հիմնական գումարի միանվագ մարումը նշվում է ամբողջ ծավալով:

13-րդ սյունակում լրացվում են հաշվետու եռամսյակում ներգրավված վարկի դիմաց հաշվեգրված (վճարվելիք) տոկոսագումարները:

14-րդ սյունակում լրացվում է եռամսյակի վերջի դրությամբ ինչպես ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության տնտեսությունում ըստ համապատասխան ուղղությունների դրանց տեղաբաշխված գումարների հաշվեկշռային մնացորդը՝ ըստ յուրաքանչյուր ճյուղի:

2-րդ աղյուսակի 11-րդ, 12-րդ և 13-րդ սյունակները լրացվում են միայն այն դեպքում, երբ առկա են տվյալ բանկի և ոչ ռեզիդենտի միջև կնքված վարկային պայմանագրով նախատեսված վարկերի մուտքեր, այդ վարկերի գծով հիմնական գումարի մարումներ, տոկոսագումարների վճարումներ: Ընդ որում, նշված հոդվածների գծով գործառնությունները պետք է լրացվեն վարկային պայմանագրով նախատեսված տվյալները ներկայացնող տողում: Մնացած դեպքերում, եթե բանկի կողմից տնտեսության տարբեր հատվածներին տրված վարկերը մարվել են տվյալ բանկին, ու դրանք նորից վերաբաշխվել են, ապա նշված գործառնությունները 11-րդ, 12-րդ և 13-րդ սյուներում չպետք է արտացոլվեն: Վերջին դեպքում բանկը պարզապես համապատասխան փոփոխություններ պետք է իրականացնի միայն 10-րդ և 14-րդ սյուներում՝ ըստ ճյուղերի վարկերի վերաբաշխման մեջ:

18-րդ հաշվետվության 1-ին և 2-րդ էջերում ընդգրկվող հաշիվները ներկայացված են համապատասխանաբար Աղյուսակ 39-ում և Աղյուսակ 40-ում:

Բանկի և ոչ ռեզիդենտների միջև իրականացվող գործառնությունների վերաբերյալ

Աղյուսակ 39

Հ/հ	Սյունակ	Ցուցանիշ	Ներառվող հաշիվները
		Ակտիվներ	
1	1	Կապիտալի արժեթղթեր / Ուղղակի ներդրումներ	1241 + 1242 + 1243 + 1541 + 1542 + 1543 + 2113 + 2114 + 2116 + 2118 + 2119 + 2123 + 2124 + 2126 + 2128 + 2130 (10% և ավելի փայամասնակցություն ոչ ռեզիդենտների մասով)
2	1	Կապիտալի արժեթղթեր / Ուղղակի ներդրումներ (շահաբաժիններ)	6111 + 6112 + 6113 + 6114 + 6115 (10% և ավելի փայամասնակցություն)
3	1	Կապիտալի արժեթղթեր / Պորտֆելային ներդրումներ	1241 + 1242 + 1243 + 1541 + 1542 + 1543 + 2113 + 2114 + 2116 + 2118 + 2119 + 2123 + 2124 + 2126 + 2128 + 2130 (մինչև 10% փայամասնակցություն ոչ ռեզիդենտների մասով)
4	1	Կապիտալի արժեթղթեր / Պորտֆելային ներդրումներ (շահաբաժիններ)	6111 + 6112 + 6113 + 6114 + 6115 (մինչև 10% փայամասնակցություն)

5	2	Պարտքային արժեթղթեր / Կարճաժամկետ	1231 + 1232 + 1234 + 1245 + 1246 + 1247 + 1531 + 1532 + 1534 + 1545 + 1546 + 1547 + 1712 + 1714 + 1716 + 1718 + 1721 + 1722 + (1723+ 1724) (ոչ ռեզիդենտ անձանց մասով) (պարտքային արժեթղթերի մասով)+ 203 + 204 (մինչև մեկ տարին ներառյալ մարման ժամկետ ունեցող արժեթղթերի մասով)
6	2	Պարտքային արժեթղթեր / Կարճաժամկետ (եկամուտներ և ծախսեր)	6084 + 6085 + 6086 (մինչև մեկ տարին ներառյալ մարման ժամկետ ունեցող արժեթղթերի մասով)
7	2	Պարտքային արժեթղթեր / Երկարաժամկետ	1231 + 1232 + 1234 + 1245 + 1246 + 1247 + 1531 + 1532 + 1534 + 1545 + 1546 + 1547 + 1712 + 1714 + 1716 + 1718 + 1721 + 1722 + (1723 + 1724) (ոչ ռեզիդենտ անձանց մասով) (պարտքային արժեթղթերի մասով)+ 203 + 204 (կարճաժամկետ չդասակարգված արժեթղթերի մասով)
8	2	Պարտքային արժեթղթեր / Երկարաժամկետ (եկամուտներ և ծախսեր)	6084 + 6085 + 6086 (կարճաժամկետ չդասակարգված արժեթղթերի մասով)
9	3	Կանխիկ դրամական միջոցներ	101 (արտարժույթի մասով)
10	4	Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր / Կարճաժամկետ	1268 + 1343 + 1344 + 1347 + 1348 + 1363 + 1364 + 1367 + 1368 + 1415 + 1416 + 1419 + 1420 + 1425 + 1426 + 1429 + 1430 + 1433 + 1434 + 1445 + 1446 + 1449 + 1450 + 1453 + 1454 + 1558 + 1614 + 1615 + 1616 + 1620 + 1621 + 1622 + 1626 + 1627 + 1628 + 1635 + 1636 + 1641 + 1642 + 1647 + 1648 + 1653 + 1654 + 1657 + 1658 + 1661 + 1662 + 167 (ոչ ռեզիդենտ աշխատակիցների մասով) + 1683 + 1684 + 1687 + 1688 + 1691 + 1692 + (1693 + 1694) (ոչ ռեզիդենտ բանկերի մասով) + 1712 + 1714 + 1716 + 1718 + 1721 + 1722 + (1723 + 1724) (ոչ ռեզիդենտ անձանց մասով) + 1863 + 2068 + 2069 + 2070 + 2814 (մինչև մեկ տարին ներառյալ մարման ժամկետ ունեցող ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի, այդ թվում՝ օվերդրաֆտների և վարկային քարտերի, ռեպո գործառնությունների, ֆակտորինգի, վարձակալության և արժութային սվոփի մասով)
11	4	Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր / Կարճաժամկետ (եկամուտներ և ծախսեր)	6003 + 6005 + 6007 + 6022 + 6024 + 6027 + 6032 + 6034 + 6042 + 6044 + 6046 + 6052 + 6054 + 6056 + 6058 + 6060 + 6062 + (6071 + 6072 + 6073) (ոչ ռեզիդենտ աշխատակիցների մասով)+ 6075 + 6077 + 6079 + 6092 + 6414 (մինչև մեկ տարին ներառյալ մարման ժամկետ ունեցող ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի, այդ թվում՝ օվերդրաֆտների և վարկային քարտերի, ռեպո գործառնությունների, ֆակտորինգի, վարձակալության և արժութային սվոփի մասով)
12	4	Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր / Երկարաժամկետ	1268 + 1343 + 1344 + 1347 + 1348 + 1363 + 1364 + 1367 + 1368 + 1415 + 1416 + 1419 + 1420 + 1425 + 1426 + 1429 + 1430 + 1433 + 1434 + 1445 + 1446 + 1449 + 1450 + 1453 + 1454 + 1558 + 1614 + 1615 + 1616 + 1620 + 1621 + 1622 + 1626 + 1627 + 1628 + 1635 + 1636 + 1641 + 1642 + 1647 + 1648 + 1653 + 1654 + 1657 + 1658 + 1661 + 1662 + 167 (ոչ ռեզիդենտ աշխատակիցների մասով) + 1683 + 1684 + 1687 + 1688 + 1691 + 1692 + (1693 + 1694) (ոչ ռեզիդենտ բանկերի մասով) + 1712 + 1714 + 1716 + 1718 + 1721 + 1722 + (1723 + 1724) (ոչ ռեզիդենտ անձանց մասով) + 1863 + 2068 + 2069 + 2070 + 2814 (կարճաժամկետ չդասակարգված ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի, այդ թվում՝ օվերդրաֆտների և վարկային քարտերի, ռեպո գործառնությունների, ֆակտորինգի, վարձակալության և արժութային սվոփի մասով)
13	4	Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր / Երկարաժամկետ (եկամուտներ և ծախսեր)	6003 + 6005 + 6007 + 6022 + 6024 + 6027 + 6032 + 6034 + 6042 + 6044 + 6046 + 6052 + 6054 + 6056 + 6058 + 6060 + 6062 + (6071 + 6072 + 6073) (ոչ ռեզիդենտ աշխատակիցների մասով)+ 6075 + 6077 + 6079 + 6092 + 6414 (կարճաժամկետ չդասակարգված ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի, այդ թվում՝ օվերդրաֆտների և վարկային քարտերի, ռեպո գործառնությունների, ֆակտորինգի, վարձակալության և արժութային սվոփի մասով)
14	5	Ավանդներ / Կարճաժամկետ	1033 + 1034 + 1035 + 1036 + 1037 + 1043 + 1044 + 1045 + 1322 + 1324 + 1326 + 1327 + 1328 + 1329 + 1332 + 1334 + 1336 + 1337 + 1338 + 1339 + 1381 + 1383 + 1392 + 1394 + 1403 + 1405 + 1712 + 1714 + 1716 + 1718 + 1723 (ոչ ռեզիդենտ անձանց մասով) + 2915 (մինչև մեկ տարին ներառյալ մարման ժամկետ ունեցող ոչ ռեզիդենտներին տրամադրված ավանդների և թղթակցային հաշիվների մասով)
15	5	Ավանդներ / Կարճաժամկետ (եկամուտներ և ծախսեր)	6013 + 6016 + 6018 (մինչև մեկ տարին ներառյալ մարման ժամկետ ունեցող ավանդների և թղթակցային հաշիվների մասով)
16	5	Ավանդներ / Երկարաժամկետ	1324 + 1326 + 1328 + 1329 1334 + 1336 + 1338 + 1339 + 1381 + 1383 + 1392 + 1394 + 1403 + 1405 + 1712 + 1714 + 1716 + 1718 + 1723 (ոչ ռեզիդենտ անձանց մասով) + 2915 (կարճաժամկետ չդասակարգված ոչ ռեզիդենտներին տրամադրված ավանդների և թղթակցային հաշիվների մասով)

17	5	Ավանդներ / Երկարաժամկետ (եկամուտներ և ծախսեր)	6016 + 6018 (կարճաժամկետ չդասակարգված ոչ ռեզիդենտներին տրամադրված ավանդների և թղթակցային հաշիվների մասով)
18	6	Ծառայությունների դիմաց ստացվելիք (վճարվելիք) գումարներ	1830 + 1840 (ծառայությունների դիմաց ստացվելիք գումարների մասով) + 1883 + 1884 + 1886 + 1961(ոչ ռեզիդենտների մասով)
19	6	Ծառայությունների դիմաց ստացվելիք (վճարվելիք) գումարներ / եկամուտներ և ծախսեր	6029 + 6412 (ծառայությունների դիմաց ստացվելիք գումարների մասով) + 6312 + 6315 + 6412 (ծառայությունների դիմաց ստացված վճարների մասով)
20	7	Այլ գործառնությունների դիմաց ստացվելիք (վճարվելիք) գումարներ	1812 + 1829 + 1830 (հաշվեգրված տոկոսագումարների մասով)+ 1839 + 1840 (հաշվեգրված տոկոսագումարների մասով) +1873+1874+1876+1878+1880+1894 + 1898 + 1899 + 1914 + 1924 + 2919 + (127+190) հաշիվներ ոչ ռեզիդենտների գծով
21	7	Այլ գործառնությունների դիմաց ստացվելիք (վճարվելիք) գումարներ / եկամուտներ և ծախսեր	6029 + 6101 + 6411 + 6412 (վճարված տոկոսների մասով) + 6419 + 6423 + 6424 + 6425 + 6433 + 6434 + 6511 (ոչ ռեզիդենտներից ստացված եկամուտների մասով)
			Պասիվ
22	1	Կապիտալի արժեթղթեր / Ուղղակի ներդրումներ	501 + 502 + 503 + 504 (ոչ ռեզիդենտների 10% և ավելի փայամասնակցության մասով)
23	1	Կապիտալի արժեթղթեր / Ուղղակի ներդրումներ (շահաբաժիններ)	հայտարարված շահաբաժինների քանակը (ոչ ռեզիդենտների 10% և ավելի փայամասնակցության մասով)
24	1	Կապիտալի արժեթղթեր / Պորտֆելային ներդրումներ	501 + 502 + 503 + 504 (ոչ ռեզիդենտների մինչև 10% փայամասնակցության մասով)
25	1	Կապիտալի արժեթղթեր / Պորտֆելային ներդրումներ (շահաբաժիններ)	հայտարարված շահաբաժինների քանակը (ոչ ռեզիդենտների մինչև 10% փայամասնակցության մասով)
26	2	Պարտքային արժեթղթեր / Կարճաժամկետ	351 + 352 + 353 + 3541 + 355 (ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված մինչև մեկ տարին ներառյալ մարման ժամկետ ունեցող արժեթղթերի մասով)
27	2	Պարտքային արժեթղթեր / Կարճաժամկետ (եկամուտներ և ծախսեր)	7111 (ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված մինչև մեկ տարին ներառյալ մարման ժամկետ ունեցող արժեթղթերի մասով)
28	2	Պարտքային արժեթղթեր / Երկարաժամկետ	351 + 352 + 353 + 3541 + 355 (ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված կարճաժամկետ չդասակարգված արժեթղթերի մասով)
29	2	Պարտքային արժեթղթեր / Երկարաժամկետ (եկամուտներ և ծախսեր)	7111 (ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված կարճաժամկետ չդասակարգված արժեթղթերի մասով)
30	4	Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր / Կարճաժամկետ	3143 + 3144 + 3147 + 3148 + 3233 + 3234 + 3235 + 3236 + 3245 + 3246 + 3249 + 3250 + 3265 + 3266 + 3269 + 3270 + 3274 + 3275 + 3276 + 3285 + 3286 + 3289 + 3290 + 3293 + 3294 + 3643 + 3646 + 4212 + 4214 (մինչև մեկ տարին ներառյալ մարման ժամկետ ունեցող վարկերի, այդ թվում՝ օվերդրաֆտների և վարկային քարտերի, ռեպո գործառնությունների, ֆակտորինգի, վարձակալության և արժութային սվոփի մասով)
31	4	Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր / Կարճաժամկետ (եկամուտներ և ծախսեր)	7084 + 7086 + 7088 + 7089 + 7093 + 7103 + 7105 + 7107 + 7113 + 7315 (մինչև մեկ տարին ներառյալ մարման ժամկետ ունեցող վարկերի, այդ թվում՝ օվերդրաֆտների և վարկային քարտերի, ռեպո գործառնությունների, ֆակտորինգի, վարձակալության և արժութային սվոփի մասով)
32	4	Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր / Երկարաժամկետ	3127 + 3128 + 3143 + 3144 + 3147 + 3148 + 3233 + 3234 + 3235 + 3236 + 3245 + 3246 + 3249 + 3250 + 3265 + 3266 + 3269 + 3270 + 3274 + 3275 + 3276 + 3285 + 3286 + 3289 + 3290 + 3293 + 3294 + 3643 + 3646 + 4212 + 4214 (կարճաժամկետ չդասակարգված ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերի, այդ թվում՝ օվերդրաֆտների և վարկային քարտերի, ռեպո գործառնությունների, ֆակտորինգի, վարձակալության և արժութային սվոփի մասով)
33	4	Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր / Երկարաժամկետ (եկամուտներ և ծախսեր)	7026 + 7084 + 7086 + 7088 + 7089 + 7093 + 7103 + 7105 + 7107 + 7113 +7315 (կարճաժամկետ չդասակարգված ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերի, այդ թվում՝ օվերդրաֆտների և վարկային քարտերի, ռեպո գործառնությունների, ֆակտորինգի, վարձակալության և արժութային սվոփի մասով)
34	5	Ավանդներ / Կարճաժամկետ	3113 + 3114 + 3123 + 3124 + 3127 + 3128 + 3152 + 3213 + 3214 + 3217 + 3218 + 3315 + 3316 + 3319 + 3320 + 3323 + 3324 + 3326 + 3328 + 3329 (ոչ ռեզիդենտների մասով) + 3333 + 3334 + 3339 + 3340 + 3343 + 3344 + 3346 + 3347 + 3348 + 3354 + 3355 + 3356 + 3361 + 3362 + 3365 + 3366 + 3367 + 3368 + 3712 + 3724 (մինչև մեկ տարի մարման ժամկետ ունեցող ոչ ռեզիդենտներին տրամադրված ավանդների և թղթակցային հաշիվների մասով)

35	5	Ավանդներ / Կարճաժամկետ (եկամուտներ և ծախսեր)	7012 + 7022 + 7024 + 7026 + 7028 + 7042 + 7044 + 7046 + 7048 + 7050 + 7052 + 7054 + 7055 + 7062 + 7064 + 7066 + 7067 (միևչև մեկ տարի մարման ժամկետ ունեցող ոչ ռեզիդենտներին տրամադրված ավանդների և թղթակցային հաշիվների մասով)
36	5	Ավանդներ / Երկարաժամկետ	3217 + 3218 + + 3354 + 3355 + 3356 + 3361 + 3362 + 3365 + 3366 + 3367 + 3368 + 3712 + 3724 (կարճաժամկետ չդասակարգված ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների մասով)
37	5	Ավանդներ / Երկարաժամկետ (եկամուտներ և ծախսեր)	7012 + 7022 + 7024 + 7028 + 7042 + 7044 + 7046 + 7048 + 7050 + 7052 + 7054 + 7055 + 7062 + 7064 + 7066 + 7067 (կարճաժամկետ չդասակարգված ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների մասով)
38	6	Ծառայությունների դիմաց ստացվելիք (վճարվելիք) գումարներ	3632 + 3693 (ոչ ռեզիդենտների մատուցած ծառայությունների դիմաց վճարների մասով)
39	6	Ծառայությունների դիմաց ստացվելիք (վճարվելիք) գումարներ / եկամուտներ և ծախսեր	7312 + 7314 + 7421 + 7425 + 7426 + 7428 + 7433 + 7441 (ոչ ռեզիդենտների մասով)
40	7	Այլ գործառնությունների դիմաց ստացվելիք (վճարվելիք) գումարներ	3612 + 3693 + 3694 + 3722 + 3812 + 3835 + 3837 + 3841
41	7	Այլ գործառնությունների դիմաց ստացվելիք (վճարվելիք) գումարներ / եկամուտներ և ծախսեր	7115 + 7313 + 7315 + 7316 + 7422 +7423 + 7424 + 7429 + 7430 + 7431 + 7432 + 7434 + 7442 + 7443 + 7444 + 7513 + 7514 + 7515 + 7525 + 7526 + 7531

Ոչ ռեզիդենտներից վարկերի ներգրավման և սպասարկման վերաբերյալ

Աղյուսակ 39

Հ/հ	Սյունակ	Ցուցանիշ	Ներառվող հաշիվները
1	13	Տոկոսագումար	(7084 + 7086 + 7088 + 7089 + 7093) (հաշվետու եռամսյակի ընթացքում հաշվեգրված)
2	14	Ներգրավված վարկերի հաշվեկշռային մնացորդը եռամսյակի վերջին	3143 + 3147 + 3233 + 3235 + 3245 + 3249 + 3265 + 3269 + 3274 + 3275 + + 3643 + 3646

21. Թիվ 19 (օրական) հաշվետվությունը լրացնում են արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնող բանկերը:

Ֆայլի անվանումը պետք է ունենա թվային «թթթթթ_19.xls» ֆորմատը, որտեղ թթթթթ-ն հաշվետվությունն ուղարկող բանկի թվային կոդն է, 19-ը՝ թիվ 19 հաշվետվության նույնացուցիչը:

Թիվ 19 (օրական) հաշվետվությունը կազմելիս պետք է հետևել աղյուսակում բերված կանոններին.

Հ/հ	Անվանում	Տեսք
1	Բանկի կոդը և անվանումը	5թ և 50տթ
2	Ամսաթիվը	2թ/2թ/2թ
3	Ժամանակահատվածը	1
4	Գրառման համարը (No)	2թ
5	Գործարքի տեսակը	1թ/1թ/[1թ]
6	Գործարքի արժույթները (սակարկվող/գնաճշող)	3տ/3տ
7	Առքի ծավալը (արտարժույթով)	թվային
8	Առքի միջին կշռված փոխարժեքը	թվային
9	Վաճառքի ծավալը (արտարժույթով)	թվային
10	Վաճառքի միջին կշռված փոխարժեքը	թվային

Աղյուսակի պարզաբանումներ

Աղյուսակում ընդունված են հետևյալ նշանակումները՝

տթ - տառաթվային, թ - թվային, տ - տառային, թ - տվյալը պետք է պարտադիր ներկայացված լինի նշված քանակի նիշերով:

Ամսաթիվը պետք է լրացված լինի «օր/ամիս/տարի» տեսքով: Այն դեպքերում, երբ բանկն աշխատել է հանգստյան կամ տոն օրերին, ապա այդ օրերին իրականացված

գործառնությունների վերաբերյալ տվյալները գրանցվում են որպես հանգստյան կամ տոն օրվան նախորդող աշխատանքային օրվա ժ. 14:30-ից հետո իրականացված գործարքներ:

«Ժամանակահատվածը» տողի վրա մուտքագրվում է միայն 1՝ մինչև ժ. 14:30 տեղեկությունների համար:

«Գործարքի տեսակը» սյունակում լրացվում է գործարքի կոդը, որը բաղկացած է երեք պարամետրերից և ունի հետևյալ տեսքը՝ «1թ/1թ/[1թ]», որտեղ առաջին պարամետրը ցուցադրում է, թե ում միջև է կատարվել գործարքը, և այն կարող է ունենալ հետևյալ արժեքները՝

«1» - միջբանկային գործառնություններ

«2» - բորսայում իրականացված գործառնություններ

«3» - ներբանկային գործառնություններ:

Երկրորդ պարամետրը ցույց է տալիս գործարքի տեսակը և կարող է ունենալ հետևյալ արժեքները՝

«1» - սփոթ տեսակի գործառնություններ

«2» - սվոփ տեսակի գործառնություններ (արժութային սվոփ, ֆորվարդ, ֆյուչերս, օպցիոն):

Երրորդ պարամետրը ցույց է տալիս գործարքի մասնակցի տեսակը. «1» - ռեզիդենտների համար (ինչպես նաև չլրացնելու դեպքում), «2» - ոչ ռեզիդենտների համար:

Միջբանկային «սփոթ» և «սվոփ» տիպի գործառնությունները ոչ ռեզիդենտների հետ պետք է ներկայացնել «3/1/2» կամ համապատասխանաբար «3/2/2» կոդերում:

Օրինակ՝ 3/2/2 ոչ ռեզիդենտի հետ իրականացված ներբանկային սվոփ տիպի գործարք:

«3/1/1» կոդի տակ պետք է ներկայացնել նաև ներքին արժութային շուկայում բաժնետոմսերի միջոցով իրականացված փոխարկումների ծավալները:

«Գործարքի արժույթներ» սյունակը պետք է լրացվի տարադրամների ISO կոդերի տեսքով, անգլերեն տառերով՝ օգտագործելով «/» նշանը որպես բաժանիչ առանց չակերտների, օրինակ՝ USD/AMD, ընդ որում, համարիչում գրվում է սակարկվող արժույթի նշանը, հայտարարում՝ գնանշող:

«Առքի ծավալ» և «Վաճառքի ծավալ» սյունակներում լրացվում են, համապատասխանաբար, գնվող և վաճառվող (սակարկվող) արժույթների ծավալները:

««Առքի միջին կշռված փոխարժեք» և «Վաճառքի միջին կշռված փոխարժեք» սյունակներում, համապատասխանաբար, լրացվում են տվյալ տիպի գործարքի միջին կշռված փոխարժեքները՝ յուրաքանչյուր արտարժույթի տեսակի գծով, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՄՓառք = (ԱԾ1*ԱՓ1+ԱԾ2*ԱՓ2+...+ԱԾn*ԱՓn) / (ԱԾ1+ԱԾ2+...+ԱԾn),$$

$$ՄՓվաճառք = (ՎԾ1*ՎՓ1+ՎԾ2*ՎՓ2+...+ՎԾn*ՎՓn) / (ՎԾ1+ՎԾ2+...+ՎԾn),$$

որտեղ՝

ՄՓառք (ՄՓվաճառք) - առքի (վաճառքի) միջին փոխարժեք,

ԱԾi (ՎԾi) - «i»-րդ գործարքի առքի (վաճառքի) ծավալ,

ԱՓi (ՎՓi) - «i»-րդ գործարքի առքի (վաճառքի) փոխարժեք,

«i» - փոփոխական թիվ, որը փոխվում է 1-ից «n»:

Սույն հաշվարկը կատարվում է արտարժույթի յուրաքանչյուր տեսակի համար, որով գործարք է կատարվել:

Փոխարժեքները պետք է ներկայացվեն սակարկվող արժույթի ուղիղ գնանշման տեսքով, այսինքն՝ ցույց տան արտարժույթի փոխարժեքը 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ, բացառությամբ՝ անգլիական ֆունտ ստեռլինգի և եվրոյի փոխարժեքների:

Մուտքագրվող տեղեկությունները չպետք է ընդհատվեն և պարունակեն դատարկ տողեր:

Սփոթ տիպի գործարքները հաշվետվության մեջ գրանցվում են գործարքի կնքման օրը:

22. Թիվ 20 հաշվետվությունը լրացվում է հետևյալ կերպ.

1. «Հաճախորդներ և նրանց հաշիվներ» աղյուսակում բոլոր տվյալները բերվում են հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ:

«Իրավաբանական անձինք» տողում բերվում են տվյալներ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց (բացի բանկերից) և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ, որոնք տվյալ բանկի հետ կնքել են բանկային հաշվի սպասարկման պայմանագիր և տվյալ բանկում ունեն բանկային, ժամկետային ավանդային և/կամ վարկային

(տրամադրված վարկի սպասարկման նպատակով բացված) այլ հաշիվներ: Այն իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալները, որոնք չունեն բանկի հետ կնքած բանկային հաշվի պայմանագիր, սակայն օգտվում են բանկի վարկային ծրագրերից (օրինակ հաճախորդներ, որոնք բանկի միջոցով ձեռք են բերել ապրանքներ ապառիկ եղանակով)՝ չեն ներկայացվում այս աղյուսակում:

«Ֆիզիկական անձինք» տողում բերվում են տվյալներ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց վերաբերյալ, որոնք տվյալ բանկի հետ կնքել են բանկային հաշվի սպասարկման պայմանագիր և տվյալ բանկում ունեն ցպահանջ ավանդային, ժամկետային ավանդային և/կամ այլ բանկային հաշիվներ: Այն ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ հաճախորդների տվյալները, որոնք չունեն բանկի հետ կնքած բանկային հաշվի պայմանագիր, սակայն օգտվում են բանկի վարկային ծրագրերից (օրինակ, հաճախորդներ, որոնք բանկի միջոցով ձեռք են բերել ապրանքներ ապառիկ եղանակով) և չունեն տվյալ բանկում բացված այլ ցպահանջ ավանդային և բանկային հաշիվներ (դրամով և արտարժույթով հաշվարկային հաշիվներ, քարտային հաշիվներ, չեկային հաշիվներ, հաշվարկների իրականացման համար նախատեսված այլ բանկային հաշիվներ) այս աղյուսակում չեն ներկայացվում:

«Հաճախորդների քանակը» սյունակում նշվում է տվյալ բանկում սպասարկվող այն անհատ ձեռնարկատերերի, իրավաբանական (բացի բանկերից) և ֆիզիկական անձանց քանակը, որոնք տվյալ բանկում ունեն բանկային, ցպահանջ ավանդային, ժամկետային ավանդային և/կամ վարկային հաշիվներ, որոնք բավարարում են ստորև ներկայացված պահանջները:

«Բանկային/ցպահանջ ավանդային հաշիվների քանակը» սյունակում նշվում են անհատ ձեռնարկատերերի, իրավաբանական (բացի բանկերից) և ֆիզիկական անձանց անունով բացված այն բանկային/ ցպահանջ ավանդային հաշիվները (դրամով և արտարժույթով հաշվարկային հաշիվներ, քարտային հաշիվներ, չեկային հաշիվներ, հաշվարկների իրականացման համար նախատեսված այլ բանկային հաշիվներ), որոնցով տեղի է ունեցել միջոցների շարժ (ոչ վերագնահատման շարժ) վերջին 1 տարվա ընթացքում:

«Վարկային հաշիվների քանակը» սյունակում նշվում է հաճախորդների՝ անհատ ձեռնարկատերերի, իրավաբանական (բացի բանկերից) և ֆիզիկական անձանց անունով բացված վարկային հաշիվների քանակը: Ընդ որում, «Հաճախորդներ և նրանց հաշիվներ» աղյուսակում չեն ընդգրկվում օվերդրաֆտների տրամադրման հետ կապված հաշվապահական գրառումները:

«Ժամկետային ավանդային հաշիվների քանակը» սյունակում նշվում են անհատ ձեռնարկատերերի, իրավաբանական (բացի բանկերից) և ֆիզիկական անձանց անունով բացված ժամկետային ավանդների (դրամով և արտարժույթով) հաշիվները, որոնց վրա առկա է մնացորդ:

(Օրինակ, եթե նույն հաճախորդը տվյալ բանկում ունի մեկ հաշվարկային, երկու բանկային և երեք տարբեր ժամկետներով ավանդային հաշիվներ, ապա այդ հաճախորդը կհամարվի մեկ անձ և «Հաճախորդների քանակը» սյունակում կհաշվառվի որպես մեկ հաճախորդ, հակառակը, եթե մի հաշիվը պատկանում է երեք անձանց (միասնական հաշիվ), ապա «Հաճախորդների քանակը» սյունակում կգրանցվի երեք հաճախորդ):

2) «Հայաստանի Հանրապետության տարածքում փոխանցումներ» աղյուսակում բերվում են հաշվետու ժամանակահատվածի ընթացքում իրականացված վճարումների քանակն[*] ու գումարը՝ ըստ այդ վճարումները նախաձեռնելու (ստացողի բանկին/մասնաճյուղին ուղարկելու) եղանակի՝ թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

«Հայաստանի Հանրապետության տարածքում փոխանցումներ» աղյուսակում փոխանցումները դիտարկվում են ըստ առանձին հոսքերի՝ ուստի այն տրոհված է «Ներբանկային փոխանցումները» և «Կենտրոնական բանկից դուրս թղթակցային հաշիվներով իրականացված փոխանցումներ ՀՀ տարածքում» ենթամասերի:

«Ներբանկային փոխանցումները» բաժնում լրացվում են տվյալ բանկի ներսում՝ մասնաճյուղի/գլխամասի ներսում, մասնաճյուղերի միջև և գլխամաս-մասնաճյուղ հատվածում կատարված անկանխիկ այն փոխանցումները, որոնց վճարողը և շահառուն (որոնք հանդիսանում են բանկի ոչ բանկ հաճախորդները) սպասարկվում են տվյալ բանկի տարբեր մասնաճյուղերում կամ գլխամասում ու մասնաճյուղում: Ընդ

[*] *Եթե վճարումները կատարվում են փաթեթներով կամ հավաքական վճարային փաստաթղթերով/հաղորդագրություններով, ապա որպես քանակ պետք է հշվի վերջիններիս մեջ ընդգրկված վճարումների քանակը:*

որում, երբ վճարողը և շահառուն սպասարկվում են բանկի գլխամասում և մասնաճյուղում կամ բանկի տարբեր մասնաճյուղերում, ապա, ըստ բանկի կողմից հաճախորդից ընդունված հանձնարարականի կատարման (մշակման) եղանակի, նշվում է իրականացված ներբանկային վճարումների ծավալը և քանակը:

«Հայաստանի Հանրապետության տարածքում փոխանցումներ» աղյուսակի «Ներբանկային փոխանցումները» բաժնի «թղթային» տողում բերվում են այն ներբանկային կարգադրությունները, որոնք ընդունվել են, մշակվել/կատարվել են թղթային եղանակով: Ընդ որում, հաճախորդների միջև թղթային հանձնարարականով ներկայացված ներբանկային վճարումները նշվում են «թղթային» տողում նաև այն ներբանկային փոխանցումների դեպքում, երբ վճարողը և շահառուն սպասարկվում են բանկի միևնույն մասնաճյուղում կամ գլխամասում:

Էլեկտրոնային եղանակ են համարվում այն փոխանցումները, որոնք ներկայացվել են էլեկտրոնային եղանակով (այդ թվում՝ «Բանկ-հաճախորդ» համակարգով) և բանկի կողմից մշակվել և կատարվել են ոչ թղթային եղանակով: Էլեկտրոնային եղանակով փոխանցումները համապատասխանաբար լրացվում են «Բանկի ներքին էլեկտրոնային համակարգ/ցանց» տողում կամ «ՀՀ ԿԲ էլեկտրոնային վճարումների համակարգ» տողում՝ ըստ այդ տողերի լրացման պահանջի:

«Բանկի ներքին էլեկտրոնային համակարգ/ցանց» տողում նշվում են բանկի կողմից շահագործվող ներքին համակարգերով, ցանցով (հաճախորդների հանձնարարականների հիման վրա) իրականացված ներբանկային փոխանցումները: Եթե տվյալ մասնաճյուղի և բանկի գլխամասի միջև առկա է կապ, որը հնարավորություն է տալիս գործունեությունը ծավալել իրական ժամանակի ռեժիմով (on-line), ապա այս տողում նշվում են նաև այդ եղանակով կատարված ներբանկային փոխանցումները: Այս տողում ընդգրկվում են նաև բանկի կողմից էլեկտրոնային փոստով իրականացված ներբանկային փոխանցումները (օր. Լոտուսի, ինտերնետի միջոցով կատարված փոխանցումները): Եթե բանկի կողմից շահագործվում է «Բանկ-հաճախորդ» համակարգ, ապա այդ համակարգերով հաճախորդների կողմից իրականացված ներբանկային փոխանցումները, երբ վճարողը և շահառուն սպասարկվում են բանկի միևնույն մասնաճյուղում կամ գլխամասում, նույնպես նշվում է «Բանկի ներքին էլեկտրոնային համակարգ/ցանց» տողում:

Տվյալ բանկի ներսում հաճախորդի կողմից իր մի հաշվից միջոցների տեղափոխումն իրեն պատկանող մեկ այլ բանկային հաշվին չպետք է ընդգրկել «Ներբանկային փոխանցումներ» բաժնում: Բանկի հետ հաճախորդի արտարժութային փոխարկումների հետևանքով առաջացած դրամական միջոցների փոխանցումները չեն ընդգրկվում աղյուսակում: Բանկի և իր կողմից սպասարկվող ոչ բանկ հաճախորդի միջև իրականացված վճարումները լրացվում են «Հայաստանի Հանրապետության տարածքում տարբեր վճարային գործիքներով իրականացված վճարումներ» աղյուսակում՝ ըստ վերջինիս լրացման կարգի:

«Կենտրոնական բանկից դուրս թղթակցային հաշիվներով իրականացված փոխանցումներ Հայաստանի Հանրապետության տարածքում» բաժնում ընդգրկվում են ՀՀ տարածքում գործող բանկերի միջև հաշվետու բանկի կողմից նախաձեռնված «լորո/նոստրո» հաշիվներով ՀՀ տարածքում իրականացվող այն վճարումները, որոնք կատարվել են տվյալ բանկի (այդ թվում՝ մասնաճյուղերի) ոչ բանկ հաճախորդների, ինչպես նաև տվյալ բանկի անունից: Ընդ որում, վճարումները դիտարկվում են բանկի կողմից ըստ վճարումները նախաձեռնելու (ստացողի բանկին/մասնաճյուղին ուղարկելու) եղանակի՝ թղթային կամ որևէ էլեկտրոնային եղանակով: Սույն բաժնում բացառություն են կազմում արտասահման ուղղված փոխանցումները, ինչպես նաև արտասահմանից ստացված միջոցները որպես միջնորդ բանկ՝ ՀՀ տարածքում գործող այլ բանկի «լորո/նոստրո» հաշիվներով կատարված փոխանցումները, որոնց վերաբերյալ տվյալները ներկայացնում են «Արտասահմանյան փոխանցումներ» աղյուսակում՝ վերջինիս լրացման պահանջներին համապատասխան:

«Հայաստանի Հանրապետության տարածքում փոխանցումներ» աղյուսակի «Կենտրոնական բանկից դուրս թղթակցային հաշիվներով իրականացված փոխանցումներ Հայաստանի Հանրապետության տարածքում» բաժնի «թղթային» տողում կնշվեն տվյալ բանկի (այդ թվում՝ մասնաճյուղերի) ոչ բանկ հաճախորդների, ինչպես նաև տվյալ բանկի անունից կատարված այն միջբանկային փոխանցումները, որոնք բանկի կողմից նախաձեռնվել/կատարվել են (ստացողի բանկին/մասնաճյուղին ներկայացվել է) թղթային եղանակով:

«էլեկտրոնային փոստ» տողում նշվում են բանկի կողմից էլեկտրոնային փոստով իրականացված միջբանկային փոխանցումները (օր. Լոտուսի միջոցով կատարված փոխանցումները):

«ՀՀ ԿԲ էլեկտրոնային վճարումների համակարգ»-ով փոխանցումները ենթադրում են վճարումը նախաձեռնող բանկի կողմից «Բանկմեյլ» համակարգով առաքված վճարումները, ըստ ներբանկային և միջբանկային ենթամասերի տարանջատման: Ընդ որում, հավաքական հաղորդագրությունների (ռեեստրի) կիրառման դեպքում քանակը սյունակում պետք է նշվի այդ հաղորդագրություններում ընդգրկված հանձնարարականների քանակը:

Երբ բանկի կողմից վճարումներ իրականացնելու համար շահագործվում է որևէ այլ համակարգ, կամ օգտագործվում է որևէ այլ տեխնիկածրագրային միջոց (օրինակ՝ ֆաքս, տելեքս և այլն), ապա «Հայաստանի Հանրապետության տարածքում փոխանցումներ» աղյուսակում առանձին - առանձին նշվում են այդ միջոցներով և համակարգերով իրականացված վճարումները, որոնք, ըստ աղյուսակի լրացման, տարանջատվում են ներբանկային և միջբանկային ենթամասերի:

«Կենտրոնական բանկում վարվող թղթակցային հաշիվներով փոխանցումներ» են համարվում ՀՀ կենտրոնական բանկում թղթակցային հաշիվներով իրականացված փոխանցումներն ըստ վճարային համակարգերի, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը չպետք է ներկայացվի:

3) «Արտասահմանյան փոխանցումներ» աղյուսակում ընդգրկվում են բանկի կողմից շահագործվող միջազգային փոխանցումների առանձին համակարգերով (օրինակ՝ «Վեսթերն Յունիոն», «Մանի Գրեմ» և այլ համակարգեր) կատարված փոխանցումների և ստացումների գումարն ու քանակը (գումարը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ ըստ ամսվա վերջին օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքի): Եթե բանկի կողմից արտասահմանյան փոխանցումներ կատարելու համար չի շահագործվում որևէ վճարային համակարգ, այլ փոխանցումները իրականացվում են թղթակցային հաշիվներով՝ օգտագործելով որևէ տեխնիկածրագրային միջոց (օրինակ՝ ՍՎԻՖԹ, տելեքս, ֆաքս և այլն), ապա այդ փոխանցումները նշվում են «Փոխանցումներ այլ միջոցներով՝ բանկի թղթակցային հաշիվներով» տողում: Աղյուսակի յուրաքանչյուր տողում նշված փոխանցումները չեն կրկնվում մյուս տողերում նշվող տեղեկատվության հետ:

Աղյուսակում վճարային հոսքերը բաժանվում են նաև ըստ նախաձեռնող կողմի՝ «Բանկեր», «Ոչ-բանկ իրավաբանական անձ հաճախորդներ» և «Ֆիզիկական անձ հաճախորդներ» սյունակների: Ըստ նշված սյունակների տարանջատման՝ ներկայացվող համապատասխան տվյալները չպետք է կրկնվեն այլ սյունակներում:

Աղյուսակի «Բանկեր» սյունակում լրացվում են՝ ըստ համակարգերի բանկ հաճախորդների հանձնարարության և բանկի սեփական նախաձեռնության իրականացված և վերջիններիս ուղղված միջազգային փոխանցումները:

Աղյուսակի «Ոչ-բանկ իրավաբանական անձ հաճախորդներ» սյունակում լրացվում են ոչ բանկ իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների կողմից իրականացված և վերջիններիս ուղղված միջազգային փոխանցումները՝ ըստ առանձին համակարգերի:

Աղյուսակի «Ֆիզիկական անձ հաճախորդներ» սյունակում լրացվում է ֆիզիկական անձանց կողմից իրականացված և վերջիններիս ուղղված միջազգային փոխանցումները՝ ըստ առանձին համակարգերի:

«Անվանումը» սյունակում նշվող յուրաքանչյուր համակարգի տողի համար, ըստ աղյուսակում տարանջատված համապատասխան՝ «Բանկեր», «Ոչ-բանկ իրավաբանական անձ հաճախորդներ» և «Ֆիզիկական անձ հաճախորդներ» սյունակների, բերվում են տվյալներ.

«ուղարկված» ենթասյունակներում նշվում են դեպի արտասահման կատարված փոխանցումները, որտեղ ընդգրկվում են բանկի սեփական, ինչպես նաև միայն տվյալ բանկի հաճախորդների (բանկ, ոչ-բանկ իրավաբանական հաճախորդների, Ֆիզիկական անձանց) անունից կատարված փոխանցումները, որոնք տարանջատվում են ըստ վերը նշված սյունակների և նշվում դրանց համապատասխան մասում: Աղյուսակում բացառություն են կազմում որպես միջնորդ օղակ արտասահմանից ստացված և անմիջապես արտասահման փոխանցված միջոցները: Եթե հաշվետու առևտրային բանկը ներկայացնում է հանձնարարական մեկ այլ առևտրային բանկին միջազգային փոխանցում կատարելու նպատակով, ապա այդ փոխանցումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում է հանձնարարականը կատարող բանկը,

«ստացված» ենթասյունակներում նշվում են արտասահմանից ստացումները, որտեղ ընդգրկվում են բանկի սեփական, ինչպես նաև միայն տվյալ բանկի հաճախորդների (ոչ-բանկ իրավաբանական անձ հաճախորդների, ֆիզիկական անձանց) անունով կատարված ստացումները, որոնք տարանջատվում են ըստ վերը նշված սյունակների և նշվում դրանց համապատասխան մասում: Աղյուսակում բացառություն են կազմում որպես միջնորդ օղակ արտասահմանից ստացված և անմիջապես ՀՀ տարածքում գործող մեկ այլ բանկի փոխանցված միջոցները: Եթե հաշվետու առևտրային բանկը ստանում է հանձնարարական արտասահմանից, որպեսզի ստացված միջոցները մուտքագրի իր մոտ սպասարկվող առևտրային բանկի հաշվին, ապա այդ ստացումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում է շահառուին վճարումը ապահովող (շահառուի հաշվին միջոցները մուտքագրող/շահառուին կանխիկ վճարող) բանկը:

Եթե բանկի կողմից շահագործվում է վճարային համակարգ (օրինակ՝ «Անելիք», «Յունիստրիմ» և այլն), ապա այդ համակարգին անդամակցող՝ ՀՀ տարածքում գործող այլ առևտրային բանկերի փոխանցումների և ստացումների վերաբերյալ տեղեկատվությունը չի ընդգրկվում:

Այն դեպքում, երբ վճարողից դեպի շահառուն դրամական միջոցների փոխանցումը իրականացվում է ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի միջև «լորո/նոստրո» հաշիվներով (ՍՎԻՖԹ-ի, տելեքսի և այլ համակարգերով), ապա իրականացված փոխանցումները չեն դիտարկվում որպես արտասահմանյան փոխանցումներ և արտացոլվում են «Հայաստանի Հանրապետության տարածքում փոխանցումներ» աղյուսակի «Կենտրոնական բանկից դուրս թղթակցային հաշիվներով փոխանցումներ Հայաստանի Հանրապետության տարածքում» բաժնում՝ ըստ համապատասխան օգտագործված միջոցների/համակարգերի:

(Բանկի կողմից սեփական նախաձեռնությամբ իր որևէ թղթակցային հաշվից միջոցների տեղափոխումը իր մեկ այլ թղթակցային հաշվի, որը կատարվում է, օրինակ, հաշվի ամրացում իրականացնելու նպատակով, չպետք է ընդգրկել «Արտասահմանյան փոխանցումներ» աղյուսակում:

Օտարերկրյա բանկերի հետ արտարժութային փոխարկումների հետևանքով իրականացվող դրամական միջոցների փոխանցումները չեն ընդգրկվում աղյուսակում):

«Այլ (նշել)» տողը նախատեսված է այն համակարգերով «ուղարկված»/«ստացված» փոխանցումների համար, որոնք հիշատակված չեն աղյուսակում: Ընդ որում, յուրաքանչյուր համակարգի անվանումը և համապատասխան տվյալները պետք է նշվեն առանձին տողով:

Սույն հաշվետվության մեջ բոլոր աղյուսակներում տեղեկատվության լրացման նպատակով նախատեսված տողերի չբավարարման, կամ բանկի կողմից նոր համակարգերի շահագործման, օգտագործման դեպքում աղյուսակներում «Այլ (նշել)» տողերում դրանց անվանումը նշելու նպատակով բանկի կողմից ՀՀ կենտրոնական բանկին նախապես կատարված տեղեկացման միջոցով աղյուսակներում կավելացվեն համապատասխան անվանումով տողեր տեղեկատվության ճիշտ արտացոլման համար: Մինչև համապատասխան անվանումով տողի ավելացումը, ներկայացվող տեղեկատվությունը նշվում է «Այլ (նշել)» տողերում:

3.1) «Արտասահմանյան փոխանցումներ ըստ օգտագործվող տեխնիկածրագրային միջավայրի» աղյուսակում ներկայացվում են «Արտասահմանյան փոխանցումներ» աղյուսակում նշված արտասահման կատարված փոխանցումները՝ ըստ տեխնիկածրագրային միջավայրի, որը բանկի կողմից օգտագործվում է «Արտասահմանյան փոխանցումներ» աղյուսակում նշված համակարգերով, ինչպես նաև «Փոխանցումներ այլ միջոցներով՝ բանկի թղթակցային հաշիվներով» տողում նշված փոխանցումների իրականացման համար: Նշված երկու աղյուսակների «ընդամենը» տողերը պետք է համապատասխանեն միմյանց:

«Արտասահմանյան փոխանցումներ ըստ օգտագործվող տեխնիկածրագրային միջավայրի» աղյուսակի «Անվանումը» սյունակում նշվում են օգտագործվող միջավայրի/միջոցների անվանումները: Ըստ այս սյունակում նշված անվանումների՝ ներկայացվում են օգտագործվող միջավայրով/միջոցներով ուղարկված և ստացված գումարների վերաբերյալ տվյալները, տարանջատելով ըստ համապատասխան սյունակների՝ «Բանկեր», «Ոչ-բանկ իրավաբանական անձ հաճախորդներ» և «Ֆիզիկական անձ հաճախորդներ»:

4) «Մատուցած վճարային ծառայություններ» աղյուսակում բերվում են տվյալ բանկի կողմից հաշվետու ժամանակահատվածի ընթացքում՝

ա. «Ակրեդիտիվներ» տողում ընդգրկվում է բացված ակրեդիտիվների քանակը,

բ. «Ինկասոներ» տողում ընդգրկվում է վճարման ուղարկված/ներկայացված ինկասոների քանակը,

գ. «Փաստաթղթային փոխանցումներ» տողում ընդգրկվում է հաճախորդից ընդունած փաստաթղթային փոխանցումների հանձնարարականների քանակը,

դ. «Ուղղակի դեբետագրման հրահանգներ» տողում ընդգրկվում է հաճախորդից ընդունած ուղղակի դեբետագրման հրահանգների քանակը,

ե. «Պարբերաբար վճարումների հանձնարարականներ» տողում ընդգրկվում է հաճախորդից ընդունած պարբերաբար վճարումների հանձնարարականների քանակը:

Աղյուսակում ներառվում են ինչպես ՀՀ տարածքում իրականացված, այնպես էլ միջազգային բնույթի գործարքների վերաբերյալ տվյալները:

5) «ՀՀ տարածքում տարբեր վճարային գործիքներով իրականացված վճարումներ» աղյուսակում առանձին սյունակներով նշվում են ՀՀ տարածքում իրականացված փոխանցումները՝ բանկի հաճախորդների և բանկի սեփական պարտավորությունների կատարման նպատակով կիրառված (օգտագործված) վճարային գործիքներով/միջոցներով՝ ըստ համապատասխան տեսակի:

Մասնավորապես՝ «Թղթային վճարման հանձնարարականներով» տողում համապատասխանաբար նշվում են.

ա. «Հաճախորդի» սյունակում՝ հաճախորդի կողմից իր բանկային հաշվից վճարումներ կատարելու նպատակով բանկին թղթային եղանակով ներկայացված վճարման հանձնարարականների գումարը և քանակը՝ բացառությամբ հաշվետու բանկին ուղղված վճարումների, որոնք նշվում են «Այլ գանձումներ և վճարումներ» տողում,

բ. «Բանկի» սյունակում՝ բանկի կողմից սեփական վճարումների իրականացման նպատակով ներկայացված թղթային հանձնարարականների գումարը և քանակը, որոնցով վճարը կատարվել է բանկի թղթակցային հաշիվներից (այսինքն՝ հանձնարարականը չի կազմվել հաճախորդի վճարումներն իրականացնելու համար):

«Հայաստանի Հանրապետության տարածքում տարբեր վճարային գործիքներով իրականացված վճարումներ» աղյուսակի «Էլեկտրոնային հանձնարարականներով» տողում համապատասխանաբար նշվում են.

ա. «Հաճախորդի» սյունակում՝ հաճախորդի կողմից բանկին էլեկտրոնային եղանակով (օրինակ, բանկ-հաճախորդ, ինտերնետ-բանկինգ և այլ նմանատիպ համակարգերով) ներկայացված հանձնարարականների գումարը և քանակը, բացառությամբ հաշվետու բանկին ուղղված վճարումների, որոնք նշվում են «Այլ վճարային կարգադրություններ» տողում,

բ. «Բանկի» սյունակում՝ բանկի կողմից սեփական վճարումների իրականացման նպատակով ներկայացված էլեկտրոնային հանձնարարականների գումարը և քանակը, որոնցով վճարը կատարվել է բանկի թղթակցային հաշիվներից (այսինքն՝ հանձնարարականը չի կազմվել հաճախորդի վճարումներն իրականացնելու համար):

«Պահանջագրերով» տողում «Հաճախորդի» և «Բանկի» սյունակներում համապատասխանաբար նշվում են այն ներկայացված պահանջագրերի դիմաց վճարումների գումարը և քանակը, որոնց դիմաց կատարվել է հաճախորդի կամ բանկի սեփական վճարումները:

«Պարբերաբար վճարումների հանձնարարականներով» տողում «Հաճախորդի» և «Բանկի» սյունակներում համապատասխանաբար նշվում են այն պարբերաբար վճարումների հանձնարարականների հիման վրա կատարված համապատասխան վճարումների գումարը և քանակը, որոնց դիմաց կատարվել են հաճախորդի կամ բանկի սեփական վճարումները:

«Ուղղակի դեբետագրման հանձնարարականներով» տողում, ըստ նշված համապատասխան սյունակների, նշվում են այն ուղղակի դեբետագրման հանձնարարականների գումարը և քանակը, որոնց դիմաց կատարվել են հաճախորդի կամ բանկի սեփական վճարումները:

Աղյուսակի «Այլ վճարային կարգադրություններ» տողում, ըստ «Հաճախորդի» և «Բանկի» սյունակների, համապատասխանաբար նշվում են հաճախորդի և բանկի սեփական պարտավորության վճարումները, որոնք կատարվել են պայմանագրերով, վճարը հիմնավորող այլ փաստաթղթերով՝ բացառությամբ վճարման ներկայացված չեկերի դիմաց կատարված վճարումների և աղյուսակում նշված կետերի: Հաճախորդների կողմից ավանդների ներդրման գործառնությունները չեն ընդգրկվում բանկերին ուղղված վճարումներում: Բանկերի կողմից իրենց հաճախորդներից ներգրավված ավանդների վերադարձը չի ընդգրկվում բանկի կողմից հաճախորդներին իրականացվող վճարումներում: Բանկի կողմից տրամադրված վարկերի գումարներն իրենց հաճախորդներին նույնպես չեն ընդգրկվում:

«Այլ վճարային կարգադրություններ» տողում՝ հաճախորդների վերաբերյալ սյունակում, լրացվում են կնքված պայմանագրի համաձայն տրամադրված վարկերի մայր գումարի և դրա դիմաց հաշվարկված տոկոսների մասով հաճախորդի բանկային հաշվից կատարված գանձումները, այլ գանձումներ մատուցված ծառայությունների դիմաց: Ինչպես նաև լրացվում են հաճախորդի կողմից իր բանկային հաշվից կատարված անկանխիկ վճարումներն ուղղված բանկին՝ ստացված վարկի մայր գումարի և դրա դիմաց հաշվարկված տոկոսների մարումները և այլ նմանատիպ վճարումներ: Բացառություն են կազմում հաճախորդի կողմից իր բանկային հաշվին կանխիկ միջոցների մուտքագրման հետ կապված գործառնությունները:

Սույն տողի բանկերի վերաբերյալ սյունակում լրացվում են հաշվետու բանկի կողմից կատարված իր սեփական վճարումները ոչ բանկ հաճախորդի բանկային հաշվին՝ ավանդի տոկոս, վճարումներ իրավաբանական անձանց (բացի բանկերից) և այլն: Սույն տողի բանկերի վերաբերյալ սյունակում բացառություն են կազմում հաշվետու բանկի «լորո/նոստրո» և ՀՀ ԿԲ-ում թղթակցային հաշվից կատարված գանձումները:

«Կանխիկ վճարամիջոցներով» տողի հաճախորդների վերաբերյալ սյունակում լրացվում են հաճախորդի կողմից կանխիկ միջոցներով կատարված վճարումներ՝ բանկի այլ հաճախորդի հաշվին, բյուջե, կոմունալ և այլն: Սույն տողի հաճախորդների վերաբերյալ սյունակում լրացվում են նաև հաճախորդի կողմից կատարված կանխիկ միջոցներով վճարումներն ուղղված բանկին՝ ստացված վարկի մայր գումարի և դրա դիմաց հաշվարկված տոկոսների մարումները, կանխիկով այլ վճարումներ ուղղված բանկին՝ ստանձնած պարտավորությունների դիմաց (օրինակ, ապառիկ գնված ապրանքի դիմաց վճարումեր և այլն) և այլն:

Սույն տողի բանկերի վերաբերյալ սյունակում լրացվում են հաշվետու բանկի այն սեփական վճարումները ոչ բանկ հաճախորդներին, որոնք չեն վճարվել հաճախորդի բանկային հաշվին, այլ վճարվել են կանխիկ՝ ավանդի տոկոս և այլն:

Աղյուսակում չեն ընդգրկվում նաև հաճախորդների կողմից կատարված կանխիկացման և վերագնահատման, ինչպես նաև իր բանկային հաշվին կանխիկ միջոցների մուտքագրման հետ կապված գործառնությունները (այդ թվում՝ բանկային հաշվի ամրացումը):

6) «Հեռահար սպասարկման համակարգերով (բանկ-հաճախորդ և այլն) ներկայացված և կատարված հանձնարարականներ» աղյուսակում ներկայացվում են բանկի ոչ բանկ հաճախորդների կողմից շահագործվող բանկ-հաճախորդ և այլ նմանատիպ համակարգերով (օրինակ՝ բանկ-հաճախորդ, ինտերնետ-բանկինգ, հեռախոսային-բանկինգ և այլն) ներկայացված հանձնարարականների ծավալը և քանակը, որոնք կատարվել են բանկի կողմից:

Նշված բանկային ծառայությունների հեռակա մատուցումն իրականացվում է հեռախոսի, բջջային կապի, ինտերնետի, ինչպես նաև հաճախորդի համակարգիչը բանկի սերվերին միացնելու միջոցով և տարանջատվում է ըստ կիրառվող տեխնոլոգիայի:

«Բանկ-հաճախորդ» տողում լրացվում են «Բանկ-հաճախորդ» համակարգի միջոցով մատուցվող բանկային ծառայություններ (PC-banking) - համակարգչի և մոդեմի միջոցով բանկի սերվերին անմիջականորեն միացված կապ, որը հնարավորություն է տալիս իրականացնել բանկային գործառնություններ՝ բացառությամբ կանխիկի հետ կապված գործառնությունների: «Բանկ-հաճախորդ» տողում նշվում են նկարագրված տեխնոլոգիայով նախաձեռնված վճարումների վերաբերյալ տվյալները:

«Ինտերնետ-բանկինգ»՝ ինտերնետով մատուցվող բանկային ծառայությունները (Internet banking) - բանկի կողմից ինտերնետի միջոցով իրականացվող բանկային ծառայությունների մատուցում իր հաճախորդներին՝ բացառությամբ կանխիկի հետ կապված գործառնությունների: «Ինտերնետ-բանկինգ» տողում նշվում են նկարագրված տեխնոլոգիայով նախաձեռնված վճարումների վերաբերյալ տվյալները: Ընդ որում, «Բանկ-հաճախորդ» համակարգի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ, ի տարբերություն «Ինտերնետ-բանկինգի», համապատասխան ծրագրային ապահովումը, որն ապահովում է հաճախորդի կողմից հաշվի կառավարումը, տեղադրվում է անմիջապես բանկի հաճախորդի համակարգչի վրա: Իսկ «Ինտերնետ-բանկինգ»-ի դեպքում հաճախորդը անմիջապես կապ է հաստատում բանկի վեբ-կայքի հետ և այնուհետև իրականացնում է գործառնություններ հաշվով:

«Հեռախոսային-բանկինգ»՝ հեռախոսի միջոցով մատուցվող բանկային ծառայությունները (Telephone banking): Հեռախոսի միջոցով աշխարհի ցանկացած կետից և ցանկացած ժամանակ բանկային ծառայությունների հեռակա մատուցում՝ բացառու-

թյամբ կանխիկի հետ կապված գործառնությունների: «Հեռախոսային-բանկինգ» տողում նշվում են նկարագրված տեխնոլոգիայով նախաձեռնված վճարումների վերաբերյալ տվյալները:

«Հեռախոսային-բանկինգ» (Mobile banking)՝ բջջային հեռախոսի միջոցով բանկային ծառայությունների հեռակա մատուցում՝ բացառությամբ կանխիկի հետ կապված գործառնությունների: «Հեռախոսային-բանկինգ» տողում նշվում են բջջային հեռախոսի միջոցով նախաձեռնված/իրականացված վճարումները: Այդ թվում՝ ընդգրկվում են նաև «Վապ-բանկինգ» և «էս-էմ-էս-բանկինգ»-ով իրականացված վճարումները:

«Վապ-բանկինգ» (WAP-banking)՝ տեղեկատվության փոխանակման արձանագրություն՝ անթել տեխնոլոգիաների հիման վրա վճարումների իրականացման հնարավորություն: Այսինքն, աշխարհի ցանկացած կետից բանկային ծառայությունների մատուցման հնարավորություն, որն իրականացվում է բջջային հեռախոսով ինտերնետին միանալու միջոցով:

«էս-էմ-էս-բանկինգ»՝ կարճ հաղորդագրությունների ծառայության միջոցով իրականացվող վճարումների հնարավորություն (SMS-banking): Բանկային հաշիվների վերաբերյալ ամբողջական ինֆորմացիայի տրամադրման և վճարումների նախաձեռնման/իրականացման ծառայություն, որն իրականացվում է բջջային հեռախոսներից կարճ հաղորդագրությունների ուղարկման և ստացման միջոցով:

«Համակարգերի անվանումը» սյունակում նշվում է ոչ բանկ հաճախորդների կողմից բանկի հետ հեռահար հաղորդակցման նպատակով շահագործվող բանկ-հաճախորդ և այլ նմանատիպ համակարգերի անվանումը:

«Կարգադրություններ» սյունակում, ըստ յուրաքանչյուր նշված հեռահաղորդակցման համակարգի, բերվում են ոչ բանկ հաճախորդների կողմից բանկին ներկայացված վճարային կարգադրությունների ծավալը և քանակը, որոնք կատարվել են հաշվետու ժամանակահատվածում:

Աղյուսակում տողերի չբավարարման դեպքում բանկի կողմից ավելացվում են նոր տողեր՝ ըստ շահագործվող համակարգերի տվյալների արտացոլման համար:

7) «Չեկերով գործառնություններ» աղյուսակում բոլոր տվյալները բերվում են հաշվետու ժամանակահատվածի համար:

«Տրամադրում» սյունակում նշվում են բանկի կողմից հաճախորդին տրամադրված «Չեկերի տեսակներ» սյունակում նշված չեկերի (չեկերի բլանկերի) վերաբերյալ տվյալները՝ ըստ դրանց լրացման նկարագրության պահանջի:

«Սպասարկում» սյունակում նշվում են հաճախորդի կողմից բանկին վճարման ներկայացված այն չեկերը, որոնք հաճախորդը ստացել է իր կողմից մատուցված ծառայությունների կամ ապրանքների դիմաց որպես վճարում, և որոնց դիմաց փաստացի վճարը հաճախորդին կատարվել է հաշվետու ժամանակահատվածում: «Սպասարկում» սյունակը տարանջատված է «Այլ սպասարկված չեկեր» և «Բանկի կողմից վճարված չեկեր» ենթասյունակների: Ընդ որում, անհրաժեշտ բացառությունները բերված են ըստ աղյուսակում նշված չեկերի տեսակների համար նկարագրված դեպքերի:

«Սպասարկում» սյունակի «Բանկի կողմից վճարված չեկեր» ենթամասում նշվում են Վճարող (հաշվետու) բանկի կողմից (բանկ, որտեղ չեկ տվողն ունի միջոցներ, որոնք նա իրավունք ունի տնօրինել չեկ դուրս գրելով) տրամադրված և հաճախորդի կողմից անմիջապես իրեն վճարման ներկայացված չեկերի վերաբերյալ տվյալները: Տվյալ սյունակում բացառություն են կազմում հաշվետու բանկի կողմից հնկասավորված չեկերի վերաբերյալ տվյալները, որոնք վճարվել են:

«Սպասարկում» սյունակի «Այլ սպասարկված չեկեր» ենթամասում նշվում են Դեպոնացնող (հաշվետու) բանկի կողմից (առաջին բանկը, որն ընդունում է չեկը վճարման և որը, չեկի վճարը ստանալու նպատակով, իրականացնում է չեկի հնկասավորումը վճարող բանկին) հաճախորդից ընդունված և դրանց դիմաց հաճախորդներին վճարված չեկերի վերաբերյալ տվյալները:

«ՀՀ բանկային չեկեր» տողի համապատասխան սյունակներում նշվում են բանկի կողմից հաճախորդին տրամադրված ՀՀ բանկերի բանկային չեկերի և համապատասխանաբար այդ չեկերի սպասարկման գումարը և քանակը: ՀՀ բանկերի բանկային չեկերը այն չեկերն են, որոնց վճարման համար պատասխանատվություն է կրում այն դուրս գրող ՀՀ առևտրային բանկը (բանկային չեկերը դուրս են գրվում բանկի կողմից իր գլխամասի, իր մասնաճյուղի, կամ այլ ՀՀ առևտրային բանկի վրա): Այս տողի «Տրամադրում» սյունակում նշվում են հաշվետու բանկի կողմից ընթացիկ ամսվա ընթացքում տրամադրված (դուրս գրված) չեկերի գումարը և քանակը (առկայության դեպքում): «Սպասարկում» սյունակի «Բանկի կողմից վճարված չեկեր» ենթամասում և «Այլ

սպասարկված չեկեր» ենթամասում համապատասխանաբար նշվում են այս չեկերի դիմաց փաստացի վճարումների գումարը և քանակը՝ ըստ վերը նշված այս սյունակների լրացման կարգի:

«Հաճախորդի չեկեր» տողի համապատասխան սյունակներում նշվում են հաճախորդի չեկերի վերաբերյալ տվյալները (բացառությամբ՝ դրամարկղային չեկերի): «Հաճախորդի չեկեր»-ը այն չեկերն են, որոնց վճարման համար պատասխանատվություն է կրում այն դուրս գրող ոչ բանկ հանդիսացող անձը: Այս տողում բացառություն են կազմում այն չեկերի վերաբերյալ տվյալները, որոնք օգտագործվում են բացառապես կանխիկացման գործառնությունների (դրամարկղային) նպատակով, որոնք պետք է լրացվեն «Դրամարկղային չեկեր» տողերում՝ ըստ այդ տողի լրացման նկարագրության:

«Հաճախորդի չեկեր» տողի «Տրամադրում» սյունակում տվյալներ չեն լրացվում: «Հաճախորդի չեկեր» տողի «Սպասարկում» սյունակի «Բանկի կողմից վճարված չեկեր» ենթամասում նշվում են հաճախորդի կողմից անմիջապես հաշվետու բանկից փոխհատուցում ստանալու նպատակով ներկայացված չեկերի վերաբերյալ տվյալները: Իսկ «Այլ սպասարկված չեկեր» ենթամասում նշվում է այն չեկերի վերաբերյալ տեղեկատվությունը, որը ներկայացվել է հաշվետու բանկի հաճախորդի կողմից՝ այլ ՀՀ բանկից փոխհատուցում ստանալու նպատակով: Ընդ որում, սպասարկման վերաբերյալ սյունակում նշվում են փաստացի վճարված (փոխհատուցված) չեկերի գումարը և քանակը՝ ըստ նշված լրացման կարգի:

«Դրամարկղային չեկեր» տողի սպասարկման սյունակի համապատասխան մասում լրացվում են միայն կատարված կանխիկացման գործառնությունների վերաբերյալ տվյալները: «Դրամարկղային չեկեր»-ը այն չեկերն են, որոնք ապահովում են հաշվետու բանկի հաճախորդի դրամարկղային սպասարկումը և կիրառվում են բացառապես բանկից կանխիկ միջոցներ ստանալու նպատակով: «Դրամարկղային չեկեր» տողի «Տրամադրում» սյունակում և «Սպասարկում» սյունակի «Այլ սպասարկված չեկեր» ենթամասում տվյալներ չեն լրացվում: Իսկ այս տողի «Բանկի կողմից վճարված չեկեր» ենթամասում նշվում են համապատասխանաբար հաճախորդի կողմից այս չեկերով կատարված կանխիկացման գործառնությունների գումարը և քանակը:

«Օտարերկրյա բանկերի չեկեր» տողի տրամադրում սյունակում նշվում են բանկի կողմից հաճախորդին վաճառված/տրամադրված օտարերկրյա բանկերի չեկերի գումարը և քանակը: Օտարերկրյա բանկերի չեկերն այն չեկերն են, որոնք վճարվում են օտարերկրյա բանկերի կողմից: Աղյուսակի «Սպասարկում» սյունակի «Այլ սպասարկված չեկեր» ենթամասում նշվում են բանկ ներկայացված օտարերկրյա բանկերի չեկերի վերաբերյալ տվյալները, որոնց դիմաց վճարումը հաճախորդին փաստացի իրականացվել է: «Բանկի կողմից վճարված չեկեր» ենթամասում տվյալներ չեն լրացվում:

«Ճանապարհորդային չեկեր» տողի տրամադրում սյունակում նշվում են բանկի կողմից հաճախորդին վաճառված ճանապարհային չեկերը: Այս տողի «Սպասարկում» սյունակի «Այլ սպասարկված չեկեր» ենթամասում նշվում են բանկ ներկայացված Ճանապարհորդային չեկերի վերաբերյալ տվյալները, որոնց դիմաց վճարումը հաճախորդին փաստացի իրականացվել է: «Բանկի կողմից վճարված չեկեր» ենթամասում տվյալներ չեն լրացվում:

Աղյուսակի «Գանձապետական չեկեր» տողում բերվում են տվյալները գանձապետական չեկերի վերաբերյալ: Այս տողի «Տրամադրում» և «Բանկի կողմից վճարված չեկեր» սյունակները չեն լրացվում:

23. Թիվ 21 հաշվետվությունը ներկայացվում է բանկի (անկախ կազմակերպաիրավական ձևից) կողմից թողարկված բաժնային և պարտքային յուրաքանչյուր արժեթղթի տեղաբաշխման ավարտից հետո: Հաշվետվության մեջ լրացվում է թողարկված արժեթղթի տեսակը և տարատեսակը (օրինակ՝ սովորական անվանական բաժնետոմս, փոխարկելի անվանական պարտատոմս), արժեթղթերի թողարկման մասին որոշում ընդունած մարմնի անվանումը և որոշման ամսաթիվը (օր/ամիս/տարի), արժեթղթերի տեղաբաշխման սկիզբը և ավարտը: Հաշվետվությունը բաղկացած է չորս աղյուսակից: Աղյուսակ 1-ում լրացվում են տեղեկություններ բանկի կողմից թողարկված արժեթղթերի վերաբերյալ՝ թողարկված արժեթղթերի քանակը, անվանական արժեքը, թողարկման ընդհանուր ծավալը, մարման ենթակա արժեթղթերի համար՝ դրանց մարման ժամկետները, ապահովվածություն ունեցող արժեթղթերի համար՝ այդ արժեթղթերով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովող միջոցները (օրինակ՝ գրավ, երաշխավորություն, այլ): Երկրորդ աղյուսակում լրացվում են տեղեկություններ արժեթղթերի տեղաբաշխման վերաբերյալ՝ փաստացի տեղաբաշխված արժեթղթերի

քանակը, տեղաբաշխման դիմաց վճարման ձևը, տեղաբաշխումից ստացված հասույթը՝ ըստ արժույթների և ըստ տեղաբաշխման ձևի: Երրորդ աղյուսակում լրացվում են տեղեկություններ բանկի թողարկած արժեթղթերի տեղաբաշխմանը մասնակցած մասնագիտացված անձանց վերաբերյալ՝ նրա անվանումը, լիցենզիայի համարը և տրման ամսաթիվը, գտնվելու վայրը (փոստային հասցեն), ծառայության համար վճարված միջնորդավճարը: Չորրորդ աղյուսակում լրացվում են տեղեկություններ բանկի ղեկավարների կողմից տվյալ թողարկման արժեղթերի ձեռքբերման վերաբերյալ:

Հաշվետվությունը չպետք է ներկայացվի բանկի կողմից թողարկված այն արժեթղթերի համար, որոնք «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն գրանցված են ֆոնդային բորսայում և/կամ Կենտրոնական բանկում:

24. Թիվ 22 հաշվետվությունը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում լրացվում են տեղեկություններ հաշվետու տարվա ընթացքում բանկի կողմից թողարկված և տեղաբաշխված (վաճառված) բաժնային և պարտքային արժեթղթերի վերաբերյալ, իսկ երկրորդ մասում՝ բանկի կողմից այլ անձանց կանոնադրական կապիտալներում կատարված ներդրումների վերաբերյալ: Հաշվետվությունը ներկայացվում է անկախ բանկի կազմակերպաիրավական ձևից: Աղյուսակ 2-ը լրացվում է միայն այն դեպքում, եթե բանկի կողմից թողարկված բաժնային և/կամ պարտքային արժեթղթերը հաշվետու տարվա ընթացքում շրջանառվել են բորսաներում:

Հաշվետվությունը չպետք է ներկայացվի այն բանկերի կողմից, որոնք «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, որպես հաշվետու թողարկող, հաշվետվություններ են ներկայացնում Կենտրոնական բանկ:

25. Թիվ 24 հաշվետվությունը (ամսական) բաղկացած է երկու աղյուսակից: Հաշվետվության մեջ ընդգրկվում են ինչպես Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձանց, այնպես էլ Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հետ կատարվող գործառնությունները: Առաջին աղյուսակում լրացվում է Հայաստանի Հանրապետության ֆիզիկական անձանց անունով Հայաստանի Հանրապետություն արտերկրից մուտք եղած ֆինանսական միջոցների և դրանց քանակների, իսկ երկրորդ աղյուսակում՝ Հայաստանի Հանրապետության ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետությունից արտերկիր փոխանցված գումարների և դրանց քանակների վերաբերյալ տեղեկատվությունը: Երկու աղյուսակներն էլ լրացվում են նույն սկզբունքով: Հաշվետվությունը ներկայացվում է հազար ԱՄՆ դոլարով, ընդ որում, եթե փոխանցումը կատարվել է այլ արժույթով, ապա գումարը ԱՄՆ դոլարով ներկայացնելու նպատակով պետք է օգտագործվի տվյալ օրվա դրությամբ արտարժույթ/ԱՄՆ դոլար հաշվարկային կրոս փոխարժեքը:

Հաշվետվության մեջ ընդգրկված է 50 երկիր: Յուրաքանչյուր տողում լրացվում է տվյալ երկրից փոխանցված (երկրորդ աղյուսակի համար տվյալ երկիր փոխանցվող) գումարների և այդ փոխանցումների քանակի վերաբերյալ տեղեկատվությունը, որտեղ «Ընդամենը» սյունակում նշվում են բոլոր փոխանցումները, իսկ «Այդ թվում՝ ոչ առևտրային նպատակներով» սյունակում՝ միայն ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները: «Այլ երկրներ» տողում ընդգրկվում են աղյուսակում չնշված երկրները, ընդ որում, «այդ թվում» տողերում առանձին արտացոլվում են միայն այն երկրները, որոնցից յուրաքանչյուրի գծով ամսվա ընթացքում կատարվել են ընդհանուր գումարով 20000 ԱՄՆ դոլարը գերազանցող փոխանցումներ: Հաշվետվության մեջ «որից՝ հաշվից հաշիվ փոխանցում» տողում նշվում է ամսվա ընթացքում հաճախորդի մի բանկային հաշվից այդ նույն հաճախորդի մեկ այլ բանկային հաշիվ կատարված փոխանցումների ընդհանուր գումարը ԱՄՆ դոլարով և դրանց ընդհանուր քանակը, ընդ որում, հաշվից հաշիվ փոխանցումները պետք է լրացնել միայն «Ընդամենը» սյունակում, քանի որ դրանք չեն դիտարկվում որպես ոչ առևտրային փոխանցումներ: Հաշվետվության մեջ «որից՝ ԱՄՆ դոլար, եվրո, ռուսական ռուբլի, ՀՀ դրամ և այլ արտարժույթ» տողերում նշվում են ընդամենը փոխանցումներում ԱՄՆ դոլարի, եվրոյի, ռուսական ռուբլու, ՀՀ դրամի և այլ արտարժույթով կատարված փոխանցումների ծավալները՝ հաշվարկված ԱՄՆ դոլարով: Հաշվետվության մեջ «Այդ թվում՝ «Յունիստրիմ», «Անելիք», «Վեսթերն Յունիոն», «Մանի Գրեմ», «Բիստրայա պոչտա», «Միգոմ», «Կոնտակտ» համակարգերով» տողերում լրացվում են միայն նշված համակարգերի միջոցով կատարված փոխանցումները: «Այդ թվում՝ այլ համակարգերով» տողի ենթատողերում առանձին նշվում են ըստ անվանումների այլ դրամական համակարգերը, եթե այդպիսիք առկա են: Ընդ որում, յուրաքանչյուր բանկ պետք է լրացնի միայն իր բան-

կում հաշիվ ունեցող ֆիզիկական անձ հաճախորդների հետ համակարգերով կատարված գործառնությունները: Այսպես, օրինակ, «XX» համակարգն ուղղակիորեն սպասարկող «Ա» բանկը սույն հաշվետվության մեջ պետք է արտացոլի միայն նշված համակարգով իր բանկում հաշիվ ունեցող ֆիզիկական անձ հաճախորդների կողմից կատարված փոխանցումները և ցույց չտա նույն համակարգի միջոցով այլ բանկերի ֆիզիկական անձ հաճախորդների գործառնությունները: «Ընդամենը համակարգերով» տողում նշվում է համակարգերով բոլոր փոխանցումների ինչպես ընդհանուր գումարը, այնպես էլ քանակը, ընդ որում, «այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնություն» տողում լրացվում են Ռուսաստանի Դաշնության հետ համակարգերով կատարված փոխանցումները:

Սույն հաշվետվության իմաստով՝ ոչ առևտրային նպատակով իրականացվող փոխանցումներ են համարվում.

ա. ֆիզիկական անձի անունով արտերկրից ստացված (ֆիզիկական անձի կողմից արտերկիր փոխանցված) անհատույց ֆինանսական միջոցները, որոնց նպատակն ընթացիկ կարիքների բավարարումն է, մասնավորապես՝ ֆինանսական օգնությունը, նվիրատվությունները, նպաստները, թոշակները և այլ նմանատիպ միջոցները,

բ. աշխատանքի դիմաց ստացված (վճարված) աշխատավարձը, երբ աշխատողն աշխատել է արտերկրում տեղակայված կազմակերպությունում և աշխատավարձը ստանում է՝ գտնվելով արդեն իր երկրում, բանկային փոխանցման միջոցով,

գ. երբ աշխատողն աշխատում է տվյալ երկրում տեղակայված այնպիսի կազմակերպությունում, որտեղ աշխատավարձը ստանում է արտերկրից աշխատավարձի ուղղակի փոխանցման միջոցով:

Մնացած բոլոր դեպքերում, այդ թվում՝ անշարժ գույքի ձեռքբերման, շինարարական աշխատանքների իրականացման համար կատարվող փոխանցումներ, չպետք է դիտել որպես ոչ առևտրային նպատակով իրականացվող փոխանցումներ և պետք է ներառել միայն «Ընդամենը» սյունակում:

Սակայն, եթե արտերկրից Հայաստանի Հանրապետություն փոխանցումներում առկա են այնպիսի դեպքեր, որտեղ փոխանցման նպատակը հստակ նշված չէ, և չկան համապատասխան տեղեկություններ նշված փոխանցումը դասակարգելու համար, ապա բանկը պետք է որպես կողմնորոշիչ ցուցանիշներ վերցնի հետևյալը.

ա. եթե փոխանցումն իրականացնողը իրավաբանական անձ է, ապա նշված միջոցը պետք է դասակարգել որպես առևտրային նպատակով և ցույց չտալ «ոչ առևտրային նպատակներով» սյունակում, այլ ընդ նպատակներով գրկել միայն ընդամենը ցուցանիշի մեջ,

բ. եթե փոխանցումն իրականացնողը ֆիզիկական անձ է, ապա փոխանցումը պետք է դիտարկել որպես ոչ առևտրային նպատակով իրականացված փոխանցում և ընդգրկել «ոչ առևտրային նպատակներով» սյունակում միայն այն դեպքում, եթե փոխանցվող գումարի չափը չի գերազանցում 10 000 ԱՄՆ դոլարը կամ դրան համարժեք գումարը ներառյալ:

26. Թիվ 25 հաշվետվությունը լրացնելիս «1. Բանկի աշխատակիցների թվաքանակը» տողում պետք է արտացոլվի հաշվետու ժամանակաշրջանում բանկի որոշակի և անորոշ ժամկետով կնքված պայմանագրերով աշխատող աշխատակիցների միջին օրական թվաքանակը: Աշխատակիցների միջին օրական թվաքանակը հաշվարկելու համար աշխատողների թվաքանակն ըստ օրերի գումարվում են և բաժանվում օրացուցային օրերի վրա: Ընդ որում, հաշվարկի մեջ ներառվում են միայն այն որոշակի ժամկետով կնքված պայմանագրերով աշխատող աշխատողները, որոնց հետ կնքված աշխատանքային պայմանագրերի ժամկետը ներառում է տվյալ եռամսյակն ամբողջությամբ:

Հաշվետվության 1-ին տողի 1.1 ենթակետի «1.1. այդ թվում՝ բանկի ղեկավարներ (ներառյալ՝ բաժնի պետերը)» տողում պետք է արտացոլվի «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածով սահմանված ղեկավարների թվաքանակը հաշվետու ժամանակաշրջանի միջին օրական կտրվածքով:

«1.2. այդ թվում՝ ոչ ղեկավար աշխատակիցներ» տողում պետք է արտացոլվի «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի գործառնությունների իրականացման, ինչպես նաև բանկի խնդիրների կատարման հետ ուղղակիորեն առնչվող աշխատակիցների թվաքանակը հաշվետու ժամանակաշրջանի միջին օրական կտրվածքով:

«1.3. այդ թվում՝ սպասարկող անձնակազմ» տողում ներառվում են բանկի այն աշխատակիցները, ովքեր չեն մասնակցում «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի գործառնությունների իրականացմանը, ինչպես նաև նրանք, ում պարտականություններն ուղղակիորեն չեն առնչվում բանկի խնդիրների կատարման հետ, օրինակ՝ գործավարները կամ օժանդակ տնտեսության սպասարկման բնագավառում ընդգրկված աշխատակիցները:

«2. Բանկի աշխատակիցների աշխատավարձի ֆոնդ» տողում լրացվում է բանկի հաշվետու ժամանակաշրջանի միջին ամսական աշխատավարձի ֆոնդը, որի մեջ չեն ներառվում Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին գործատուի հաշվին կատարվող հատկացումները:

«3. Բանկի աշխատակիցների այլ վճարումների ֆոնդ» տողում լրացվում է բանկի աշխատակիցներին վճարվող աշխատավարձին հավասարեցված վճարումները՝ պարգևատրումների, հավելավճարների և այլ վճարումների հանրագումարը միջին ամսական կտրվածքով:

«4. Բանկի աշխատակիցների վերապատրաստումների քանակը» տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում ֆինանսաբանկային ոլորտում վերապատրաստումների քանակը, որոնց մասնակցել են բանկի աշխատակիցները:

«5. Վերապատրաստումների մասնակցած աշխատակիցների քանակը» տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում ֆինանսաբանկային ոլորտում վերապատրաստումների մասնակցած աշխատակիցների քանակը:

Հաշվետվության «6. Բանկի աշխատակիցների քանակը, ովքեր ունեն ֆինանսաբանկային համակարգում փորձ» տողը լրացնելիս ֆինանսաբանկային համակարգում աշխատանքային փորձ ունեցող են համարվում այն անձինք, ովքեր աշխատել են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 6-րդ բաժնով սահմանված, ինչպես նաև «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի գործառնություններ իրականացնող կազմակերպություններում:

Հաշվետվության 7-րդ, 8-րդ, 9-րդ տողերում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի միջին օրական տվյալները:

Հաշվետվությունը լրացվում է տարանջատելով տվյալները՝ ըստ բանկի գլխամասի և մասնաճյուղերի:

27. Թիվ 28 հաշվետվությունը նախատեսված է ինչպես կատարված զեղծարարությունների, այնպես էլ զեղծարարության փորձերի արձանագրման, դրանց բնույթի և առանձնահատկությունների ուսումնասիրության և Հայաստանի Հանրապետության տարածքում նման զեղծարարությունների կանխարգելման ու նվազեցման համար:

Սույն հաշվետվությունը լրացվում է զեղծարարության հայտնաբերման պահից 10 օրվա ընթացքում: Յուրաքանչյուր զեղծարարության համար լրացվում է առանձին հաշվետվություն:

Հաշվետվության դաշտերը պետք է լրացվեն նման տվյալների առկայության դեպքում: Անհրաժեշտության դեպքում կարող են ավելացվել լրացուցիչ տողեր: Եթե հաշվետվության լրացման համար անհրաժեշտ տվյալները բացակայում են, ապա համապատասխան դաշտում պետք է նշվի «հայտնի չէ» արտահայտությունը:

Հաշվետվության լրացման համար ստորև ներկայացվում են հաշվետվության մեջ կիրառված հասկացությունների մեկնաբանությունները:

1) *«Հաղորդվող զեղծարարության հերթական համարը»* այն համարն է, որը վերագրվում է զեղծարարության տվյալ դեպքին՝ զեղծարարությունների հաշվառման նպատակով: Այն իրենից ներկայացնում է տվյալ բանկի կողմից տվյալ օրվա ընթացում հաղորդվող զեղծարարության հերթական համարը: Համարակալումը սկսվում է 1-ից:

2) *«Զեղծարարության տեսակը»* դաշտից պետք է ընտրել և նշել զեղծարարության այն տեսակը և ենթատեսակը (եթե վերջինս նշված է ցանկում), որը բնորոշ է տվյալ դեպքին.

«Վճարային քարտերով իրականացվող զեղծարարություն». զեղծարարություն, որն իրականացվել է վճարային քարտերի միջոցով: Զեղծարարության այս տեսակը նշելու դեպքում բանկի աշխատակիցը պետք է նաև նշի, թե վճարային քարտերով իրականացվող զեղծարարությունների կոնկրետ որ տեսակին է վերաբերում իր կողմից արձանագրված տվյալ զեղծարարությունը:

<u>Կորցրած/գողացված քարտերով իրականացվող զեղծարարություն.</u> երբ բանկը չի հասցնում ժամանակին բլոկավորել գողացված կամ կորցրած քարտի հաշիվը՝ քարտապանի կողմից համապատասխան կարգադրության բացակայության պատճառով, և զեղծարարը հասցնում է օգտագործել հաշվում առկա միջոցները:

Կեղծ քարտերի պատրաստում և օգտագործում. երբ իրական քարտի վերաբերյալ անօրինական ճանապարհով ձեռք բերված տեղեկատվությունը (քարտի համարը, քարտատիրոջ անունը, քարտի գործողության ժամկետը, և այլն) գրանցվում է կեղծ քարտի վրա:

Չստացված քարտերով իրականացվող գեղծարարություն. երբ գեղծարարն օգտագործում է փոստով քարտի ուղարկման ժամանակ գողացված քարտը:

Առանց քարտի ներկայացման միջավայրում իրականացվող գեղծարարություն. երբ գեղծարարությունն իրականացվում է իրական քարտի տվյալների օգտագործման միջոցով՝ ապրանքներ կամ ծառայություններ պատվիրելով փոստով, հեռախոսով, ինտերնետով կամ այլ միջավայրի օգնությամբ՝ առանց քարտի ներկայացման:

Այլ. այս տողը լրացվում է այն դեպքում, երբ գեղծարարությունն իրականացվել է վճարային քարտով, սակայն չկա վճարային քարտերով իրականացվող գեղծարարությունների ցանկում:

«Այլ վճարային գործիքներով իրականացվող գեղծարարություն». գեղծարարություն, որն իրականացվել է պարբերաբար վճարումների հանձնարարականի, վճարման պահանջագրի, ուղղակի դեբետագրման հանձնարարականի կամ այլ վճարային գործիքի միջոցով, որը չկա գեղծարարությունների դասակարգման տվյալ ցանկում:

«Ինտերնետ միջավայրում իրականացվող գեղծարարություն». գեղծարարություն, որն իրականացվել է՝ օգտագործելով ինտերնետ միջավայրը: Այն ընդգրկում է էլեկտրոնային առևտրի, «ֆիշինգ»-ի հետ կապված գեղծարարությունները, ինչպես նաև ցանկացած այլ գեղծարարություն, որն իրականացվել է ինտերնետի միջոցով, սակայն կապ չունի ինտերնետ-բանկ համակարգի հետ: Վերջինս դասվում է բանկային հեռակառավարման համակարգերում իրականացվող գեղծարարությունների շարքին, ունի մի փոքր այլ բնույթ և որոշակի առանձնահատկություններ:

Էլեկտրոնային առևտուր. ինտերնետ միջավայրում իրականացվող առևտուր: Այս հասկացության մեջ չեն ընդգրկվում ինտերնետ-բանկ համակարգում իրականացվող գեղծարարությունները:

«Ֆիշինգ»-ը ինտերնետ գեղծարարության տեսակ է, որը հնարավորություն է տալիս գեղծարարներին քարտապանի և նրա հաշվի վերաբերյալ ինֆորմացիա կորզել անօրինական ճանապարհով: «Ֆիշինգ» գեղծարարությունն իրականացվում է հետևյալ մեխանիզմով. քարտապանն իր բանկի կամ քարտային կազմակերպության անունից էլեկտրոնային հաղորդագրություն է ստանում ինտերնետից, որում քարտապանին խնդրում են, անվտանգության կանոններից ելնելով, վերահաստատել իրական քարտի վերաբերյալ ինֆորմացիան:

Այլ. այս տողը լրացվում է այն դեպքում, երբ գեղծարարությունն իրականացվել է ինտերնետ միջավայրում, սակայն չկա ինտերնետ միջավայրում իրականացվող գեղծարարությունների ցանկում: Այն ևս չի ընդգրկում ինտերնետ-բանկ համակարգում իրականացվող գեղծարարությունները:

«Բանկային հեռակառավարման համակարգերում իրականացվող գեղծարարություն». գեղծարարություն, որն իրականացվել է հեռախոսային բանկային հեռակա սպասարկման, ինտերնետ-բանկ, բանկ-հաճախորդ, մոբիլ հեռախոսով բանկային հեռակա սպասարկման կամ բանկային հեռակառավարման այլ համակարգերում: Սրանք բոլորն այն բանկային համակարգերն են, որոնք հնարավորություն են տալիս հաճախորդին կառավարել իրենց բանկային հաշիվները՝ չայցելելով բանկ կամ նրա բաժանմունք:

Հեռախոսային բանկային հեռակա սպասարկման համակարգը բանկային հեռակառավարման այնպիսի համակարգ է, որը հնարավորություն է տալիս կառավարել բանկային հաշիվը հեռախոսի միջոցով:

Բանկ-հաճախորդ համակարգը բանկային հեռակառավարման այնպիսի համակարգ է, որը հնարավորություն է տալիս կառավարել բանկային հաշիվը՝ համակարգչի և մոդեմի միջոցով առանձնացված (կամ կոմուտացվող) գծով միանալով բանկի սերվերներին (առանց ինտերնետին միանալու անհրաժեշտության):

Ինտերնետ-բանկ համակարգը բանկային հեռակառավարման այնպիսի համակարգ է, որը հնարավորություն է տալիս կառավարել բանկային հաշիվը ինտերնետի միջոցով: Այն բանկ-հաճախորդ համակարգից տարբերվում է հենց նրանով, որ բանկի հետ համագործակցության կազմակերպման համար օգտագործվում են ինտերնետի լայն հնարավորությունները:

Մոբիլ հեռախոսով բանկային հեռակա սպասարկման համակարգը բանկային հեռակառավարման այնպիսի համակարգ է, որը հնարավորություն է տալիս կառավարել բանկային հաշիվը մոբիլ հեռախոսի միջոցով:

Այլ. այս տողը լրացվում է այն դեպքում, երբ զեղծարարությունն իրականացվել է բանկային հեռակառավարման համակարգերում, սակայն չկա հեռակառավարման համակարգերում իրականացվող զեղծարարությունների վերոնշյալ ցանկում:

«Բանկում տեղի ունեցած և հայտնաբերված խարդախություններ, զեղծարարություններ, չարաշահումներ և նման այլ դեպքեր». այս տողը լրացվում է այն դեպքում, երբ տեղի են ունենում խարդախության, զեղծարարության, չարաշահման և նման այլ դեպքեր բանկի աշխատակիցների և/կամ բանկի հաճախորդների մասնակցությամբ:

«Այլ տեսակի զեղծարարություն». այս տողը լրացվում է այն դեպքում, երբ հայտնաբերված զեղծարարությունը չի դասվում զեղծարարության վերոնշյալ տեսակների շարքին և իրենից ներկայացնում է այլ զեղծարարություն, որն ունի իր առանձնահատկությունները:

3) *«Զեղծարարության օբյեկտի (գործիքի) վավերապայմանները»* բաժնից պետք է ընտրվի և լրացվի միայն մեկ ենթաբաժին (3.1 կամ 3.2 կամ 3.3 կամ 3.4 կամ 3.5), որն առավել համապատասխանում է հաղորդվող զեղծարարության օբյեկտին (գործիքին): Այսինքն, եթե հաղորդվող զեղծարարությունը վճարային քարտերով իրականացվող զեղծարարություն է, ապա 3-րդ բաժնից պետք է լրացվեն միայն 3.1 ենթաբաժնի դաշտերը, եթե չեկերով՝ 3.2, եթե վճարման հանձնարարականներով՝ 3.3, եթե ինտերնետ և այլ նոր տեխնոլոգիաներով՝ 3.4, եթե որևէ այլ՝ 3.5: Մնացած չորս ենթաբաժինների դաշտերը չեն լրացվում:

3.1) «Վճարային քարտերի համար» դաշտը լրացվում է միայն այն դեպքում, երբ հաղորդվող զեղծարարությունը կատարվել է վճարային քարտերի միջոցով: Այլ տեսակի զեղծարարությունների համար այս դաշտը չի լրացվում:

3.1.1. «Քարտի տեսակը» քարտերի դասակարգումն է ըստ վճարային համակարգերի: Օրինակ՝ ԱրՔա, Վիզա, ՄաստերՔարդ, Զոլոտայա Կորոնա և այլն:

3.1.2. «Քարտի տիպը» դասակարգվում է ըստ քարտի հիմքում ընկած վճարային սխեմայի (դեբետային, կրեդիտային, կանխիկացման և այլն): Օրինակ՝ Դեբիտ, Էլեկտրոն, Կլասիկ, Բիզնես, Գոլդ, Պլատինում և այլն:

3.1.3. «Քարտը թողարկողի վերաբերյալ տվյալներ» տողում պետք է լրացվի զեղծարարության ժամանակ կիրառված քարտը թողարկող ֆինանսական կազմակերպության անվանումը և այլ առկա տեղեկատվություն:

3.1.4. «Քարտապանի վերաբերյալ տվյալներ» տողում լրացվում է զեղծարարության ժամանակ կիրառված քարտի քարտապանի անուն/ազգանունը (եթե կորպորատիվ քարտ է, ապա կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը), ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթի, աշխատավայրի, պաշտոնի, բնակության և գրանցման վայրի վերաբերյալ տվյալները՝ առկայության դեպքում:

3.1.5. «Քարտի համարը» զեղծարարության ժամանակ կիրառված քարտի վրա նշված քարտային համարն է:

3.1.6. «Քարտի վավերության (գործողության) ժամկետը» զեղծարարության ժամանակ կիրառված քարտի վրա նշված ժամկետն է, որի ընթացքում քարտը համարվում է վավեր (գործող):

3.2) «Չեկերի համար» դաշտը լրացվում է միայն այն դեպքում, երբ հաղորդվող զեղծարարությունը կատարվել է չեկերի միջոցով: Այլ տեսակի զեղծարարությունների համար այս դաշտը չի լրացվում:

3.2.1. «Չեկի տեսակը» տողում պետք է նշվի զեղծարարության ժամանակ կիրառված չեկի տեսակը (օրինակ՝ ճանապարհային, հաճախորդի, բանկային, գանձապետական, փոստային, կանխիկ, հաշվարկային, կրոս, սերտիֆիկացված, լիմիտավորված, չլիմիտավորված, անվանական, օրդերային, ըստ ներկայացնողի և այլն):

3.2.2. «Չեկի համարը» զեղծարարության ժամանակ կիրառված չեկի վրա նշված համարն է:

3.2.3. «Չեկը դուրս գրած ֆինանսական կազմակերպության անվանումը և հասցեն» տողում պետք է լրացվեն զեղծարարության ժամանակ կիրառված չեկը թողարկող կազմակերպության մասին տվյալները:

3.2.4. «Չեկատուի անուն/ազգանունը (անվանումը) և հասցեն» տողում պետք է լրացվեն զեղծարարության ժամանակ կիրառված չեկի վրա նշված այն անձի տվյալները, ով դուրս է գրել տվյալ չեկը՝ կարգադրելով վճարողին՝ վճարել ներկայացված չեկի դիմաց:

3.2.5. «Չեկի դուրսգրման տեղը և ամսաթիվը» տողում պետք է լրացվեն զեղծարարության ժամանակ կիրառված չեկի վրա նշված չեկատուի կողմից չեկի դուրսգրման տեղը և ամսաթիվը:

3.2.6. «Չեկատիրոջ անուն/ազգանունը (անվանումը)» տողում պետք է լրացվի զեղծարարության ժամանակ կիրառված չեկի վրա նշված այն անձի անուն/ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը), որի անունով դուրս է գրվում չեկը և որն ունի չեկով սահմանված գումարի պահանջի իրավունք չեկ տվողի նկատմամբ:

3.2.7. «Չեկում նշված գումարը և արժույթը» տողում պետք է լրացվեն զեղծարարության ժամանակ կիրառված չեկի վրա նշված գումարը և արժույթը, որը պետք է վճարվի չեկատիրոջը: Այն պետք է լրացված լինի ինչպես թվային, այնպես էլ տառային ձևով:

3.3) «Վճարման հանձնարարականների համար» դաշտը լրացվում է միայն այն դեպքում, երբ հաղորդվող զեղծարարությունը կատարվել է վճարման հանձնարարականի միջոցով: Այլ տեսակի զեղծարարությունների համար այս դաշտը չի լրացվում:

3.3.1. «Վճարման եղանակը/համակարգը» տողում պետք է նշվի, թե ինչ եղանակով կամ համակարգով է ներկայացվել վճարման հանձնարարականը զեղծարարության իրականացման ժամանակ (թղթային կամ էլեկտրոնային՝ բանկային հեռակառավարման համակարգերի միջոցով):

3.3.2. «Վճարման հանձնարարականի համարը» զեղծարարության ժամանակ կիրառված վճարման հանձնարարականի վրա նշված համարն է:

3.3.3. «Վճարողի բանկի անվանումը» այն բանկի անվանումն է, որը նշված է զեղծարարության ժամանակ կիրառված վճարման հանձնարարականի վրա որպես վճարողից վճարման հանձնարարականը ստացող բանկ:

3.3.4. «Ներկայացման ամսաթիվը» այն ամսաթիվն է, երբ զեղծարարության ժամանակ կիրառված վճարման հանձնարարականը ներկայացվել է բանկ թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

3.3.5. «Կատարման ամսաթիվը» այն ամսաթիվն է, որը հանդիսանում է վճարողի բանկի կողմից զեղծարարության ժամանակ կիրառված վճարման հանձնարարականի կատարման, այսինքն՝ հաճախորդի հաշվի դեբետագրման ամսաթիվ:

3.3.6. «Ակցեպտավորման ամսաթիվը» այն ամսաթիվն է, երբ ստացող բանկը կատարում է զեղծարարության ժամանակ կիրառված վճարման հանձնարարականը, այսինքն՝ հաստատում է գործարքը: Վճարման հանձնարարականի ակցեպտավորումը բացառում է դրա հետագա մերժումը:

3.3.7. «Վճարման ամսաթիվը» ստացող բանկի կողմից զեղծարարության ժամանակ կիրառված վճարման հանձնարարականի կատարման ամսաթիվն է:

3.3.8. «Ուղարկողի անունը (անվանումը)» զեղծարարության ժամանակ կիրառված վճարման հանձնարարականը նախաձեռնող ֆիզիկական կամ իրավաբանական անձի անունը կամ անվանումն է:

3.3.9. «Ստացող բանկի (մասնաճյուղի) անվանումը» այն բանկի անվանումն է, որին հասցեագրված է ուղարկողի վճարման հանձնարարականը (վճարողի բանկը, միջնորդ բանկը (բանկերը) և շահառուի բանկը):

3.3.10. «Դեբետագրվող հաշիվը» զեղծարարության ժամանակ կիրառված վճարման հանձնարարականում նշված ֆիզիկական կամ իրավաբանական այն անձի հաշվեհամարն է, ում հաշվից պետք է իրականացվի դրամական միջոցների փոխանցումը ստացողին:

3.3.11. «Միջնորդ բանկի (բանկերի) անվանումը» այն բանկերի ցուցակն է, որոնք հանդես են եկել որպես միջնորդ՝ վճարման հանձնարարականի փոխանցման գործընթացում:

3.3.12. «Շահառուի անունը (անվանումը)» զեղծարարության ժամանակ կիրառված վճարման հանձնարարականում նշված ֆիզիկական կամ իրավաբանական այն անձի անունն է կամ անվանումը, ով հանդես է գալիս որպես վճարողի վճարման հանձնարարականի գումարի փոխանցման վերջնական հասցեատերը:

3.3.13. «Շահառուի բանկի (մասնաճյուղի) անվանումը» վճարողի վճարման հանձնարարականում նշված այն բանկի (մասնաճյուղի) անվանումն է՝

ա. որում գտնվում է շահառուի՝ վճարողի վճարման հանձնարարականի համաձայն կրեդիտագրման ենթակա հաշիվը, կամ

բ. որը վճարողի վճարման հանձնարարականին համապատասխան պետք է վճարման հանձնարարականի գումարը վճարի շահառուին:

3.3.14. «Կրեդիտագրվող հաշիվը» զեղծարարության ժամանակ կիրառված վճարման հանձնարարականում նշված ֆիզիկական կամ իրավաբանական այն անձի հաշվեհամարն է, ով պետք է հանդես գա որպես փոխանցվող դրամական միջոցների ստացող:

3.3.15. «Գումարը (թվերով) և արժույթը (կոդով)» դաշտում բանկի աշխատողների կողմից թվերով պետք է լրացվի այն գումարը, որը զեղծարարության ժամանակ կիրառված վճարման հանձնարարականում նշված է որպես շահառուին վճարման ենթակա գումար:

3.3.16. «Արժույթը» դաշտում բանկի աշխատողների կողմից պետք է լրացվի այն գումարի արժույթը, որը զեղծարարության ժամանակ կիրառված վճարման հանձնարարականում նշված է որպես շահառուին վճարման ենթակա գումարի արժույթ:

3.3.17. «Գործարքի նպատակը» զեղծարարության ժամանակ կիրառված վճարման հանձնարարականում նշված դրամական միջոցների փոխանցման գործարքի նպատակն է:

3.4) «Ինտերնետ և այլ նոր տեխնոլոգիաների համար» դաշտը լրացվում է այն դեպքում, երբ հաղորդվող զեղծարարությունը կատարվել է ինտերնետ և այլ նոր տեխնոլոգիաների միջոցով: Այն ներառում է ինտերնետ միջավայրում իրականացվող զեղծարարությունների և հեռակառավարման համակարգերում իրականացվող զեղծարարությունների տեսակները (տե՛ս դաշտ 2): Այլ տեսակի զեղծարարությունների համար այս դաշտը չի լրացվում:

3.4.1. «Անօրինական գործունեության իրականացման միջավայրի վերաբերյալ տվյալները» այն տվյալներն են, որոնք բնութագրում են, թե ինչ միջավայրում է տեղի ունեցել նոր տեխնոլոգիաների վրա հիմնված տվյալ զեղծարարությունը (ինտերնետ առևտուր, «ֆիշինգ», «նիգերյան նամակներ», ինտերնետ-բանկ համակարգ, բանկ-հաճախորդ համակարգ, բջջային կամ այլ հեռախոսով մատուցվող բանկային ծառայությունների համակարգ, ինտերնետ կամ հեռակառավարման այլ համակարգեր):

3.4.2. «Զեղծարարության առարկայի վերաբերյալ տվյալները» այն տվյալներն են, որոնք բնութագրում են տվյալ զեղծարարության առարկան, այսինքն՝ ինչն է հանդիսանում ինտերնետ կամ նոր տեխնոլոգիաներին բնորոշ միջավայրում իրականացվող զեղծարարության օբյեկտ (օրինակ՝ ինտերնետ առևտուր իրականացնելիս զեղծարարության առարկա է հանդիսացել քարտապանի հաշիվը, նրա անձնական տվյալները, «ֆիշինգ»-ի դեպքում՝ բանկային հաշիվը, «նիգերյան նամակների» դեպքում՝ հաճախորդը կորցրել է որոշակի գումար և այլն):

3.4.3. «Զեղծարարության իրականացման եղանակի և անօրինական գործունեության մեխանիզմների վերաբերյալ տվյալները» այն տվյալներն են, որոնք բնութագրում են, թե ինչպես է իրականացվել զեղծարարությունը, այսինքն՝ ինչ միջոցով են զեղծարարին հասանելի դարձել քարտապանի անձնական և նրա հաշիվների վերաբերյալ տվյալները ինտերնետով զեղծարարություն իրականացնելու համար (օրինակ՝ տվյալների հափշտակում ինտերնետով գործարքների իրականացման ժամանակ ինչ-որ ծրագրերով կամ ալգորիթմերով, բանկի կամ պրոցեսինգային կենտրոնի տվյալների բազային հասանելիության ապահովում, տեղեկատվության ստացում ոչ վիրտուալ միջավայրից և այլն):

3.4.4. «Անօրինական գործունեության իրականացման ընթացքում կիրառվող/օգտագործվող գործիքների/միջոցների վերաբերյալ տվյալները» այն տվյալներն են, որոնք բնութագրում են ինտերնետ կամ նոր տեխնոլոգիաներին բնորոշ միջավայրում իրականացվող զեղծարարության ժամանակ օգտագործված գործիքները կամ միջոցները (օրինակ՝ բանկային հաշիվ, վճարային քարտ, էլեկտրոնային չեկ, էլեկտրոնային փող, էլեկտրոնային վճարման հանձնարարական և այլն):

3.4.5. «Համակարգչային տեղեկատվության անօրինական օգտագործման հետքերի վերաբերյալ տվյալները» այն տվյալներն են, որոնք կարող են պահպանված լինել համակարգչի կամ էլեկտրոնային նամակների մեջ (օրինակ՝ «նիգերյան նամակների» դեպքում զեղծարարների հետ հաղորդակցման որոշակի տվյալներ, էլեկտրոնային փոստի հասցեներ, տվյալների բազային անօրինական հասանելիության դեպքում՝ համակարգչի տվյալների որոշակի հետքեր և այլն):

3.4.6. «Այլ տեղեկատվություն» տողում պետք է լրացվի ցանկացած այլ տեղեկատվություն, որը կնկարագրի ինտերնետում կամ նոր տեխնոլոգիաներին բնորոշ միջավայրում իրականացվող զեղծարարության ժամանակ կիրառված գործիքների, միջոցների վերաբերյալ տվյալներ:

3.5) «Բանկում տեղի ունեցած և հայտնաբերված խարդախություններ, զեղծարարություններ, չարաշահումներ և նման այլ դեպքերի համար» դաշտը լրացվում է այն դեպքում, երբ խարդախություններ, զեղծարարություններ, չարաշահումներ և նման այլ դեպքերը տեղի են ունենում բանկի աշխատակիցների և/կամ բանկի հաճախորդների մասնակցությամբ:

3.5.1. «Բանկի պատասխանատու աշխատակցի վերաբերյալ տվյալները» տողում լրացվում են այն աշխատակիցների անունը, ազգանունը, պաշտոնը, անձնագրի սերիան, համարը, տրման ամսաթիվը, որոնք անմիջական մասնակցություն են ունեցել նման դեպքերին կամ պատասխանատու են եղել դրանց կանխման համար:

3.5.2. «Հաճախորդի վերաբերյալ տվյալներ» տողում լրացվում են այն հաճախորդների անունը, ազգանունը, անձնագրի սերիան, համարը, տրման ամսաթիվը, որոնք անմիջական մասնակցություն են ունեցել նման դեպքերին կամ դարձել են դրանց զոհը:

3.5.3. «Խարդախության, գեղծարարության, չարաշահման դեպքի նկարագրությունը» տողում համառոտ ներկայացվում է տվյալ դեպքը:

3.5.4.* «Դեպքի արդյունքում կրած վնասը» տողում նշվում է խարդախության, գեղծարարության, չարաշահման և նման այլ դեպքերի արդյունքում բանկի կողմից կրած վնասը (գումարը նշել թվերով, դրամային արտահայտությամբ):

3.6) «Այլ գործիքների և վճարահաշվարկային ծառայությունների համար» դաշտը լրացվում է բոլոր մնացած այն դեպքերում, երբ հաղորդվող գեղծարարությունը չի դասվում 3.1, 3.2, 3.3 և 3.4 դաշտերին: Այս դաշտում պետք է լրացվեն գեղծարարության տվյալ օբյեկտի (գործիքի)՝ բանկին հայտնի բոլոր վավերապայմանները:

4) *«Գեղծարարության մասին արձանագրման (դիմումի) առկայությունը»* տողում բանկը պետք է տեղեկացնի, թե ինչի հիման վրա է արձանագրվել գեղծարարության փաստը:

5) *«Գեղծարարության արձանագրման ամսաթիվը»* այն ամսաթիվն է, երբ արձանագրվել է գեղծարարության փաստը բանկի կողմից:

6) *«Գեղծարարության հայտնաբերման վայրը»* այն տեղն է (ֆիզիկական հասցեն) և/կամ միջավայրը (ինտերնետ, բանկոմատ, քարտային հաշվի քաղվածք, բանկային մենեջմենթ, պրոցեսինգային կենտրոն, միջազգային վճարային համակարգ և այլն), որտեղ հայտնաբերվել է գեղծարարության փաստը կամ փորձը:

7) *«Գեղծարարությունը հայտնաբերողի մասին տվյալները»* տողում պետք է լրացվեն այն անձի մասին տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը, հասցեն և այլ անհրաժեշտ տվյալներ), ով տիրապետում է տվյալ գեղծարարության մասին որոշակի տեղեկատվության:

8) *«Գեղծարարության գործիքի առգրավման վայրը»* վերաբերում է այն դեպքերին, երբ տեղի է ունեցել գեղծարարության գործիքի փաստացի առգրավում իրավապահ մարմինների, բանկի աշխատակիցների, առևտրի և սպասարկման կետերի աշխատողների, բանկոմատների կողմից: Այս դաշտում պետք է լրացվի, թե ում կողմից է առգրավվել գեղծարարության գործիքը (բանկի կամ նրա բաժանմունքի աշխատողների, իրավապահ մարմինների, առևտրի և/կամ սպասարկման կետի աշխատողների, բանկոմատների) և առգրավման վայրի հասցեն:

9) *«Առգրավման ամսաթիվը»* այն ամսաթիվն է, երբ տեղի է ունեցել գեղծարարության գործիքի փաստացի առգրավում իրավապահ մարմինների, բանկի աշխատակիցների, առևտրի և սպասարկման կետերի աշխատողների, բանկոմատների կողմից:

10) *«Անօրինական օգտագործման տեղերը»* բոլոր այն տեղերն են, որտեղ իրականացվել են տվյալ գեղծարարության առարկայի նկատմամբ անօրինական գործունեություն կամ նման փորձեր:

11) *«Անօրինական օգտագործման ընթացքում կիրառվող սարքը (սարքերը, միջոցները)»* այն սարքն է կամ միջոցը (ԱԳՄ, ՊՕՍ-տերմինալ, տեղեկատվություն կարդացող և/կամ ձայնագրող սարք, բջջային հեռախոս և այլն), որի միջոցով իրականացվել է տվյալ գեղծարարությունը:

12) *«Անօրինական կատարված գործարքների ժամանակ օգտագործված գումարի և արժույթի վերաբերյալ տվյալները»* գեղծարարության ժամանակ կատարված բոլոր գործառնությունների արդյունքում կրած վնասի դրամային արտահայտությունն է ըստ յուրաքանչյուր գործառնության, ինչպես նաև այն արժույթը, որն ընտրել է գեղծարարն իր անօրինական գործունեության ընթացքում: Այս դաշտը կարող է չլրացվել, եթե լրացված են հաշվետվության 3.27 և 3.3.15 դաշտերը:

13) *«Կեղծիքների բնութագիրը»* դաշտում պետք է բնութագրվեն գեղծարարության ժամանակ կիրառված վճարային գործիքի, ինչպես նաև այլ փաստաթղթերի բոլոր այն վավերապայմանները, տվյալները կամ դաշտերը, որոնք ենթարկվել են ամբողջական կամ մասնակի կեղծման:

** Պաշտոնական հրատարակության մեջ տպագրվել է «3.5.3.»:*

14) *«Անօրինական կատարված գործարքների վերաբերյալ այլ տվյալներ»* դաշտում պետք է լրացվեն անօրինական կատարված գործարքների, կասկած հարուցող անձանց, ինչպես նաև ցանկացած այլ տվյալները, որոնք չեն ընդգրկվել նախորդ դաշտերում, սակայն կարող են էական նշանակություն ունենալ զեղծարարության ամբողջական պատկերը կազմելու համար (օրինակ՝ մարդկանց սուբյեկտիվ կարծիքը անօրինական կատարված գործարքների առանձնահատկությունների, դրանց միջև կապի վերաբերյալ և այլն):

15) *«Զեղծարարության դեպքի համառոտ բնութագիրը»* դաշտը նախատեսված է զեղծարարության դեպքի համառոտ բնութագրման համար, և, ըստ էության, ենթադրում է ինչպես բանկի կողմից հաշվետվության հետ միասին զեղծարարության ենթարկված սուբյեկտի դիմումի պատճենի տրամադրում, այնպես էլ բանկի աշխատողների մասնագիտական կարծիքը կատարված զեղծարարության վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում կարող են ավելացվել լրացուցիչ էջեր):

16) *«Դիմե՞լ եք արդյոք իրավապահ մարմիններին»* տողում բանկի աշխատողները պետք է տեղեկացնեն, արդյո՞ք դիմել են նրանք իրավապահ մարմիններին զեղծարարության դեպքի բացահայտման համար, թե նախընտրել են լուծել այն ինքնուրույն: Այս դաշտում պետք է ընտրել և նշել այո կամ ոչ:

17) *«Զեղծարարության բացահայտման աշխատանքների ընթացիկ իրավիճակը»* դաշտում պետք է լրացվի, թե որ փուլում են գտնվում զեղծարարության բացահայտման աշխատանքները, և ինչպիսին է իրավիճակը հաշվետվության լրացման պահի դրությամբ:

18) *«Համագործակցող այլ մարմինների մասին տվյալներ»* տողը պետք է լրացվի այն դեպքում, երբ բանկը տվյալ զեղծարարության բացահայտման համար համագործակցում է նաև այլ մարմինների կամ կազմակերպությունների հետ (օրինակ՝ ՀՀ-ում Ինտերպոլի Ազգային Կենտրոնական Բյուրոյի, ԱրՔա-ի, Վիզա-ի, ՄաստերՔարդ-ի, բանկերի, ինչպես նաև այլ մարմինների և փորձագետների հետ):

28. Թիվ 29 հաշվետվությունը ներկայացվում է եռամսյակային պարբերականությամբ, մասնաճյուղ ունեցող բանկերի կողմից:

Սույն հաշվետվության իմաստով՝ «Նշանակալի մասնաճյուղ» է համարվում այն մասնաճյուղը, որի ակտիվները կազմում են բանկի կոնսոլիդացված ընդհանուր ակտիվների հինգ տոկոսը (5%) կամ ավելին, ինչպես նաև այն մասնաճյուղը, որի կողմից ներգրավված ավանդները (գումարային արտահայտությամբ) կազմում են բանկի կողմից ներգրավված ավանդների հինգ տոկոսը (5%) կամ ավելին: Սույն հաշվետվության իմաստով ավանդ են համարվում բանկային հաշիվները, ցպահանջ և ժամկետային ավանդները:

Հաշվետվության մեջ բանկի կողմից նշվում են իր բոլոր արտերկրյա մասնաճյուղերը՝ ակտիվների չափի նվազման կարգով:

«Գտնվելու վայրը» սյունակում նշվում են քաղաքը և մարզը, իսկ արտերկրյա մասնաճյուղերի համար՝ քաղաքը և երկիրը:

Մասնաճյուղերում բացված ավանդների մեջ ներառվում են հաճախորդների կողմից բացված բոլոր տիպի ավանդները և բանկային հաշիվները:

«Մասնաճյուղի եկամուտները» և «Մասնաճյուղի ծախսերը» ներկայացվում են կուտակային՝ տարվա սկզբից մինչև հաշվետվության ներկայացման օրը:

29. Թիվ 30 հաշվետվությունը ներկայացվում է այն ամիսների համար, որոնց ընթացքում տեղի են ունեցել փոփոխություններ՝ կապված տերմինալների տեղադրման, տեղափոխման, փոխարինման կամ շահագործման դադարեցման հետ: Տերմինալներ են համարվում ավտոմատ գանձման մեքենաները (ԱԳՄ), ինֆորմացիոն վճարային տերմինալները/կիոսկները, արտարժույթի ավտոմատ փոխանակման տերմինալները և այլ վճարային տերմինալներ, որոնք թույլ են տալիս մատուցել վճարային ծառայություններ: Սույն հաշվետվության միջոցով ներկայացվում են նաև տեղեկատվություն շարժական տերմինալների վերաբերյալ, որոնք բանկը տեղադրել և հանել է շահագործումից շատ կարճ ժամանակով:

«1. Հաշվետու ամսվա ընթացքում շահագործման հանձնված տերմինալներ» աղյուսակում ընդգրկվում են հաշվետու ամսվա ընթացքում բանկի կողմից նոր տեղադրված, փոխարինված (արդեն նշված հասցեում շահագործվող տերմինալների փոխարինումը նորով) կամ նոր հասցե տեղափոխված և արդեն շահագործման հանձնված տերմինալների վերաբերյալ տեղեկատվությունը:

«Տերմինալի շահագործման հասցեն/գտնվելու վայրը» սյունակում նշվում է հաշվետու ամսվա ընթացքում տեղադրված և շահագործվող տերմինալի հասցեն: «Տերմի-

նալի շահագործման հասցեն/գտնվելու վայրը» սյունակը տրոհված է երկու ենթասյունակների՝ «Քաղաք/գյուղ» և «Հասցե/փողոց», որոնք լրացվում են հետևյալ կերպ.

«Քաղաք/գյուղ» սյունակում պետք է լրացվի այն քաղաքի, գյուղի կամ շրջանի անվանումը, որտեղ տեղադրվել է տվյալ տերմինալը:

«Հասցե/փողոց» սյունակում պետք է լրացվի այն փողոցի անվանումը, համարը, որտեղ տեղադրվել է տվյալ տերմինալը:

«Տերմինալի արտադրողը, մակնիշը» սյունակում նշվում է տվյալ տերմինալը արտադրող կազմակերպության անվանումը և այդ սարքավորման մակնիշը:

«Տերմինալի տեսակը ըստ ֆունկցիոնալ խմբավորման» սյունակում նշվում է համապատասխանաբար շահագործման հանձնված տերմինալների տեսակը՝ ըստ իրենց ֆունկցիոնալ խմբավորման (օրինակ՝ ԱԳՄ, ինֆորմացիոն վճարային տերմինալներ/կիոսկներ, արտարժույթի ավտոմատ փոխանակման տերմինալներ և այլն):

«Տեսախցիկների քանակը» սյունակում նշվում է համապատասխան տեղեկատվություն տեղադրված տեսախցիկների քանակի վերաբերյալ՝ թվերով: Եթե նույն հասցեում շահագործվում են մեկից ավելի տերմինալներ, որոնց համար տեղադրված է մեկ տեսախցիկ, ապա այդ տեսախցիկի մասին սյունակում նշվում է մեկ անգամ՝ մեկ տերմինալի դիմաց:

«Տեղադրման վայրի նկարագրություն» սյունակում նկարագրվում է տերմինալի տեղադրման վայրի առանձնահատկությունները: Օրինակ՝ բանկի «Կենտրոն» մասնաճյուղի արտաքին պատին, «Հայաստան» հանրախանութի ներսում, հատուկ պատրաստված կրպակի արտաքին պատին և այլն:

«Շահագործման հանձնման ամսաթիվը (օր/ամիս/տարի)» սյունակում նշվում է տվյալ տերմինալի շահագործումը սկսելու ամսաթիվը:

«2. Շահագործումից հանված տերմինալներ» աղյուսակում ընդգրկվում է տեղեկատվություն բանկի կողմից նախկինում նշված հասցեով շահագործվող և հաշվետու ամսվա ընթացքում շահագործումից հանված տերմինալների վերաբերյալ: Այս աղյուսակում լրացվում է նաև տեղեկատվություն այն տերմինալների վերաբերյալ, որոնք տվյալ շահագործվող հասցեից հանվել են նոր հասցեով տեղափոխելու նպատակով կամ պետք է փոփոխվեն մեկ այլ տերմինալով:

«Շահագործումից հանված տերմինալի հասցեն» սյունակում նշվում է հաշվետու ամսվա ընթացքում շահագործումից հանված տերմինալի հասցեն: «Շահագործումից հանված տերմինալի հասցեն» սյունակը տրոհված է երկու ենթասյունակների՝ «Քաղաք/գյուղ» և «Հասցե/փողոց», որոնք լրացվում են հետևյալ կերպ.

«Քաղաք/գյուղ» սյունակում պետք է լրացվի այն քաղաքի, գյուղի կամ շրջանի անվանումը, որտեղ շահագործումից հանվել է տվյալ տերմինալը:

«Հասցե/փողոց» սյունակում պետք է լրացվի այն փողոցի անվանումը, համարը, որտեղ շահագործումից հանվել է տվյալ տերմինալը:

«Տերմինալի արտադրողը, մակնիշը» սյունակում նշվում է տվյալ տերմինալը արտադրող կազմակերպության անվանումը և այդ սարքավորման մակնիշը:

«Տերմինալի տեսակը ըստ ֆունկցիոնալ խմբավորման» սյունակում նշվում է համապատասխանաբար շահագործումից հանված տերմինալների տեսակը ըստ իրենց ֆունկցիոնալ խմբավորման (օրինակ՝ ԱԳՄ, ինֆորմացիոն վճարային տերմինալներ/կիոսկներ, արտարժույթի ավտոմատ փոխանակման տերմինալներ և այլն):

«Շահագործման դադարեցման ամսաթիվը (օր/ամիս/տարի)» սյունակում նշվում է տվյալ տերմինալի շահագործումը դադարեցնելու ամսաթիվը:

30. Թիվ 31 հաշվետվությունը ներկայացվում է հետևյալ կերպ.

Տրամադրված քարտերի, քարտային գործառնությունների և սպասարկման կետերի վերաբերյալ հաշվետվությունը լրացվում և ներկայացվում է ամսական կտրվածքով:

1) «Քարտերի տրամադրում» աղյուսակը տարանջատված է երկու մասի «Մագնիսական ժապավենով քարտեր» և «Միկրոպրոցեսորային (սմարտ) քարտեր»

Աղյուսակի «Մագնիսական ժապավենով քարտեր» բաժնում բերվում են տվյալներ միայն մագնիսական ժապավենով թողարկված վճարային քարտերի վերաբերյալ, իսկ «Միկրոպրոցեսորային (սմարտ) քարտեր» մասում բերվում են տվյալներ սմարտ տեխնոլոգիայով և/կամ մագնիսական ժապավենով թողարկված քարտերի վերաբերյալ՝ աղյուսակի լրացման պահանջներին համապատասխան:

Աղյուսակի «Տրամադրվող քարտի անվանումը» սյունակի մեջ նշվում են այն բոլոր քարտերի անվանումները, որոնք ընդհանուր առմամբ կարող է տրամադրել բանկը: Քարտերի տարանջատում ըստ տի-պերի (օրինակ՝ ԱրՔա-կլասիկ, Վիզա-գոլդ, ԱրՔա առևտրային քատեր և այլն) չի կատարվում և նշվում է միայն ըստ քարտային համա-

կարգի խմբերի (օրինակ՝ ԱրՔա քարտեր, Վիզա քարտեր և այլն): Ընդ որում, եթե բանկի կողմից թողարկվել են տարբեր քարտային վճարային համակարգերի համատեղ քարտեր, որի վրա զետեղված է մեկից ավելի քարտային վճարային համակարգի ապրանքանիշը (լոգո), ապա այդպիսի տրամադրված քարտերի քանակը բանկի կողմից նշվում է առանձին տողով (օրինակ՝ ԱրՔա-Մաստեր և այլն) և չի ընդգրկվում մյուս խմբերում:

Բանկի և որևէ առևտրային/սպասարկման (ոչ-բանկ) կազմակերպության հետ համատեղ թողարկված քարտերի վերաբերյալ տեղեկատվությունն առանձին նշվում է «այդ թվում՝ առևտրային քարտեր» տողում (առևտրային քարտերը՝ բանկի կողմից որևէ ոչ-բանկ կազմակերպության հետ համատեղ թողարկված քարտերն են (օրինակ՝ Արքա-աֆֆինիտի (գործընկեր) և այլն), որոնք կարող են սպասարկվել համապատասխան առևտրային/սպասարկման ցանցում և նախատեսված են կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների վճարման համար):

«Տրամադրված վճարային քարտերի քանակը» ըստ քարտերի ֆունկցիաների համապատասխան սյունակներում նշումներ են կատարվում առաջին՝ «Տրամադրվող քարտի անվանումը» սյան մեջ նշված այն քարտերի դիմաց, որոնք տրամադրվել են բանկի կողմից և գտնվում են շրջանառության մեջ: Քարտերի քանակն ըստ առանձին խմբերի նշվում է հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ՝ հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում տրամադրված և շրջանառությունից հանված քարտերի քանակը: Այն քարտերը, որոնց գործողության ժամկետը լրացել է, սակայն հաճախորդի կողմից քարտը բանկին չի վերադարձվել նույնպես հանդիսանում են շրջանառությունից հանված:

Հաշվարկային (դեբետային) քարտեր սյունակում նշվում են գործող դեբետային ֆունկցիաներով քարտերը, ինչպես նաև, այն դեբետային ֆունկցիայով քարտերը, որոնց տրամադրվել է օվերդրաֆտ (Հաշվետվության լրացման կարգի իմաստով օվերդրաֆտ է համարվում վճարային քարտի համապատասխան հաշվի վրա բանկի կողմից վարկի տեսքով տրամադրված գումար):

«Վարկային/կրեդիտային քարտեր» սյունակներում համապատասխանաբար նշվում են գործող կրեդիտային ֆունկցիաներով քարտերը, որոնք թույլ են տալիս իրականացնել քարտերով գործառնություններ ավտոմատ գանձման մեքենաների, ՊՕՍ-տերմինալների, իմպրինտերների և այլ եղանակով:

«այդ թվում՝ միայն կանխիկացման նպատակով տրամադրված քարտեր» սյունակում նշվում է տրամադրված այն քարտերի քանակը, որոնք նախատեսված են միայն կանխիկացման գործառնություններ իրականացնելու համար (օրինակ՝ ԱԳՄ-ների միջոցով):

«Տրամադրված/գործող կանխավճարային քարտեր» սյունակում նշվում է բանկի կողմից թողարկված կանխավճարային քարտերի քանակը, որոնք գտնվում են շրջանառության մեջ: Կանխավճարային քարտերի քանակն ըստ առանձին խմբերի նշվում է հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ՝ հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում տրամադրված և շրջանառությունից հանված կանխավճարային քարտերի քանակը: Այն կանխավճարային քարտերը, որոնց գործողության ժամկետը դեռ չի լրացել, սակայն քարտի վրա միջոցները բացակայում են, նույնպես չեն ընդգրկվում աղյուսակում:

«Ընդամենը» տողերում համապատասխանաբար բերվում են աղյուսակի «Մագնիսական ժապավենով քարտեր» և «Միկրոպրոցեսորային (սմարտ) քարտեր» բաժիններում լրացված շրջանառության մեջ գտնվող բոլոր քարտերի ընդհանուր քանակը:

2) «Քարտեր սպասարկողներ և սպասարկման միջոցներ» աղյուսակում լրացվում է հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ բանկի միջոցով քարտերի սպասարկում իրականացնող կետերի և դրանցում տեղադրված սարքավորումների քանակը: Եթե մեկ սպասարկման կետում տեղադրված են մեկից ավելի սարքավորումներ, պետք է նշվի բոլոր սարքերի քանակը: Որպես սպասարկման կետ պետք է դիտարկել տվյալ կազմակերպությունը, այլ ոչ թե վերջինիս ներսում տեղադրված սարքավորման տեղը (օրինակ՝ խանութի ներսում տարբեր բաժիններում մի քանի ՊՕՍ-տերմինալներ տեղադրման դեպքում տվյալ խանութը կդիտարկվի որպես մեկ միավոր (սպասարկման կետ), այլ ոչ թե վերջինիս բաժինները: Միաժամանակ, եթե գործում է մեկ ֆիրմային խանութների ցանց տարբեր հասցեներում, ապա այդ խանութները չեն դիտարկվում որպես մեկ միավոր):

Աղյուսակի «Անվանումը» սյունակում ըստ տարանջատված մասերի նշվում են այն կազմակերպությունները (բացառությամբ այլ առևտրային բանկերի), որոնք հաշվետու

բանկի հետ կնքված համապատասխան պայմանագրի հիման վրա իրականացնում են քարտերի սպասարկումը:

Ընդ որում, «Բանկի գլխամաս/մասնաճյուղ» տողում նշվում են հաշվետու բանկի գլխամասը և կառուցվածքային ստորաբաժանումները, որտեղ իրականացվում է քարտերի սպասարկում:

«Այլ (նշել)» տողերում նշվում են բանկի հետ կնքված համապատասխան պայմանագրի հիման վրա քարտերի սպասարկում ապահովող այլ կազմակերպությունների տեսակները (օրինակ՝ ինտերնետ սրահ և այլն):

«Սպասարկման կետեր» սյունակը բաղկացած է «Բանկի կողմից սպասարկվող կետերի քանակը» և «Այլ բանկի հետ համատեղ սպասարկվող կետերի քանակը» բաժիններից:

«Այլ բանկի հետ համատեղ սպասարկվող կետերի քանակը» սյունակում նշվում են մեկ այլ բանկի/ կազմակերպության այն սարքավորումները, որոնք արդեն իսկ շահագործվում են նրանց կողմից և համատեղությամբ ընդգրկվել են հաշվետու բանկի սպասարկման ցանցում: «Այլ բանկի հետ համատեղ սպասարկվող կետերի քանակը» չպետք է ընդգրկվի հաշվետու բանկի կողմից լրացվող «Բանկի կողմից սպասարկվող կետերի քանակը» սյունակում:

«Բանկի կողմից տեղադրված սարքերով քարտեր սպասարկող կետերի քանակը» սյունակի մեջ, ըստ աղյուսակի՝ «Անվանումը» սյունակի տարանջատման և համապատասխան տողերի, նշվում է այն կազմակերպությունների (բացառությամբ այլ առևտրային բանկերի) քանակը, որոնք տվյալ բանկի միջոցով իրականացնում են վճարային քարտերի սպասարկումը՝ բանկի կողմից տեղադրված սարքերով:

«Սպասարկման կետերում տեղադրված սարքավորումների քանակը» սյունակի ենթամասերում համապատասխանաբար ըստ «Ավանման» սյունակի տարանջատման, նշվում են սպասարկման կետերում տեղադրված ԱԳՄ-ների, ՊՕՍ-տերմինալների, իմպրինտերների քանակը և այլ բանկի/կազմակերպության հետ համատեղությամբ սպասարկվող ԱԳՄ, ՊՕՍ և իմպրինտերների քանակները:

«Վիրտուալ միջավայրում գրանցված սպասարկման կետերի քանակը» սյունակում, ըստ «Անվանումը» սյունակի դասակարգման, նշվում է տվյալ բանկի միջոցով գրանցված այն կազմակերպությունների քանակը, որոնք իրենց ծառայություններն են առաջարկում վիրտուալ միջավայրում:

3) Հաշվետվության «Հաշվետու առևտրային բանկի կողմից թողարկված քարտերով գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման կետերի» աղյուսակում բերվում է տեղեկատվություն հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տարածքում՝ հաշվետու բանկի կողմից թողարկված քարտերով կատարված գործառնությունների վերաբերյալ, որոնք կատարվել են հաշվետու բանկի սպասարկման կետերում և ՀՀ այլ առևտրային բանկերի սպասարկման կետերում: Աղյուսակում չեն ներկայացվում ՀՀ այլ առևտրային բանկերի կողմից թողարկված քարտերով հաշվետու բանկի սպասարկման կետերում կատարված գործառնությունների վերաբերյալ տվյալները: Եթե հաշվետու առևտրային բանկի սպասարկման կետում իրականացվում են գործառնություններ օտարերկրյա բանկի կողմից թողարկված քարտով, ապա այդ տվյալները ներկայացվում են «Արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերի սպասարկում» աղյուսակում:

Քարտերով կատարված գործառնութունները դասակարգվում են ըստ քարտերի տեսակների (կիրառվող վճարման սխեմայի՝ հաշվարկային (դեբետային) քարտ, վարկային (կրեդիտային) քարտ, վարկային՝ առևտրային քարտ, կանխավճարային քարտ) և ըստ կիրառվող վճարման սխեմայի՝ միաժամանակ խմբավորվում են ըստ տարբեր քարտային համակարգերի խմբերի:

Ուստի աղյուսակը տրոհված է հետևյալ չորս ենթաբաժինների՝ ըստ նշված կիրառվող վճարման սխեմաների՝ «Հաշվարկային (դեբետային) քարտեր», «Վարկային (կրեդիտային) քարտեր», «Այդ թվում առևտրային քարտեր», «Կանխավճարային քարտեր»:

Աղյուսակի «Հաշվարկային (դեբետային) քարտեր» ենթաբաժնում լրացվում են հաշվետու բանկի թողարկած հաշվարկային (դեբետային) սխեմայով գործող քարտերով բանկի և ՀՀ այլ առևտրային բանկերի սպասարկման կետերում կատարված գործառնությունների վերաբերյալ տվյալները: Հաշվարկային (դեբետային) քարտեր օվերդրաֆտի հնարավորությամբ թողարկած քարտերով իրականացված գործառնությունները նույնպես լրացվում են «Հաշվարկային (դեբետային) քարտեր» ենթաբաժնում:

Աղյուսակի «Վարկային (կրեդիտային) քարտեր» ենթաբաժնում լրացվում են հաշվետու բանկի թողարկած վարկային (կրեդիտային) սխեմայով գործող քարտերով բանկի և ՀՀ այլ առևտրային բանկերի սպասարկման կետերում կատարված գործառնությունների վերաբերյալ տվյալները:

Աղյուսակի «Կանխավճարային քարտեր» ենթաբաժնում լրացվում են հաշվետու բանկի թողարկած կանխավճարային սխեմայով գործող քարտերով կատարված գործառնությունների վերաբերյալ տվյալները, որոնք կատարվել են բանկի և ՀՀ այլ առևտրային բանկերի սպասարկման կետերում:

Աղյուսակի «Այդ թվում՝ առևտրային քարտեր» ենթաբաժնում լրացվում են որոշակի առևտրի կետերում գործառնություններ իրականացնելու նպատակով հաշվետու բանկի կողմից թողարկված (այդ թվում՝ նաև առևտրի/սպասարկման կետերի հետ համատեղ) առևտրային քարտերով կատարված գործառնությունները, որոնք կատարվել են հաշվետու բանկի և/կամ ՀՀ այլ առևտրային բանկերի սպասարկման կետերում:

«Բանկի կողմից (ըստ կիրառվող վճարման սխեմայի) թողարկված քարտերի սպասարկումը» սյունակում նշվում են այն քարտերի անվանումները, որոնք տվյալ բանկը կարող է թողարկել/սպասարկել: Ընդ որում, տարբեր համակարգերին պատկանող հաշվետու բանկի թողարկած քարտերը, որոնք սպասարկվել են հաշվետու ժամանակահատվածում, բերվում են միայն ըստ քարտային համակարգի խմբերի (օրինակ՝ ԱրՔա, Վիզա, Մաստեր քարտ, Ամեքս և այլ քարտային համակարգերի քարտեր): Ըստ քարտերի տիպերի (կլասիկ, գոլդ, բիզնես, առևտրային քարտեր, և այլն) դասակարգում չի իրականացվում:

«ԱրՔա» վճարային համակարգի ապրանքանիշի (լոգո) հետ միասին որևէ միջազգային քարտային վճարային համակարգի ապրանքանիշով թողարկված քարտերի սպասարկման դեպքում, հնարավորության դեպքում բանկի կողմից առանձին տողով նշվում են այդպիսի քարտերով կատարված գործառնությունները (օրինակ՝ ԱրՔա-Վիզա, Արքա-Մաստեր և այլն)՝ պահպանելով հաշվետվության լրացման պահանջները:

Աղյուսակի «Կատարված գործառնություններ» մասը տրոհված է՝ «ԱԳՄ (ATM)-ի միջոցով», «ՊՕՍ- տերմինալի (POS) և Իմպրինտերի միջոցով», «Վիրտուալ միջավայրում» կատարված գործառնությունների վերաբերյալ սյունակների: Ըստ նշված համապատասխան սյունակների և ֆունկցիոնալ տարանջատման՝ բերվում է տեղեկատվություն «Բանկի կողմից (ըստ կիրառվող վճարման սխեմայի) թողարկված քարտերի սպասարկումը» սյունակում հաշվետու բանկի կողմից թողարկված այն քարտերի դիմաց, որոնց միջոցով կատարվել են գործառնություններ ՀՀ տարածքում՝ հաշվետու բանկի և ՀՀ այլ առևտրային բանկերի սպասարկման կետերում: Այս սյունակներում բերված տվյալները պետք է բացառեն միմյանց:

«Հաշվետու առևտրային բանկի կողմից թողարկված քարտերով գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման կետերի» աղյուսակում կատարված գործառնությունները՝ «ԱԳՄ (ATM)-ի միջոցով», «ՊՕՍ-տերմինալի (POS) և Իմպրինտերի միջոցով» սյունակներից յուրաքանչյուրն իր հերթին տարանջատվում է երկու ենթասյունակների՝ «Կանխիկացում» և «Անկանխիկ գործառնություն»: Բացի այդ, միայն «ԱԳՄ (ATM)-ի միջոցով» կատարված գործառնություններ սյունակը ընդգրկում է նաև «Կանխիկի մուտքագրում» ենթասյունակը:

«Կանխիկացում» ենթասյունակներում, ըստ սպասարկված քարտերի ֆունկցիոնալ տարանջատման և քարտերի խմբերի ու ըստ քարտեր սպասարկող միջոցների, պետք է նշվեն տվյալ սարքավորման միջոցով իրականացված կանխիկացման գործառնությունները հաշվետու ժամանակահատվածում:

«Անկանխիկ գործառնություն» ենթասյունակներում, ըստ սպասարկված քարտերի ֆունկցիոնալ տարանջատման և քարտերի խմբերի ու ըստ քարտեր սպասարկող միջոցների (ԱԳՄ-ի, ՊՕՍ-տերմինալի և Իմպրինտերի), պետք է նշվեն տվյալ սարքավորման միջոցով քարտերով կատարված անկանխիկ գործառնությունները (օրինակ՝ կոմունալ և այլ ծառայությունների դիմաց անկանխիկ փոխանցումներ, անկանխիկ վճարումներ):

«Կանխիկի մուտքագրում» ենթասյունակում, ըստ սպասարկված քարտերի ֆունկցիոնալ տարանջատման և քարտերի խմբերի, պետք է նշվեն տվյալ սարքավորման միջոցով իրականացված կանխիկ միջոցների մուտքագրման գործառնությունները հաշվետու ժամանակահատվածում:

«Վիրտուալ միջավայրում» կատարված գործառնությունների վերաբերյալ սյունակը տարանջատվում է «Էլեկտրոնային առևտուր» և «Քարտային փոխանցումներ» ենթասյունակների:

«Վիրտուալ միջավայրում» կատարված գործառնություններ սյունակում, ըստ սպասարկված քարտերի ֆունկցիոնալ տարանջատման և քարտերի խմբերի, պետք է նշվեն վիրտուալ միջավայրում քարտերով կատարված անկանխիկ գործառնությունները (օրինակ՝ կոմունալ և այլ ծառայությունների դիմաց անկանխիկ փոխանցումներ, անկանխիկ վճարումներ, քարտից-քարտ փոխանցումներ և այլն):

«Էլեկտրոնային առևտուր» ենթասյունակում ընդգրկվում են վիրտուալ միջավայրում էլեկտրոնային առևտրի իրականացման ընթացքում կատարված վճարումները:

«Քարտային փոխանցումներ» ենթասյունակում ընդգրկվում են վիրտուալ միջավայրում քարտերով իրականացված էլեկտրոնային առևտրից բացի մյուս անկանխիկ փոխանցումները:

4) Հաշվետվության «Արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերի սպասարկում» աղյուսակում բերվում է տեղեկատվություն հաշվետու ժամանակահատվածում բանկի սպասարկման կետերում արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերով կատարված գործառնությունների վերաբերյալ:

«Արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերով գործառնությունները տվյալ բանկի սպասարկման կետերում» սյունակում պետք է նշվեն այն քարտերի անվանումները, որոնց տվյալ բանկը սպասարկել է: Ընդ որում, տարբեր համակարգերի պատկանող սպասարկված քարտերը (ԱրՔա, Վիզա, Մաստեր քարտ, Ամեքս և այլ քարտային համակարգերի քարտեր) նշվում են ըստ իրենց խմբերի: Իսկ ըստ քարտերի տիպերի (կլասիկ, գոլդ, բիզնես և այլն) դասակարգում չի իրականացվում:

Ընդ որում, «Արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերի սպասարկում» աղյուսակում հաշվետու բանկի կողմից «Այլ բանկի հետ համատեղ սպասարկվող կետերում» համատեղված սարքավորումների միջոցով օտարերկրյա բանկի թողարկած քարտով կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր բանկ նշում է միայն իր կողմից քարտերի սպասարկման տվյալների մասին (օրինակ, եթե Ա-բանկը սպասարկում է Մաստեր քարդ համակարգի քարտեր, իսկ Բ-բանկը սպասարկում է Վիզա քարտեր և վերջինս Ա- բանկի հետ կնքված պայմանագրի համաձայն ստացել է իրավունք Ա-բանկի սպասարկման կետերի միջոցով Վիզա քարտերի սպասարկում իրականացնելու վերաբերյալ, ապա Ա-բանկը նշում է միայն Մաստեր քարդ համակարգի քարտերի սպասարկման մասին, իսկ Բ-բանկը նշում է այդ կետերի միջոցով կատարված միայն Վիզա քարտերի սպասարկման մասին):

Աղյուսակի «Կատարված գործառնություններ» մասը ընդգրկում է «ԱԳՄ (ATM)-ի միջոցով», «ՊՕՍ-տերմինալի (POS) միջոցով», «Իմպրինտերի միջոցով», «Վիրտուալ միջավայրում» կատարված գործառնությունների վերաբերյալ սյունակները: Ըստ նշված համապատասխան սյունակների՝ բերվում է տեղեկատվություն «Բանկի կողմից սպասարկված արտասահմանյան բանկերի քարտերի անվանումը» սյունակում նշված այն քարտերի մասին, որոնց միջոցով կատարվել են գործառնություններ՝ տվյալ բանկի սպասարկման կետերում: Այս սյունակներում բերված տվյալները պետք է բացառեն միմյանց:

«Արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերի սպասարկում» աղյուսակում կատարված գործառնություններ՝ «ԱԳՄ (ATM)-ի միջոցով», «ՊՕՍ-տերմինալի (POS) միջոցով», «Իմպրինտերի միջոցով» սյունակներից յուրաքանչյուրը տարանջատվում է երկու ենթասյունակների՝ «Կանխիկացում» և «Անկանխիկ գործառնություն»: Բացի այդ, միայն «ԱԳՄ (ATM)-ի միջոցով» կատարված գործառնություններ սյունակը ընդգրկում է նաև «Կանխիկի մուտքագրում» ենթասյունակը:

«Կանխիկի մուտքագրում» ենթասյունակում, ըստ սպասարկված քարտերի ֆունկցիոնալ տարանջատման և քարտերի խմբերի, պետք է նշվեն ԱԳՄ (ATM)-ի միջոցով իրականացված կանխիկ միջոցների մուտքագրման գործառնությունները հաշվետու ժամանակահատվածում:

«Կանխիկացում» ենթասյունակներում, ըստ սպասարկված քարտերի տիպերի և ըստ քարտեր սպասարկող միջոցի, պետք է նշվեն տվյալ սարքավորման միջոցով իրականացված կանխիկացման գործառնությունները հաշվետու ժամանակահատվածում:

«Անկանխիկ գործառնություն» ենթասյունակներում, ըստ սպասարկված քարտերի տիպերի և ըստ քարտեր սպասարկող միջոցի (ԱԳՄ-ի, ՊՕՍ-տերմինալի, Իմպրինտերի), պետք է նշվեն տվյալ սարքավորման միջոցով քարտերով կատարված անկանխիկ գործառնությունները (օրինակ, կոմունալ և այլ ծառայությունների դիմաց անկանխիկ փոխանցումներ, անկանխիկ վճարումներ):

«Վիրտուալ միջավայրում» կատարված գործառնությունների վերաբերյալ սյունակը տարանջատվում է «էլեկտրոնային առևտուր» և «Քարտային փոխանցումներ» ենթասյունակների:

«Վիրտուալ միջավայրում» կատարված գործառնություններ սյունակում, ըստ սպասարկված քարտերի տիպերի, պետք է նշվեն վիրտուալ միջավայրում քարտերով կատարված անկանխիկ գործառնություններն՝ ըստ վերջինիս ենթասյունակների:

«Էլեկտրոնային առևտուր» ենթասյունակում ընդգրկվում են վիրտուալ միջավայրում էլեկտրոնային առևտրի իրականացման ընթացքում կատարված վճարումները:

«Քարտային փոխանցումներ» ենթասյունակում ընդգրկվում են վիրտուալ միջավայրում քարտերով իրականացված էլեկտրոնային առևտրից բացի մյուս անկանխիկ փոխանցումները:

5) «Ըստ վճարային քարտերի տեսակների՝ բանկի կողմից թողարկված քարտերի սպասարկումը արտասահմանում» աղյուսակում բերվում է տեղեկատվություն բանկի կողմից թողարկված քարտերով հաշվետու ժամանակահատվածում արտասահմանում կատարված գործառնությունների վերաբերյալ:

Աղյուսակը տրոհված է երեք ենթաբաժինների՝ ըստ կիրառվող վճարման սխեմաների՝ «Հաշվարկային (դեբետային) քարտեր», «Վարկային (կրեդիտային) քարտեր», «Կանխավճարային քարտեր»:

Աղյուսակի «Հաշվարկային (դեբետային) քարտեր» ենթաբաժնում լրացվում են հաշվարկային (դեբետային) սխեմայով գործող քարտերով (որոնք թողարկված են հաշվետու բանկի կողմից) արտասահմանում կատարված գործառնությունների վերաբերյալ տվյալները: Հաշվարկային (դեբետային) քարտեր օվերդրաֆտի հնարավորությամբ՝ քարտերով իրականացված գործառնությունները (որոնք թողարկված են հաշվետու բանկի կողմից) նույնպես լրացվում են «Հաշվարկային (դեբետային) քարտեր» ենթաբաժնում:

Աղյուսակի «Վարկային (կրեդիտային) քարտեր» ենթաբաժնում լրացվում են վարկային (կրեդիտային) սխեմայով գործող քարտերով (որոնք թողարկված են հաշվետու բանկի կողմից) արտասահմանում կատարված գործառնությունների վերաբերյալ տվյալները:

Աղյուսակի «Կանխավճարային քարտեր» ենթաբաժնում լրացվում են կանխավճարային սխեմայով գործող քարտերով (հաշվետու բանկի կողմից թողարկված) արտասահմանում կատարված գործառնությունների վերաբերյալ տվյալները:

«Արտասահմանում սպասարկված քարտեր ըստ կիրառվող վճարման սխեմայի» սյունակում նշվում են բանկի կողմից թողարկված քարտերը, որոնք դասակարգվում են ըստ քարտերի տեսակների՝ հաշվարկային (դեբետային), վարկային (կրեդիտային), կանխավճարային քարտ և խմբավորվում են ըստ տարբեր քարտային համակարգերի՝ համապատասխանաբար յուրաքանչյուր համակարգին պատկանող քարտերը նշվում են մեկ խմբում:

Գործառնություններ «Արտասահմանում» սյունակում լրացվում են ՀՀ տարածքից դուրս գտնվող սպասարկման կետերի միջոցով բանկի կողմից թողարկված քարտերով հաշվետու ժամանակահատվածում կատարված գործառնությունները բնութագրող տվյալներ:

Աղյուսակի գործառնություններ «Արտասահմանում» սյունակը տարանջատվում է երեք ենթասյունակների՝ «Կանխիկի մուտքագրում», «Կանխիկացում» և «Անկանխիկ գործառնություն»:

«Կանխիկի մուտքագրում» ենթասյունակում, ըստ սպասարկված քարտերի ֆունկցիոնալ տարանջատման և ըստ տարբեր քարտային համակարգերի քարտերի խմբերի, պետք է նշվեն «Արտասահմանում» քարտերի սպասարկման համապատասխան սարքավորումներով (ԱԳՄ-ներ) իրականացված կանխիկի մուտքագրման գործառնությունները՝ հաշվետու ժամանակահատվածում:

«Կանխիկացում» ենթասյունակում, ըստ սպասարկված քարտերի ֆունկցիոնալ տարանջատման և ըստ տարբեր քարտային համակարգերի քարտերի խմբերի, պետք է նշվեն «Արտասահմանում» քարտերի սպասարկման սարքավորումներով (ԱԳՄ-ի, ՊՕՍ-տերմինալի, Իմպրինտերի) իրականացված կանխիկացման գործառնությունները՝ հաշվետու ժամանակահատվածում:

«Անկանխիկ գործառնություն» ենթասյունակում նույնպես՝ ըստ սպասարկված քարտերի ֆունկցիոնալ տարանջատման և ըստ տարբեր քարտային համակարգերի քարտերի խմբերի, պետք է նշվեն «Արտասահմանում» քարտերի սպասարկման սարքավորումներով (ԱԳՄ-ի, ՊՕՍ-տերմինալի, Իմպրինտերի), ինչպես նաև վիրտուալ միջավայրում կատարված անկանխիկ գործառնությունները:

Սույն հաշվետվության բոլոր աղյուսակներում բոլոր ազատ տողերում և «Այլ (նշել)» տողում լրացվում են համապատասխան աղյուսակի առաջին սյունակում չնշված, սակայն աղյուսակի լրացման տրամաբանությանը համապատասխան տվյալները, մինչև համապատասխան անունով տողի ավելացումը:

Սույն հաշվետվության մեջ բոլոր աղյուսակներում տեղեկատվության լրացման նպատակով նախատեսված տողերի չբավարարման, կամ բանկի կողմից նոր վճարային քարտերի տրամադրման կամ սպասարկման դեպքում՝ համապատասխան աղյուսակի «Այլ (նշել)» տողերում դրանց անվանումը նշելու նպատակով հաշվետու բանկի կողմից ՀՀ կենտրոնական բանկին նախապես կատարված տեղեկացման միջոցով աղյուսակներում կավելացվեն համապատասխան անվանումով տողեր՝ տեղեկատվության ճիշտ արտացոլման համար:

ԳԼՈՒԽ V. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

34. Ամսական և եռամսյակային հաշվետվությունների՝ բացառությամբ ձև թիվ 8 հաշվետվության, ներկայացման ժամկետը մասնաճյուղերի քանակից ելնելով՝ սահմանվում է.

ա. մասնաճյուղեր չունեցող և մինչև 15 (ներառյալ) մասնաճյուղ ունեցող բանկերի համար՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 4-րդ աշխատանքային (բանկային) օրը (ներառյալ).

բ. 16 և ավելի մասնաճյուղ ունեցող բանկերի համար՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային (բանկային) օրը (ներառյալ):

Ընդ որում, եթե սույն կանոնակարգի 2-րդ կետով պահանջվում է տվյալ հաշվետվությունը ներկայացնել և՛ ամսական, և՛ եռամսյակային պարբերականությամբ, ապա պետք չէ ներկայացնել երրորդ ամսվա ամսական հաշվետվությունը, այլ միայն եռամսյակային հաշվետվությունը:

Ձև թիվ 8 հաշվետվության ներկայացման ժամկետը սահմանվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 15-րդ օրացույցային օրը (ներառյալ):

35. Տարեկան հաշվետվությունների ներկայացման ժամկետը սահմանվում է.

ա. մասնաճյուղեր չունեցող և մինչև 15 (ներառյալ) մասնաճյուղ ունեցող բանկերի համար՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 20-ը: Եթե հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 20-ը համընկնում է ոչ աշխատանքային (ոչ բանկային) օրվա հետ, ապա հաշվետվությունների ներկայացման ժամկետը վերոնշյալ ժամկետին հաջորդող առաջին աշխատանքային (բանկային) օրն է:

բ. 16 և ավելի մասնաճյուղ ունեցող բանկերի համար՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 30-ը: Եթե հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 30-ը համընկնում է ոչ աշխատանքային (ոչ բանկային) օրվա հետ, ապա հաշվետվությունների ներկայացման ժամկետը վերոնշյալ ժամկետին հաջորդող առաջին աշխատանքային (բանկային) օրն է:

36. Շաբաթական հաշվետվությունները ներկայացվում են մինչև հաշվետու շաբաթվան հաջորդող երկրորդ աշխատանքային (բանկային) օրը (ներառյալ):

37. Թիվ 4 երկշաբաթյա հաշվետվությունը ներկայացվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող շաբաթվա առաջին աշխատանքային (բանկային օրը) օրը (ներառյալ):

38. Թիվ 10 հաշվետվությունը ներկայացվում է մինչև յուրաքանչյուր փոփոխությունն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 6-րդ աշխատանքային (բանկային) օրը:

39. Թիվ 21 հաշվետվությունը ներկայացվում է արժեթղթերի թողարկման ավարտից ոչ ուշ, քան 10 օր հետո:

40. «Հաշվետվություն արտարժույթի առք և վաճառքի գործառնությունների վերաբերյալ» թիվ 19 (օրական) հաշվետվությունը, անկախ իրականացված գործարքի ծավալի մեծությունից, ներկայացվում է Կենտրոնական բանկի վիճակագրության վարչություն՝ յուրաքանչյուր օր մինչև ժամը 15.00-ն (հաշվետվությունում արտացոլված տվյալները պետք է ներկայացնել Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ Սի-Բի-էյ-նեթ համակարգի խափանման դեպքում՝ էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային կրիչների միջոցով):

Բացի թիվ 19 հաշվետվությունից՝ բանկերը պարտավոր են Հայաստանի Հանրապետության միջբանկային շուկայում իրականացված Հայաստանի Հանրապետության դրամով արտարժույթի առքի կամ վաճառքի սփոթ տեսակի յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ գործարքի կնքման պահից հետո 15 րոպեի ընթացքում «Միջբանկային

արտարժութային շուկայում կնքված գործարքների վերաբերյալ տեղեկացման համակարգի», իսկ վերջիններիս անսարք լինելու դեպքում՝ հեռախոսի կամ ֆաքսի միջոցով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացնել տեղեկանք՝ նշելով գործարքի տեսակը (առք/վաճառք), գործարքի արժույթը (արժույթի տեսակը, կանխիկ/անկանխիկ), գործարքի ծավալը և փոխարժեքը:

ԳԼՈՒԽ VI. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՌԵԶԻԴԵՆՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ

41. Բանկերի կողմից ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների ռեզիդենտությունը որոշվում է սույն կանոնակարգի հավելված 2-ում ներկայացված հարցաթերթիկի հարցերի պատասխանների ամփոփման արդյունքում:

ԳԼՈՒԽ VII. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

2.1	*այդ թվում՝ բանկի ղեկավարների (ներառյալ բաժնի պետերի)*			
2.2	*այդ թվում՝ ոչ ղեկավար աշխատակիցների*			
2.3	*այդ թվում՝ սպասարկող անձնակազմի*			
3	**Բանկի աշխատակիցների այլ վճարումների ֆոնդ**			
3.1	*այդ թվում՝ բանկի ղեկավարների (ներառյալ բաժնի պետերի)*			
3.2	*այդ թվում՝ ոչ ղեկավար աշխատակիցների*			
3.3	*այդ թվում՝ սպասարկող անձնակազմի*			
4	**Բանկի աշխատակիցների վերապատրաստումների քանակը (վերապատրաստումները ֆինանսաբանկային ոլորտում)**			
4.1	*այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում*			
4.2	*այդ թվում՝ ԱՊՀ երկրներում*			
4.3	*այդ թվում՝ այլ երկրներում*			
5	**Վերապատրաստումների մասնակցած աշխատակիցների քանակը**			
5.1	*այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում*			
5.2	*այդ թվում՝ ԱՊՀ երկրներում*			
5.3	*այդ թվում՝ այլ երկրներում*			
6	**Բանկի աշխատակիցների քանակը, ովքեր ունեն ֆինանսաբանկային համակարգում փորձ**			
6.1	*10 տարուց ավելի*			
6.2	*5-10 տարվա*			
6.3	*3-5 տարվա*			
6.4	*1-3 տարվա*			
6.5	*մինչև 1 տարվա*			
7	**Բանկի աշխատակիցների քանակը, ովքեր ունեն միջնակարգ կրթություն**			
8	**Բանկի աշխատակիցների քանակը, ովքեր ունեն բարձրագույն կրթություն**			
9	**Բանկի աշխատակիցների քանակը, ովքեր ունեն գիտական աստիճան**			

Կ.Տ.

Բանկի վարչության նախագահ _____
(գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ _____

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշմամբ

Ձև թիվ 28
(զեղծարարության հայտնաբերման
պահից 10 օրվա ընթացքում)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կատարված խարդախությունների, խարդախության փորձերի վերաբերյալ

Բանկի անվանումը _____

Լրացման ամսաթիվը _____ _____ _____
օր *ամիս* *տարի*

Հաշվառման տվյալներ

1. Հաղորդվող խարդախության (չարաշահմնան) հերթական համարը _____
2. Խարդախության տեսակը
   - ❑ վճարային քարտերով իրականացվող խարդախություն
     - ❑ կորցրած/գողացված (lost/stolen) քարտերով իրականացվող խարդախություն
     - ❑ կեղծ քարտերի պատրաստում և օգտագործում (counterfeit/skimming)
     - ❑ չստացված քարտերով իրականացվող խարդախություն (mail non-receipt fraud)
     - ❑ առանց քարտի ներկայացման միջավայրում իրականացվող խարդախություն (card-not-present fraud-CNP)
     - ❑ այլ (նշել) _____
   - ❑ չեկերով իրականացվող խարդախություն
   - ❑ վճարման հանձնարարականներով իրականացվող խարդախություն
   - ❑ այլ վճարային գործիքներով իրականացվող խարդախություն (նշել) _____
     _____
   - ❑ ինտերնետ միջավայրում իրականացվող խարդախություն
     - ❑ էլեկտրոնային առևտուր
     - ❑ «phishing»
     - ❑ այլ (նշել) _____
   - ❑ բանկային հեռակառավարման համակարգերում իրականացվող խարդախություն
     - ❑ հեռախոսային բանկային հեռակա սպասարկման համակարգ (Telephone banking)
     - ❑ բանկ-հաճախորդ համակարգ (PC banking)
     - ❑ ինտերնետ-բանկ համակարգ (Internet banking)
     - ❑ մոբիլ հեռախոսով բանկային հեռակա սպասարկման համակարգ (Mobile banking)
     - ❑ այլ (նշել) _____
   - ❑ բանկում տեղի ունեցած և հայտնաբերված խարդախություններ, չարաշահումներ և նման այլ դեպքեր
   - ❑ այլ տեսակի զեղծարարություն (նշել) _____
     _____

Այն առարկաները, որոնց օգնությամբ իրականացվել են խարդախությունները

3.1 Վճարային քարտերի համար

3.1.1 քարտի տեսակը _____
3.1.2 քարտի տիպը _____
3.1.3 քարտը թողարկողի վերաբերյալ տվյալներ _____

3.1.4 քարտապանի վերաբերյալ տվյալներ _____
3.1.5 քարտի համարը _____
3.1.6 քարտի վավերության (գործողության) ժամկետը _____

3.2 Չեկերի համար

3.2.1 չեկի տեսակը _____
3.2.2 չեկի համարը _____
3.2.3 չեկը դուրս գրած ֆինանսական կազմակերպության անվանումը և հասցեն _____
3.2.4 չեկատուի անուն/ազգանունը (անվանումը) և հասցեն _____
3.2.5 չեկի դուրսգրման տեղը և ամսաթիվը _____
3.2.6 չեկատիրոջ անուն/ազգանունը (անվանումը) _____
3.2.7 չեկում նշված գումարը և արժույթը _____

3.3 Վճարման հանձնարարականների համար

3.3.1 վճարման եղանակը/համակարգը _____
3.3.2 վճարման հանձնարարականի համարը _____
3.3.3 վճարողի բանկի անվանումը _____
3.3.4 ներկայացման ամսաթիվը _____
3.3.5 կատարման ամսաթիվը _____
3.3.6 ակցեպտավորման ամսաթիվը _____
3.3.7 վճարման ամսաթիվը _____
3.3.8 ուղարկողի անունը (անվանումը) _____
3.3.9 ստացող բանկի (մասնաճյուղի) անվանումը _____
3.3.10 դեբետագրվող հաշիվը _____
3.3.11 միջնորդ բանկի (բանկերի) անվանումը _____
3.3.12 շահառուի անունը (անվանումը) _____
3.3.13 շահառուի բանկի (մասնաճյուղի) անվանումը _____
3.3.14 կրեդիտագրվող հաշիվը _____
3.3.15 գումարը (թվերով) և արժույթը (կոդով) _____
3.3.16 գործարքի նպատակը _____

3.4 Ինտերնետ և այլ նոր տեխնոլոգիաների համար

3.4.1 անօրինական գործունեության իրականացման միջավայրի վերաբերյալ տվյալներ _____
3.4.2 այն առարկայի վերաբերյալ տվյալներ, որի օգնությամբ իրականացվել է զեղծարարություն _____
3.4.3 խարդախության իրականացման եղանակի և անօրինական գործունեության մեխանիզմների վերաբերյալ տվյալներ _____
3.4.4 անօրինական գործունեության իրականացման ընթացքում կիրառվող/օգտագործվող գործիքների/միջոցների վերաբերյալ տվյալներ _____
3.4.5 համակարգչային տեղեկատվության անօրինական օգտագործման հետքերի վերաբերյալ տվյալներ _____
3.4.6 այլ տեղեկատվություն _____

3.5 Բանկում տեղի ունեցած և հայտնաբերված խարդախություններ, չարաշահումներ և նման այլ դեպքերի համար

3.5.1 բանկի պատասխանատու աշխատակցի վերաբերյալ տվյալները _____
_____
_____
_____
3.5.2 հաճախորդի վերաբերյալ տվյալներ _____
_____
_____
_____

3.5.3 խարդախության, չարաշահման դեպքի նկարագրությունը _____
_____
_____
_____

3.5.4 դեպքի արդյունքում կորցված գումարը _____

3.6 Այլ գործիքների և վճարահաշվարկային ծառայությունների համար

_____
_____
_____
_____
_____
_____
_____

Բուն խարդախության մասին տեղեկատվություն

4. Խարդախության մասին արձանագրության (դիմումի) առկայությունը _____
5. Խարդախության արձանագրման ամսաթիվը _____
6. Խարդախության հայտնաբերման վայրը _____
7. Խարդախության հայտնաբերողի մասին տվյալներ _____
8. Խարդախության գործիքի առգրավման վայրը _____
9. Առգրավման ամսաթիվը _____
10. Անօրինական օգտագործման տեղերը _____
11. Անօրինական օգտագործման ընթացքում կիրառվող սարքը (սարքերը, միջոցները) _____
12. Անօրինական կատարված գործարքների ժամանակ օգտագործված գումարի և արժույթի վերաբերյալ տվյալներ _____
13. Կեղծիքների բնութագիրը _____
14. Անօրինական կատարված գործարքների վերաբերյալ այլ տվյալներ _____
15. Խարդախության դեպքի համառոտ բնութագիրը _____
_____
_____
_____
_____
_____
_____

Համագործակցությունը այլ մարմինների հետ

16. Դիմե՞լ եք արդյոք իրավապահ մարմիններին
    - ❑ այո
    - ❑ ոչ
17. Խարդախության բացահայտման աշխատանքների ընթացիկ իրավիճակը _____
18. Համագործակցող այլ մարմինների մասին տվյալներ _____

Բանկի վարչության նախագահ _____
(գործադիր տնօրեն)

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշմամբ

Ձև թիվ 29
(եռամսյակային)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Բանկի մասնաճյուղերի վերաբերյալ

Բանկի անվանումը _____

Ամսաթիվը _____ թ.

Մասնաճյուղի անվանումը	Գտնվելու վայրը	Մասնաճյուղի ակտիվները	Մասնաճյուղի ակտիվները որպես % բանկի ընդհանուր ակտիվներից	Մասնաճյուղի ավանդները	Մասնաճյուղի ավանդները որպես % բանկի ընդհանուր ավանդներից	Մասնաճյուղի միջոցով տրամադրված վարկերը	Մասնաճյուղի վարկերը որպես % բանկի ընդհանուր վարկային ներդրումներից	Մասնաճյուղի չաշխատող վարկերը որպես % մասնաճյուղի ընդհանուր վարկային ներդրումներից	Մասնաճյուղի կառավարչի անունը և շաբաթվանց տոկոսի չափը	Մասնաճյուղի աշխատակիցների քանակը (մասնաճյուղի ղեկավարները ներառյալ)	Մասնաճյուղի եկամուտները	Մասնաճյուղի ծախսերը
(1)	(2)	(3)	(4)	(5)	(6)	(7)	(8)	(9)	(10)	(11)	(12)	(13)
Գլխավոր գրասենյակ												
Նշանակալի մասնաճյուղ												
Արտերկրյա մասնաճյուղ												

Կ.Տ.

Բանկի վարչության նախագահ (գործադիր տնօրեն) _____

Գլխավոր հաշվապահ _____

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշմամբ

Ձև թիվ 30
ամսական (եթե տվյալ ամսվա ընթացքում
առկա են փոփոխություններ)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Շահագործման հանձնված և շահագործումից հանված տերմինալների վերաբերյալ

Բանկի անվանումը _____

Ամսաթիվը _____11/30/2007___ թ.

1. Հաշվետու ամսվա ընթացքում շահագործման հանձնված տերմինալներ

Տերմինալի շահագործման հասցեն/գտնվելու վայրը		Տերմինալի արտադրողը, մակնիշը	Տերմինալի տեսակը ըստ ֆունկցիոնալ խմբավորման	Տեսախցիկների քանակը	Տեղադրման վայրի նկարագրություն	Շահագործման հանձնման ամսաթիվը (օր/ամիս/տարի)
Քաղաք/գյուղ	Հասցե/փողոց		(ԱԳՄ, ինֆո-վճարային կիոսկ և այլն)			
օրինակ, Ք. Երևան	Բայրոնի 1	Wincor-Nixdorf procash 1500 XE	ԱԳՄ	1	բանկի արտաքին պատին	7/13/2007

2. Շահագործումից հանված տերմինալիներ

Շահագործումից հանված տերմինալի հասցեն		Տերմինալի արտադրողը, մակնիշը	Տերմինալի տեսակը ըստ ֆունկցիոնալ խմբավորման	Շահագործման դադարեցման ամսաթիվը (օր/ամիս/տարի)
Քաղաք/գյուղ	Հասցե/փողոց		(ԱԳՄ, ինֆո-վճարային կիոսկ և այլն)	

Բանկի վարչության նախագահ _____
Կ.Տ. *(գործադիր տնօրեն)*
Գլխավոր հաշվապահ _____

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշմամբ

Ձև թիվ 31
(ամսական)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Տրամադրված քարտերի, դրանց տեսակների, քարտային գործառնությունների և սպասարկման միջոցների վերաբերյալ»

Բանկի անվանումը _____

Ամսաթիվը _____ թ-ից մինչև _____ թ.

1. Քարտերի տրամադրում

Տրամադրվող քարտի անվանումը	Տրամադրված վճարային քարտերի քանակը			Տրամադրված/ գործող կանխավճարային քարտեր
	Հաշվարկային (դեբետային) քարտեր	Վարկային/ կրեդիտային քարտեր	այդ թվում՝ միայն կանխիկացման նպատակով տրամադրված քարտեր	
Մագնիսական ժապավենով քարտեր	X	X	X	X
Արքա քարտ				
Մաստեր քարտ				
Վիզա քարտ				
Դիներս-Կլաբ				
Ամեքս				
HSBC-քարտ				
Մաստերքարդ -Արքա (համատեղված)				
Այլ (նշել)				
Ընդամենը՝ (Մագնիսական ժապավենով քարտեր)	0	0	0	0
այդ թվում՝ առևտրային քարտեր				
Միկրոպրոցեսորային (սմարտ) քարտեր	X	X	X	X
Արքա քարտ				
Մաստեր քարտ				
Վիզա քարտ				
Դիներս-Կլաբ				
Ամեքս				
HSBC-քարտ				
Մաստեր քարտ -Արքա (համատեղված)				
Այլ (նշել)				
Ընդամենը՝ (Միկրոպրոցեսորային (սմարտ) քարտեր)	0	0	0	0
այդ թվում՝ առևտրային քարտեր				
Ընդհանուր քարտերը	0	0	0	0
այդ թվում՝ առևտրային քարտեր	0	0	0	0

2. Քարտեր սպասարկողներ և սպասարկման միջոցներ

Անվանումը	Սպասարկման կետեր		Սպասարկման կետերում տեղադրված սարքավորումների քանակը							Միասրահ կիսեցի սրահներում գտնվող միջոցառման վիրտուալ միջավայրում
	բանկի կողմից պատասխանվող կետերի քանակը	այլ բանկի հետ համատեղ սպասարկվող կետերի քանակը	բանկի կողմից շահագործվող ավտոմատ գանձման մեքենաներ (ԱԳՄ)	այլ բանկի/կազմակերպության հետ համատեղությամբ սպասարկվող ԱԳՄ	բանկի կողմից սպասարկվող ՊՕՍ -տերմինալներ	այլ բանկի/կազմակերպության հետ համատեղությամբ սպասարկվող ՊՕՍ -տերմինալներ	բանկի կողմից սպասարկվող հմպրինտերներ	այլ բանկի/կազմակերպության հետ համատեղությամբ սպասարկվող հմպրինտերներ	
Բանկի գլխամաս/մասնաճյուղ									
Հյուրանոցներ									
Առևտրի կետեր									
Ռեստորան կամ ժամանցի վայր									
Տուրիզմի ոլորտ/ավիագործակալություն									
Սպասարկման ոլորտ									
Բենզալցակայան կամ տեխսպասարկում									
Կինոթատրոն, թատրոն									
Սպորտային համալիր									
Խաղասրահներ									
Այլ հաստատություններում կամ փողոցում									
Այլ (նշել)									

3. Հաշվետու առևտրային բանկի կողմից թողարկված քարտերով գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման կետերի

Բանկի կողմից (ըստ կիրառվող վճարման սխեմայի) թողարկված քարտերի սպասարկումը	Կատարված գործառնություններ													
	ԱԳՄ (ATM)-ի միջոցով						ՊՕՍ-տերմինալի (POS) և Իմպրինտերի միջոցով				Վիրտուալ միջավայրում			
	Կանխիկի մուտքագրում		Կանխիկացում		Անկանխիկ գործառնություն		Կանխիկացում		Անկանխիկ գործառնություն		էլեկտրոնային առևտուր		քարտային փոխանցումներ	
որից	Գումար (տոկոս դրամ)	Քանակ	Գումար (տոկոս դրամ)	Քանակ	Գումար (տոկոս դրամ)	Քանակ	Գումար (տոկոս դրամ)	Քանակ	Գումար (տոկոս դրամ)	Քանակ	Գումար (տոկոս դրամ)	Քանակ	Գումար (տոկոս դրամ)	Քանակ
Հաշվարկային (դեբետային) քարտեր	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X
ԱրՔա քարտ														
Մաստեր քարտ														
Վիզա քարտ														
HSBC-քարտեր														
Դիներս-Կլաբ														
Ամեքս														
Մաստեր քարտ-ԱրՔա (համատեղված)														
Այլ (նշել)														
Վարկային (կրեդիտային) քարտեր	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X
ԱրՔա քարտ														
Մաստեր քարտ														
Վիզա քարտ														
HSBC-քարտեր														
Դիներս-Կլաբ														
Ամեքս														
Մաստեր քարտ-ԱրՔա (համատեղված)														
Այլ (նշել)														
Կանխավճարային քարտեր	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X
ԱրՔա քարտ														

Մաստեր քարտ															
Վիզա քարտ															
HSBC-քարտեր															
Դիներս-Կլաբ															
Ամեքս															
Մաստեր քարտ-Արքա (համատեղված)															
Այլ (նշել)															
	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X
Այդ թվում՝ առևտրային քարտեր															

4. Արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերի սպասարկում

Բանկի կողմից սպասարկված արտասահմանյան բանկերի քարտերի անվանումը	**Կատարված գործառնություններ**																	
	ԱԳՄ (ATM)-ի միջոցով						ՊՕՍ-տերմինալի (POS) միջոցով				Իմպրինտերի միջոցով				Վիրտուալ միջավայրում			
	Կանխիկի մուտքագրում		Կանխիկացում		Անկանխիկ գործառնություն		Կանխիկացում		Անկանխիկ գործառնություն		Կանխիկացում		Անկանխիկ գործառնություն		էլեկտրոնային առևտուր		քարտային փոխանցումներ	
	Գումար (հազար դրամ)	Քանակ	Գումար (հազար դրամ)	Քանակ	Գումար (հազար դրամ)	Քանակ	Գումար (հազար դրամ)	Քանակ	Գումար (հազար դրամ)	Քանակ	Գումար (հազար դրամ)	Քանակ	Գումար (հազար դրամ)	Քանակ	Գումար (հազար դրամ)	Քանակ	Գումար (հազար դրամ)	Քանակ
	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x
Մաստեր քարտ																		
Վիզա քարտ																		
Դիներս-Կլաբ																		
Ամեքս																		
HSBC-քարտեր																		
Այլ (նշել)																		

5. Ըստ վճարային քարտերի տեսակների՝ բանկի կողմից թողարկված քարտերի սպասարկումը արտասահմանում

Արտասահմանում սպասարկված քարտեր՝ ըստ կիրառվող վճարման սխեմայի	**Գործառնություններ**					
	Կանխիկի մուտքագրում		Կանխիկացում		Անկանխիկ գործառնություն	
	Գումար (հազար դրամ)	Քանակ	Գումար (հազար դրամ)	Քանակ	Գումար (հազար դրամ)	Քանակ
Հաշվարկային (դեբետային) քարտեր	X	X	X	X	X	X
Արքա քարտ	-	-	-	-	-	-
Մաստեր քարտ						
Վիզա քարտ						
Այլ (նշել)						
Վարկային (կրեդիտային) քարտեր	X	X	X	X	X	X
Արքա քարտ	-	-	-	-	-	-
Մաստեր քարտ						
Վիզա քարտ						
Այլ (նշել)						
Կանխավճարային քարտեր	X	X	X	X	X	X
Արքա քարտ	-	-	-	-	-	-
Մաստեր քարտ						
Վիզա քարտ						
Այլ (նշել)						

Բանկի վարչության նախագահ _____

Կ.Տ. *(գործադիր տնօրեն)*

Գլխավոր հաշվապահ _____

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշմամբ

1.	Հայաստանի Հանրապետությունում ունեմ մշտական բնակություն կամ Հայաստանի Հանրապետությունում բնակվում եմ 1 տարուց ավելի	☐
2.	Հայաստանի Հանրապետությունում բնակվում եմ 1 տարուց պակաս	☐
3.	Ունեմ սեզոնային աշխատանք Հայաստանի Հանրապետությունից դուրս, սակայն ծախսերիս հիմնական մասը իրականացնում եմ Հայաստանի Հանրապետությունում	☐
4.	Ունեմ սեզոնային աշխատանք Հայաստանի Հանրապետությունում, սակայն ծախսերիս հիմնական մասը իրականացնում եմ Հայաստանի Հանրապետությունից դուրս	
5.	Ուսանում եմ կամ բուժման նպատակով գտնվում եմ Հայաստանի Հանրապետությունում, սակայն հանդիսանում եմ այլ երկրի քաղաքացի	

Ձև X-ի արդյունքների կիրառում,

Հաճախորդը ***ռեզիդենտ է*** համարվում, եթե ընտրել է **1** կամ **3**-րդ պատասխանները:

Հաճախորդը ***ոչ ռեզիդենտ է*** համարվում, եթե ընտրել է **2, 4**-րդ կամ **5**-րդ պատասխանները:

Հարցաթերթը լրացվում է միայն ֆիզիկական անձ հաճախորդի կողմից:

Իրավաբանական անձանց համար ռեզիդենտությունը սահմանվում է՝ ելնելով կազմակերպության գրանցման վայրից:

Ռեզիդենտության սահմանման վերաբերյալ մանրամասն մեկնաբանությունը տես ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի մայիսի 14-ի թիվ 173 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության դրամավարկային և բանկային վիճակագրության ձեռնարկում» (2-րդ բաժին «Տնտեսության հատվածների նկարագիրը»):

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի ««Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» թիվ 93-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 15) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1. Կանոնակարգ 15-ի 4-րդ կետի 1-ին պարբերության 2-րդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի վիճակագրության վարչության հաշվետվությունների ընդունման և ամփոփման համար պատասխանատու բաժնի կողմից վարկային կազմակերպություններին ուղարկված պաշտպանված ֆայլերով, որոնց փոփոխումն արգելվում է:»:

1.2. Կանոնակարգ 15-ի 16-րդ կետի 6-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. փետրվարի 26-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 11.03.08 թ. (ՀՀԳՏ N10 (284), 1.04.07):

««Շահաբաժիններ» հոդվածների «Ակտիվ» մասում լրացվում են տարեսկզբից աճողական տվյալներ հայտարարված (ստացվելիք) շահաբաժինների, իսկ «Պասիվ» մասում՝ հայտարարված (վճարվելիք) շահաբաժինների վերաբերյալ:»:

1.3. Կանոնակարգ 15-ի 16-րդ կետի 21-րդ պարբերության առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

««Այլ գործառնություններ» հոդվածի մեջ ներառվում են նաև անդամավճարները, ֆինանսական ածանցյալները և նմանատիպ վճարները ոչ ռեզիդենտ կազմակերպություններին:»:

1.4. Կանոնակարգ 15-ի 4-րդ գլխի 21-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«21. Հաշվետվությունները Կենտրոնական բանկի վիճակագրության վարչության հաշվետվությունների ընդունման և ամփոփման համար պատասխանատու բաժին են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետներում: Եթե հաշվետվության ներկայացման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա հաշվետվությունը ներկայացվում է այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Եթե ներկայացվող տվյալները հաշվետու ժամանակաշրջանում փոփոխություն չեն կրել, կամ եթե հաշվետվությանն առնչվող գործարքներ չեն իրականացվել, ապա վարկային կազմակերպությունը ներկայացնում է գրություն՝ նշելով չներկայացվող ձևերը»:

1.5. Կանոնակարգ 15-ի 5-րդ գլխի 31-րդ կետում «դրամավարկային քաղաքականության վարչություն» բառերը փոխարինել «վիճակագրության վարչության հաշվետվությունների ընդունման և ամփոփման համար պատասխանատու բաժին» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի հուլիսի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
27 փետրվարի 2008 թ., N 51-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի օգոստոսի 30-ի թիվ 444-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի օգոստոսի 30-ի ««Հայաստանի Հանրապետության տարածքում արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման լիցենզավորումը, կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 11-ը հաստատելու մասին» թիվ 444-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման լիցենզավորումը, կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 11-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 11) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1. Կանոնակարգ 11-ի 8-րդ կանոնի 8.2 կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «8.2. Բորսան պարտավոր է արտարժույթի առուվաճառքի սակարկությունների անցկացման օրվա մինչև ժամը 15:30-ը Կենտրոնական բանկի վիճակագրության վարչության հաշվետվությունների ընդունման և ամփոփման համար պատասխանատու բաժին ներկայացնել սակարկությունների ընթացքում արտարժույթի առուվաճառքի գործառնությունների վերաբերյալ հաշվետվություն (հավելված 5, ձև 1): Ձև 1 հաշվետվության մեջ պետք է լրացվեն հաշվետու օրվա ժամը 10:00-ից մինչև նույն օրվա ժամը 15:10-ը սակարկությունների ընթացքում իրականացված արտարժույթի առուվաճառքի գործառնությունները: Նշված ժամից հետո իրականացված սակարկությունների ընթացքում արտարժույթի առուվաճառքի գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվում է հաջորդ օրը ներկայացվող հաշվետվության հետ մեկտեղ: Հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի վիճակագրության վարչության հաշվետվությունների ընդունման և ամփոփման բաժնի կողմից բարսային ուղարկված պաշտպանված ֆայլերով («Մայքրոսոֆթ օֆիս 97» կամ դրա կատարելագործված տարբերակով), որոնց փոփոխումն արգելվում է: Այլ կերպ ներկայացված հաշվետվությունը համարվում է չընդունված:»:

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. փետրվարի 26-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 11.03.08 թ. (ՀՀԳՏ N10 (284), 1.04.08):

1.2. Կանոնակարգ 11-ի հավելված 5-ի «Գործարքի տեսակը և ժամկետայնությունը» սյունակը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Գործարքի տեսակը» և «Ժամկետայնությունը» սյունակներով (հավելված 5-ը նոր խմբագրությամբ կցվում է):

1.3. Կանոնակարգ 11-ի հավելված 5-ի լրացման պարզաբանումներում ««Գործարքի տեսակը և ժամկետայնությունը» սյունակում լրացվում է սփոթ, ֆորվարդ, ֆյուչերս, սվոփ և միջազգային պրակտիկայում ընդունված այլ գործարքների տեսակները և դրանց իրականացման ժամկետը» պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

««Գործարքի տեսակը» սյունակում լրացվում է գործարքի կոդը, որը բաղկացած է երկու պարամետրերից և ունի հետևյալ տեսքը՝ «1թ/1թ», որտեղ «թ» տառը նշանակում է, որ պարամետրերը լրացվում են թվային եղանակով:

Առաջին պարամետրը ցուցադրում է գործարքի տեսակը և կարող է ունենալ հետևյալ արժեքները՝ «1» - Սփոթ տեսակի գործառնություններ, «2» - Սվոփ տեսակի գործառնություններ (արժութային սվոփ, ֆորվարդ, ֆյուչերս, օպցիոն):

Երկրորդ պարամետրը ցույց է տալիս գործարքի մասնակցի տեսակը. «1» - ռեզիդենտների համար (ինչպես նաև չլրացնելու դեպքում), «2» - ոչ ռեզիդենտների համար: Սույն հաշվետվության իմաստով, անձի ռեզիդենտայնությունը որոշվում է գրանցման վայրով:

Օրինակ՝ 2/2 ոչ ռեզիդենտի հետ իրականացված սվոփ տիպի գործարք:»:

Չորրորդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ՝

«Ժամկետայնությունը» սյունակում լրացվում է տվյալ գործարքի ժամկետայնությունը՝ օրերով»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
27 փետրվարի 2008 թ., N 52-Ն

ՀԱՎԵԼՎԱԾ 5
Ձև 1
(օրական)

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակաշրջան _____
օր ամիս տարի

(Բորսայի անվանումը)

N	Գործարքին տրված հերթական տարբերակիչ համարը	Արտարժույթի կոդը	Գործարքի տեսակը	Ժամկետայնությունը	Գործարքի կողմ հանդիսացող առևտրի մասնակցի անվանումը		Գործարքի առարկա արտարժույթի քանակը (միավոր)	Գործարքի ընդհանուր գումարը (արտարժույթի)	Գործարքի առարկա արտարժույթի գինը	Գործարքի ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)
					գնորդ	վաճառող				
1										
2										
3										
4										
5										
6										

Բորսայի գործադիր մարմնի ղեկավար _____
(ստորագրություն)

Կ.Տ

_____
(ամսաթիվ)

1. Ձև 1 հաշվետվությունը լրացվում է Բորսայի կողմից ամենօրյա պարբերականությամբ:

2. «Գործարքին տրված հերթական տարբերակիչ համարը» սյունակում լրացվում է առևտրային համակարգի կողմից տրվող հերթական տարբերակիչ համարը:

3. «Արտարժույթի կոդը» սյունակում լրացվում է գործարքի առարկա արտարժույթի ISO կոդը (օրինակ՝ ԱՄՆ դոլար՝ USD, եվրո՝ EUR և այլն):

4. «Գործարքի տեսակը» սյունակում լրացվում է գործարքի կոդը, որը բաղկացած է երկու պարամետրերից և ունի հետևյալ տեսքը՝ «1թ/1թ», որտեղ «թ» տառը նշանակում է, որ պարամետրերը լրացվում են թվային եղանակով:

Առաջին պարամետրը ցուցադրում է գործարքի տեսակը և կարող է ունենալ հետևյալ արժեքները՝ «1» - Սփոթ տեսակի գործառնություններ, «2» - Սվոփ տեսակի գործառնություններ (արժութային սվոփ, ֆորվարդ, ֆյուչերս, օպցիոն):

Երկրորդ պարամետրը ցույց է տալիս գործարքի մասնակցի տեսակը. «1» - ռեզիդենտների համար (ինչպես նաև չլրացնելու դեպքում), «2» - ոչ ռեզիդենտների համար: Սույն հաշվետվության իմաստով, անձի ռեզիդենտայնությունը որոշվում է գրանցման վայրով:

Օրինակ՝ 2/2 ոչ ռեզիդենտի հետ իրականացված սվոփ տիպի գործարք:

5. «Ժամկետայնությունը» սյունակում լրացվում է տվյալ գործարքի ժամկետայնությունը՝ օրերով:

6. «Գործարքի կողմ հանդիսացող առևտրի մասնակցի անվանումը» սյունակում լրացվում է արտարժույթի գործարք իրականացնող համապատասխան կողմի անվանումը:

7. «Գործարքի առարկա արտարժույթի քանակը (լոտը)» սյունակում լրացվում է գնված/վաճառված արտարժույթի լոտերի քանակը:

8. «Գործարքի ընդհանուր գումարը (արտարժույթ)» սյունակում լրացվում է գնված/վաճառված արտարժույթի ընդհանուր ծավալը:

9. «Գործարքի առարկա արտարժույթի գինը» սյունակում լրացվում է տվյալ գործարքի փոխարժեքը՝ արտահայտված ՀՀ դրամով:

10. «Գործարքի ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)» սյունակում լրացվում է գնված/վաճառված արտարժույթի ընդհանուր ծավալը՝ արտահայտված ՀՀ դրամով:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Տասը հազար դրամ անվանական արժեքով 2008 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները շրջանառության մեջ դնելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը, 41-րդ, 42-րդ, 47-րդ հոդվածները և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2008 թվականի ապրիլի 14-ից շրջանառության մեջ դնել տասը հազար դրամ անվանական արժեքով 2008 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները:

2. Սահմանել, որ տասը հազար դրամ անվանական արժեքով 2008 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական վճարամիջոց են և ենթակա են անվերապահ ընդունման իրենց անվանական արժեքով՝ փողով արտահայտված բոլոր պարտավորությունների դիմաց, առանց ժամկետային սահմանափակումների: Տասը հազար դրամ անվանական արժեքով 2003 և 2006 թվականների թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամները մնում են շրջանառության մեջ առանց սահմանափակումների և շրջանառության պայմանների փոփոխության:

3. Հաստատել տասը հազար դրամ անվանական արժեքով 2008 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի նմուշը՝ ըստ Հավելված 1-ի:

4. Հաստատել տասը հազար դրամ անվանական արժեքով 2008 թվականի թողարկման Հայաստանի Հանրապետության թղթադրամի նկարագրությունը՝ ըստ Հավելված 2-ի:

5. Հանձնարարել ՀՀ կենտրոնական բանկի մամուլի քարտուղարին՝ հրապարակել համապատասխան հաղորդագրություն մամուլում՝ ընդգրկելով սույն որոշման հավելված 2-ը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
27 փետրվարի 2008 թ., N 53-Ն

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2008 թ. փետրվարի 26-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 11.03.08 թ. (ՀՀԳՏ N10 (284), 1.04.08):

Հավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 53-Ն որոշմամբ





Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 53-Ն որոշմամբ

Ն Կ Ա Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2008 թվականի նմուշի 10000 դրամ անվանական արժեքով ՀՀ թղթադրամի

Թղթադրամը տպագրված է սպիտակ գույնի թղթի վրա: Թղթադրամի չափսերն են՝ 150 x 72 մմ: Թղթադրամը պարունակում է Ավետիք Իսահակյանի դիմանկարը պատկերող և անվանական արժեքն արտահայտող ջրանիշ: Դիմերեսի և դարձերեսի հիմնական գույնը մանուշակագույնն է: Թղթադրամը պարունակում է երկու պաշտպանական ներգիծ, որոնցից մեկն ամբողջությամբ ներդրված է թղթի մեջ և երևում է միայն լուսընդդեմ դիտելիս՝ հոծ գծի տեսքով, իսկ մյուսը՝ թղթադրամի դարձերեսի վրա երևում է արծաթափայլ պատուհանների (կետագծերի), իսկ լուսընդդեմ դիտելիս՝ հոծ գծի տեսքով, որի մեջ կարդացվում է «AMD 10000» մանրատառաշարը:

Դիմերես.

Թղթադրամի ձախ մասում ուղղահայաց, կարմիր գույնով տպագրված է թղթադրամի սերիան արտահայտող տառը և ութանիշ համարը: Կարմիր համարանիշից աջ փակցված է ուղղահայաց կինեմագրայով ժապավենաձև փայլաթիթեղ: Փայլաթիթեղի երկայնքով, պարբերաբար կրկնվելով, երևում է Ավետիք Իսահակյանի դիմանկարի պրոֆիլը և մի զարդանախշ, որոնք դիտման անկյան չնչին փոփոխման ընթացքում նույն տեղում փոխարինում են միմյանց: Այս պատկերների միջև երևում է «10000 ԴՐԱՄ» գրառումներով օղակաձև շրջապատված դրամի խորհրդանշանը՝ « ֏ »: Փայլաթիթեղի ողջ մակերեսով առկա է «AMD 10000» մանրատառաշարը, իսկ երկու եզրերի ողջ երկայնքով երևում են «10000 ԴՐԱՄ» և «AMD 10000» ապամետաղականացված գրառումները: Փայլաթիթեղի վրա, վերևի մասում հորիզոնական տպագրված է «10000» թիվը, որի նիշերի գույնը ձախից դեպի աջ փոխվում է մուգ մանուշակագույնից մուգ վարդագույնի: Փայլաթիթեղից աջ սև գույնով ուղղահայաց գրված է «Ավետիք Իսահակյան 1875-1957»: Թղթադրամի մեջտեղում բաց մանուշակագույն ֆոնի վրա, որը պատկերում է հայ մեծ նկարիչ Մ. Սարյանի Արագած լեռան գծանկարից մի դրվագ, մուգ մանուշակագույն գույնով պատկերված է հայ մեծ գրող Ավետիք Իսահակյանի դիմանկարը: Դիմանկարի ներքևի ձախ մասում պատկերված է օվալաձև զարդանախշ, որտեղ գտնվում է «10000» թվի թաքնված պատկերը: Թղթադրամի վերին մասում, թղթադրամի երկայնքով մուգ մանուշակագույն գույնով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», իսկ դրանից ներքև մանրատառաշարով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» կրկնվող բառերը: Նշված բառերից ներքև կանաչ և մանուշակագույն գույներով տպագրված է թափանցիկ պատկերը՝ ութանկյուն զարդանախշի տեսքով: Զարդանախշի մեջ պատկերված մասնիկները լուսընդդեմ դիտելիս մեծ ճշտությամբ լրացնում են դարձերեսին պատկերված ութանկյան մեջ առկա մասնիկներին և կարդացվում են «ՀՀ» տառերը:

Դիմանկարից աջ՝ մանուշակագույն ֆոնի վրա, սև գույնով տպագրված են ՀՀ կենտրոնական բանկի նախագահի և ՀՀ ֆինանսների նախարարի ստորագրությունները և «Բանկի նախագահ» և «Ֆինանսների նախարար» բառերը:

Թղթադրամի միջնամասի մանուշակագույն ֆոնով շերտի ներքևի մասում երկու տողով գրված են «ՏԱՍԸ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» բառերը, որոնց գույնը ձախից դեպի աջ փոխվում է մուգ մանուշակագույնից մուգ վարդագույնի: Թղթադրամի սպիտակ գույնի ուղղահայաց դաշտի վերին մասում հորիզոնական, սև գույնով տպագրված են թղթադրամի սերիան արտահայտող տառը՝ «Կ», և ութանիշ համարը: Նրանից աջ մուգ վարդագույնով պատկերված են երկու թեք գծիկ և մեկ կետ: Սպիտակ շերտի ներքևի մասում մետաղական փայլ ունեցող ներկով տպագրված է փետուրե գրչի և թանաքամանի տեսքով պատկեր: Դրանից ներքև տպագրված է «10000» թիվը, որի նիշերի գույնը ձախից դեպի աջ փոխվում է մուգ մանուշակագույնից մուգ վարդագույնի: «10000» թվի վերջին զրոյից վերև տպագրված է թողարկման տարեթիվը՝ «2008»: Թղթադրամի աջ եզրի մոտ ուղղահայաց դիրքով տպագրված է «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA» բառերը: Թղթադրամի աջ և ձախ եզրերին առկա են անկանոն դասավորված դեղին գույնի շրջանակներ: Թղթադրամի ներքևի աջ և ձախ մասերում կապույտ գույնով, մի քանի շերտով, մանրատառաշարով տպագրված են «10000» թիվը և «AMD» տառերը:

Դարձերես.

Թղթադրամի ձախ եզրին մարգարտափայլ ներկով տպագրված է հորիզոնական ժապավեն, որի վրա գրված են «10000» թիվը և դրամի խորհրդանշանը՝ «֏»: Մարգարտափայլ ժապավենը լույսի անկման անկյան փոփոխության դեպքում երևում է վարդագույնից ոսկեգույնի փոփոխվող նրբերանգներով: Թղթադրամի ձախ կողմում՝ սպիտակամանուշակագույն ուղղահայաց դաշտի ներքևի մասում, հորիզոնական գծով բաժանված՝ մուգ և բաց մանուշակագույն գույներով տպագրված է «10000» թիվը: Թղթադրամի մեջտեղում տպագրված հիմնական մոտիվը ներկայացնում է հին Գյումրիից մի պատկեր: Թղթադրամի մեջտեղում առկա են անկանոն դասավորված դեղին գույնի շրջանակներ: Թղթադրամի վերևի մասում՝ թղթադրամի երկայնքով, մուգ մանուշակագույն գույնով գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», իսկ դրանից ներքև մանրատառաշարով՝ կրկնվող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» բառերը: Թղթադրամի վրա պատկերված նկարի ներքևի մասում երկու տողով մուգ մանուշակագույն գույնով գրված են «ՏԱՍԸ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» բառերը: Նկարից դեպի աջ, ուղղահայաց սյան տեսքով պատկերված է մանուշակագույն զարդանախշ: Զարդանախշի վրա, վերին մասում, ուղղահայաց գրված է «10000» թիվը: Թղթադրամի ներքևի աջ և ձախ մասերում կապույտ գույնով, մի քանի շերտով, մանրատառաշարով տպագրված են «10000» թիվը և «AMD» տառերը: Թղթադրամի աջ եզրի մոտ ուղղահայաց դիրքով տպագրված է «CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA» բառերը:

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՄԱՐՏ 2008)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2008 թվականի ապրիլի 2-ի նիստի «2008 թվականի երկրորդ եռամսյակի կանխատեսումների և դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին առևտրի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի (բացառությամբ արտաքին առևտրի), դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Հրապարակումներ և վիճակագրություն» բաժնում: Դրամավարկային ցուցանիշները և ՀՀ միջազգային պահուստները հաշվարկված են հաշվեգրման սկզբունքով:

Դրամավարկային ցուցանիշների և ՀՀ միջազգային պահուստների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Հրապարակումներ և վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 583-631
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2008 թվականի երկրորդ եռամսյակի կանխատեսումների և դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի ապրիլի 2-ի նիստի արձանագրություն 178

Իրական հատվածի ցուցանիշներ 187

Պետական բյուջեի ցուցանիշներ 190

Արտաքին հատվածի ցուցանիշներ 191

Դրամավարկային ցուցանիշներ 193

Ֆինանսական շուկա 204

Վարկային ներդրումներ 224

Առևտրային բանկերի ավանդներ 235

Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 237

Վճարահաշվարկային համակարգ 241

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
(02.04.2008)

2008 թվականի երկրորդ եռամսյակի կանխատեսումների և դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ

2008 թվականի ապրիլի 2-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը, նախագահի տեղակալ Ա. Ջավադյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Վ. Մովսեսյանը և Կ. Մինասյանը:

2008 թվականի երկրորդ եռամսյակի դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ ՀՀ ԿԲ խորհրդի կողմից որոշման կայացմանը նախորդեց 2008 թ. առաջին եռամսյակի տնտեսական իրավիճակի և փաստացի գնաճի վերլուծության և 2008 թվականի ապրիլից 2009 թվականի մարտն ընկած ժամանակահատվածի կանխատեսումների ներկայացումը: Փաստացի տվյալները և կանխատեսումները ներառում են տնտեսության իրական, արտաքին, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների զարգացումները, ինչպես նաև ապագա ժամանակահատվածի հավանական ռիսկերը:

Հաշվի առնելով 2008 թ. առաջին եռամսյակում գնաճի վարքագիծը՝ նախորդ կանխատեսման համեմատ որոշակի ճշգրտումներ են կատարվել հաջորդող 12-ամսյա ժամանակահատվածում գնաճի կանխատեսվող ցուցանիշներում: Տոկոսադրույքների անփոփոխ մակարդակի պահպանման վարկածի պայմաններում 2008 թվականի գնաճը տարվա ընթացքում մշտապես կգերազանցի նպատակային միջակայքի վերին սահմանը՝ ցուցաբերելով եռամսյակային նվազող հետագիծ:

2008 թվականի առաջին եռամսյակի փաստացի ցուցանիշներ

2008 թվականի մարտին, փետրվարի համեմատությամբ, արձանագրվել է 1.4% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճը կազմել է 9.6%՝ շուրջ 3.0 տոկոսային կետով գերազանցելով նախորդ տարեվերջի մակարդակը, այն դեպքում, երբ Կենտրոնական բանկի 2007 թ. դեկտեմբերի կանխատեսումների համաձայն, 2008 թ. առաջին եռամսյակի գնաճն ակնկալվում էր 6.8%-ի շրջանակում[1]: Կանխատեսվածից նշանակալիորեն բարձր գնաճի ձևավորումը պայմանավորվել է 2008 թ. առաջին եռամսյակում «Հացամթերք» ապրանքախմբի գների՝ 7.3%, և «Կենդանական և բուսական յուղեր» ապրանքախմբի գների 1.4% աճով, որոնք ընդհանուր առմամբ լրացուցիչ 1.1%-ով նպաստել են եռամսյակի գնաճին: Արդյունքում, պարենային ապրանքների միջազգային գների շարունակվող բարձրացման պայմաններում այս ապրանքների ներքին գների 12-ամսյա աճը կազմել է շուրջ 15 %՝ նպաստելով գնաճին մոտ 7 տոկոսային կետով: Միաժամանակ, պարենային ապրանքների գների բարձրացման երկրորդային ազդեցությունները՝ զուգորդվելով ամբողջական պահանջարկի նախորդ ժամանակահատվածի զարգացումներով, իրենց դերակատարումն են ունեցել ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գների վարքագծում: Ոչ պարենային ապրանքների գների 12-ամսյա աճը կազմել է 4.7% (նպաստումը գնաճին՝ 0.8%), իսկ ծառայությունների սակագներինը՝ 5.7% (նպաստումը գնաճին՝ 1.7%): Պահպանվող բարձր գնաճային միջավայրում 12-ամսյա բնականոն գնաճն առաջին եռամսյակում, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատությամբ, ավելացել է շուրջ 1.5 տոկոսային կետով[2]:

---

[1] Տե՛ս «ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագիրը (2008 թ. առաջին եռամսյակ)» (2007 թվականի դեկտեմբերի 29-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստի արձանագրություն):

[2] Բնականոն գնաճը հաշվարկվել է ՀՀ ԿԲ-ում մշակված նոր մեթոդաբանության հիման վրա, որը կհրապարակվի 2008 թ. առաջին եռամսյակի գնաճի հաշվետվությունում:

2008 թ. առաջին եռամսյակի գնաճը պայմանավորվել է արտաքին աշխարհի և ներքին տնտեսության տարբեր հատվածների հետևյալ զարգացումներով.

- 2008 թվականի առաջին եռամսյակում արտաքին հատվածից փոխանցվող գնաճային ճնշումների աճը շարունակել է ուժգնանալ: Փետրվարին հումքային ապրանքների գների կտրուկ աճը մարտի սկզբին հասել է իր բարձրակետին: Արդյունքում, այն ռիսկերը, որոնք նշվել են նախորդ եռամսյակում, իրականացել են[3]: Light Sweet տեսակի նավթի գինը Նյու Յորքի ապրանքահումքային բորսայում հասել է գրեթե 110 ԱՄՆ դոլարի՝ բարելի դիմաց, ոսկու գները Լոնդոնի մետաղների բորսայում գերազանցել են 1000 ԱՄՆ դոլարը՝ ունցիայի դիմաց, պղնձի գները՝ գրեթե 8700 ԱՄՆ դոլարը՝ տոննայի դիմաց, հացահատիկի գները Չիկագոյի ապրանքահումքային բորսայում՝ գրեթե 14 ԱՄՆ դոլարը՝ բուշելի դիմաց: Իրենց գագաթնակետին հասնելուց հետո հումքային ապրանքների գները մարտին փոքր-ինչ նվազել են, սակայն պահպանել են ինչպես բարձր մակարդակը, այնպես էլ մոտակա ամիսներին իրենց հետագա աճի ներուժը:

Բացի վերոնշյալ հիմնական ապրանքներից, գների աճը շարունակվել է նաև որոշակի պարենային ապրանքների միջազգային շուկաներում, մասնավորապես՝ բրնձի և բուսական յուղի շուկաներում, որոնց միտումները ցույց են տալիս, որ բրնձի գների աճի ներուժն ավելի է մեծացել, իսկ բուսական յուղի աճի միտումները շարունակում են պահպանվել:

Միջազգային ֆինանսական շուկաներում առաջին եռամսյակում ԱՄՆ դոլարի արժեզրկումը շարունակվել և հասել է եվրոյի նկատմամբ նոր բարձրակետի՝ մինչև 1.59 ԱՄՆ դոլար՝ եվրոյի դիմաց: Դա պայմանավորված էր ինչպես ԱՄՆ տնտեսական աճի անորոշությամբ, այնպես էլ ԱՄՆ Ֆեդերալ պահուստային համակարգի կողմից տոկոսադրույքների շարունակական նվազեցմամբ: Մարտի 18-ի նիստի արդյունքներով ԱՄՆ Ֆեդերալ բաց շուկայական կոմիտեն նվազեցրել է տոկոսադրույքները ևս 75 բազիսային կետով՝ հասցնելով 2.25 տոկոսի, իսկ Եվրոպական կենտրոնական բանկը մարտի սկզբին տոկոսադրույքները պահել է անփոփոխ, որի հետևանքով տոկոսադրույքների տարբերությունը հասել է 1.75 տոկոսի (ԱՄՆ-ում՝ 2.25 տոկոս, Եվրոպայում՝ 4.00 տոկոս): Թեև ԱՄՆ դոլարի փոխարժեքը եռամսյակի վերջում մի փոքր կայունացել է, այնուամենայնիվ պահպանվում է արժեզրկման ներուժը՝ որպես հիմնական ակնկալվող ռիսկային գործոն:

Ընդհանուր առմամբ, արտաքին հատվածի գնաճային ճնշումները հատկապես պարենային ապրանքների գծով առաջին եռամսյակում շարունակել են ուժեղանալ, որը հանգեցրել է սպառողական զամբյուղում նույնանման ապրանքատեսակների գների ավելացման:

- 2008 թվականի հունվար-մարտին տնտեսական աճի ցուցանիշը կազմել է 10.2% (հունվար-փետրվարինը՝ 10.1%)[4]: Շինարարության ճյուղում արձանագրված իրական աճը կազմել է մոտ 20%, ինչին նպաստել է հիմնականում բնակարանային շինարարության, մշակող արդյունաբերության, ինչպես նաև տրանսպորտի և կապի ոլորտներում շինարարության ծավալների ավելացումը: Արդյունաբերության ավելացված արժեքի իրական աճը կազմել է 5.8%: Արդյունաբերության աճին առավել նպաստել են էներգետիկայի, սննդի, մետաղագործության ենթաճյուղերը: Ծառայությունների ոլորտում աճի տեմպը կազմել է 11.2%: Ընդ որում, բարձր աճ է արձանագրվել ինչպես մանրածախ ապրանքաշրջանառության, այնպես էլ այլ ծառայությունների գծով: Գյուղատնտեսությունում ավելացված արժեքի աճը կազմել է 3.2%՝ ի հաշիվ անասնապահության և բուսաբուծության թողարկման ծավալների ավելացման:
- Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների՝ 2008 թվականի առաջին եռամսյակում ակնկալվում է մասնավոր ծախսումների 10.5% իրական աճ՝ մասնավոր սպառման 9.8% և մասնավոր ներդրումների 16.0% իրական աճի պայմաններում: Մասնավոր հատվածի ծախսումների ճեղքվածքների գնահատումների համաձայն՝ մասնավոր հատվածի սպառման գնահատված ավելացումն իր հավասարակշիռ մակարդակից փոքր-ինչ ցածր էր, ինչը լրացուցիչ գնաճային ճնշումների հիմքեր չի առաջացնում: Միաժամանակ, հարկաբյուջետային քաղաքականությունը գնաճի վրա ազդեցության տես-

[3] *Տե՛ս «ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագիրը (2008 թ. առաջին եռամսյակ)» (2007 թվականի դեկտեմբերի 29-ի ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նիստի արձանագրություն):*

[4] *2008 թ. առաջին եռամսյակի ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներն են՝ հիմնված հունվար-փետրվարի փաստացի ցուցանիշների վրա:*

անկյունից 2008 թվականի առաջին եռամսյակում պակաս ընդլայնողական էր՝ կազմելով 1.6՝ կանխատեսված 2.8-ի փոխարեն: Վերոնշյալ զարգացումների արդյունքում ամբողջական պահանջարկի փաստացի զարգացումները սպառողական ապրանքների շուկայում լրացուցիչ գնաճային ճնշումներ չեն առաջացրել:

Ինչ վերաբերում է վճարային հաշվեկշռի զարգացումներին, ապա 2008 թ. առաջին եռամսյակի գնահատումների համաձայն գրանցվել է ապրանքների և ծառայությունների արտահանման դոլարային ծավալների տ/տ 14.0% աճ[5]: Այդ թվում՝ ապրանքների արտահանման դոլարային ծավալների տ/տ աճն առաջին եռամսյակում կազմել է 9.1%: Արդյունքում, առաջին եռամսյակում ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալների տ/տ աճը գրեթե զրոյական էր: Ներմուծման աճի բարձր տեմպերը 2008 թ. առաջին եռամսյակում պահպանվել են, և գրանցվել է ապրանքների և ծառայությունների ներմուծման դոլարային ծավալների տ/տ 28.7% ավելացում[6]: Դա հիմնականում պայմանավորվել է դեռևս նախորդ տարվանից արձանագրված՝ մարդատար ավտոմեքենաների, անմշակ ոսկու, հեռախոսային և հեռագրային ապարատների, մոդեմների դոլարային ծավալների ավելացմամբ: Ներմուծման իրական ծավալներն ավելացել են 2.6%-ով:

2008 թ. առաջին եռամսյակում, ըստ գնահատումների, ոչ առևտրային փոխանցումների զուտ ներհոսքի տ/տ աճը կազմել է 40.7% (հունվար-փետրվարի փաստացի տվյալներով՝ 48.4%):

- 2008 թվականի առաջին եռամսյակում նկատվել է տնտեսության դրամայնացման աճի տեմպերի փոքր-ինչ դանդաղում: Եթե փողի զանգվածի աճի տեմպերը նախորդ տարվա համեմատությամբ պահպանվել են՝ կազմելով մոտ 42%, ապա դրամային զանգվածի աճը կազմել է տ/տ 58.3%, այդ թվում՝ դրամային ավանդներինը 65.8%՝ նախորդ տարվա վերջի համապատասխանաբար 63.9 և 79.6%-ի փոխարեն: Միաժամանակ, տնտեսության վարկավորման աճի բարձր տեմպերը առաջին եռամսյակում շարունակել են պահպանվել՝ կազմելով տ/տ 81%:

Դրամավարկային քաղաքականության խստացման պայմաններում փողի բազան առաջին եռամսյակում նվազել է 10.8%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 6.4% նվազման փոխարեն:

2008 թվականի երկրորդից չորրորդ եռամսյակների ճշգրտված և 2009 թվականի առաջին եռամսյակի կանխատեսումները

Արտաքին միջավայր[7]

Թեև առաջին եռամսյակի վերջում հումքային ապրանքների շուկայի իրավիճակը որոշակիորեն կայունացել է, սակայն գնաճային ճնշումների ներուժը դեռևս ամբողջովին չի սպառվել, և ակնկալվում է, որ կշարունակվի նաև երկրորդ եռամսյակում: 2008 թվականի երկրորդ կեսից, արտաքին գնաճային նոր ցնցումների բացակայության պայմաններում, հնարավոր է գնաճային ճնշումների թուլացում: Այս ամենը կփոխանցվի Հայաստանի գնաճի վրա, որտեղ ներմուծված ապրանքների գների աճի տեմպերը կնվազեն լավագույն դեպքում 2008 թվականի երկրորդ կիսամյակում: Արտաքին հատվածում պահպանվում է բավականին մեծ անորոշության և ռիսկայնության մակարդակ, մասնավորապես՝ պայմանավորված ԱՄՆ տնտեսության անկմամբ և ֆինանսական ճգնաժամի խորացմամբ, ինչպես նաև ներդրողների և ֆինանսական շուկաների հետագա վարքագծով: Բացի այդ, դեռևս տեղեկատվություն չկա 2009 թվականին Ռուսաստանից ներկրվող բնական գազի գների փոփոխության վերաբերյալ, որը կարող է զգալիորեն ազդել գնաճի վրա:

---

[5] Հունվար-փետրվարին ապրանքների արտահանման (ՖՕԲ) ծավալների աճը կազմել է 6.2%, իսկ առանց ադամանդի՝ 9.3%: Ծառայությունների արտահանման ցուցանիշները կանխատեսումներ են:

[6] Հունվար-փետրվարին ապրանքների ներմուծման (ՍԻՖ) ծավալների աճը կազմել է 30.2%, իսկ առանց ադամանդի՝ 34.6%: Ծառայությունների ներմուծման ցուցանիշները կանխատեսումներ են:

[7] Արտաքին միջավայրի կանխատեսումների համար հիմք են ծառայել The Economist, Global Insight, Financial Times, US Department of Agriculture, РосБизнесКонсалтинг և այլ աղբյուրների տեղեկատվությունը:

Ընդհանուր առմամբ, կանխատեսումների հիմքում ԱՄՆ տնտեսության հարաբերականորեն «փափուկ վայրէջքի» սցենարն է, ըստ որի՝ 2008 թվականի երկրորդ կիսամյակից կսկսի վերականգնվել: Դա կվերաբերի նաև ֆինանսական, մասնավորապես՝ արժեթղթերի և վարկային շուկաներին, որտեղ ներդրողների հոսքը կթուլացնի ճնշումը հումքային ապրանքների գների և ԱՄՆ դոլարի փոխարժեքի վրա:

Եվրոյի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ կանխատեսվող ժամանակահատվածում որոշակիորեն կարժեզրկվի՝ 2009 թվականի առաջին եռամսյակի վերջում հասնելով 1.46 ԱՄՆ դոլար՝ եվրոյի դիմաց փոխարժեքին: Դրա պատճառը, ինչպես նշվեց վերևում, ԱՄՆ տնտեսական աճի վերականգնման միտումն է, որը կնկատվի 2008 թվականի երկրորդ կիսամյակում, մինչդեռ Եվրոգոտու տնտեսական աճը 2008 թվականին կշարունակի դանդաղել:

Ակնկալվում է, որ նավթի միջազգային գները 2008 թվականի երկրորդ եռամսյակում կպահպանեն բարձր մակարդակ, որից հետո կդրսևորեն դանդաղ նվազման միտում՝ 2009 թվականի առաջին եռամսյակի վերջում հասնելով մոտ 97 ԱՄՆ դոլար՝ բարելի դիմաց նշագծին: Դա, ընդհանուր առմամբ, պայմանավորված է ինչպես սպեկուլյատիվ ճնշումների թուլացմամբ, այնպես էլ նավթի համաշխարհային պահանջարկի նվազման կանխատեսումներով, որն արդեն առկա է գների բարձր մակարդակի պայմաններում:

Ներդրողների վարքագիծը կարող է ազդել նաև ոսկու միջազգային գների վրա, որոնք կանխատեսվող ժամանակահատվածի վերջում կնվազեն մինչև 850 ԱՄՆ դոլար:

Արդյունաբերական մետաղների պահանջարկը, պայմանավորված համաշխարհային տնտեսական աճի դանդաղմամբ, նույնպես որոշակիորեն կնվազի, իսկ գները կգտնվեն կայուն մակարդակում: Մասնավորապես՝ պղնձի գինը կանխատեսվող ժամանակահատվածում կպահպանվի 7000-7500 ԱՄՆ դոլար միջակայքում:

Հացահատիկի առումով անորոշությունը շատ ավելի մեծ է՝ պայմանավորված հիմնականում 2008 թվականի բերքի ակնկալիքներով, որոնք կձևավորվեն 2008 թվականի մայիս-հունիսին: Ընդ որում, էական ազդեցություն կարող են ունենալ նաև ինչպես պահանջարկի աճը և պաշարների ցածր մակարդակը, այնպես էլ զարգացած երկրների գյուղատնտեսական քաղաքականությունը և կենսավառելիքի կիրառության աճի տեմպերը: Հացահատիկի գները որոշակիորեն կարող են ազդել նաև մյուս պարենային ապրանքների՝ բրնձի, մսի, կաթնամթերքի, կենդանական և բուսական յուղերի և այլնի գների վրա, որոնք կպայմանավորվեն նաև տվյալ ապրանքների շուկաների իրավիճակով:

Ընդհանուր առմամբ, արտաքին միջավայրից գնաճային բարձր ճնշումները կպահպանվեն 2008 թվականի առաջին կիսամյակում և, իրադարձությունները բավականին բարենպաստ զարգանալու պարագայում, երկրորդ կիսամյակից կսկսեն թուլանալ:

Թեև արտաքին միջավայրում իրավիճակը բնութագրվում է շատ մեծ անորոշությամբ, և հնարավոր է նաև գնանկումային ռիսկի առկայություն, սակայն, ամենայն հավանականությամբ, ռիսկերը ուրվագծվում են գնաճային ճնշումների հնարավոր ավելացման ուղղությամբ:

Համախառն առաջարկ

2008 թվականի երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների ճյուղային կանխատեսումները վերանայվել են՝ չհանգեցնելով սակայն կանխատեսված ՀՆԱ աճի էական փոփոխության: Արդյունքում, տարվա երեք եռամսյակներում տնտեսական աճը կազմելու է 10-13%, իսկ 2009 թվականի առաջին եռամսյակում՝ 9-11%:

Ընդ որում, ինչպես նախորդ տարիներին, տնտեսական աճին շարունակելու են մեծապես նպաստել շինարարության և ծառայությունների ճյուղերը:

Շինարարության ճյուղում 2008 թվականի երեք եռամսյակներում ավելացված արժեքի 15-17% աճը պայմանավորվելու է տրանսպորտի, կապի, էներգետիկայի, մետաղագործության ճյուղերում ակնկալվող ներդրումներով: Շինարարության աճի տեմպի բարձր ցուցանիշը պահպանվելու է նաև հաջորդ տարի՝ 2009 թվականի առաջին եռամսյակում կազմելով 12-14%: Շինարարության ճյուղից եկող ռիսկերը ինչպես ավելացման, այնպես էլ նվազման ուղղությամբ են: Կանխատեսված աճի ցուցանիշի գերազանցման ուղղությամբ ռիսկերը կապված են մի քանի խոշոր նախագծերի հնարավոր իրականացման հետ: Շինարարության ծավալների աճի տեմպի նվազման ուղղությամբ ռիսկը պայմանավորված է առևտրային և ոչ առևտրային բնույթի տրանսֆերտների և անշարժ գույքի շուկայում պահանջարկի նվազմամբ:

Արդյունաբերության ճյուղում 2008 թվականի երեք եռամսյակներում ակնկալվում է ավելացված արժեքի 6-9% աճ՝ պայմանավորված շինանյութերի արտադրությունում, քիմիական արդյունաբերությունում և մետաղագործությունում սպասվող արտադրության ծավալների ավելացմամբ: Արդյունքում, արդյունաբերության ճյուղի նպաստումը տնտեսական աճի ցուցանիշին կազմելու է 1-1.4 տոկոսային կետ: 2009 թվականի առաջին եռամսյակում կանխատեսվում է արդյունաբերության 5-7% իրական աճ: Արդյունաբերության ճյուղից եկող ռիսկերը հիմնականում աճի ուղղությամբ են և պայմանավորված են ադամանդագործության և հանքարդյունաբերության (ուրանի հանքերի հետազոտում) ենթաճյուղերում հնարավոր զարգացումներով:

Ծառայությունների ոլորտում շարունակում է ակնկալվել բարձր աճի միտում, որը հիմնականում ապահովվելու է մանրածախ ապրանքաշրջանառության, ինչպես նաև տրանսպորտի և կապի ծառայությունների հաշվին: Արդյունքում, 2008 թվականին ծառայությունների ավելացված արժեքի իրական աճը կանխատեսվում է 12.5-14.5%, իսկ նպաստումը տնտեսական աճին՝ 3.8-4.4 տոկոսային կետ: 2009 թ. առաջին եռամսյակում ակնկալվում է ծառայությունների աճի տեմպի պահպանում 11.5-12.5%-ի միջակայքում: Այստեղ նույնպես առկա են ռիսկեր աճի և նվազման ուղղությամբ: Կանխատեսվող ցուցանիշների գերազանցման ռիսկերը պայմանավորված են տրանսպորտի և կապի ոլորտներում նախկինում կատարված և տարվա ընթացքում իրականացվելիք ներդրումների շահագործմամբ, ինչպես նաև երկաթգծի հավատարմագրային կառավարման արդյունքում բեռնափոխադրումների և ուղևորաշրջանառության հնարավոր աշխուժացմամբ: Ինչ վերաբերում է նվազման ուղղությամբ ռիսկերին, դրանք առաջին հերթին կապված են տրանսֆերտների հնարավոր նվազման, ինչպես նաև զբոսաշրջիկների թվի աճի տեմպի նվազման հետ:

Գյուղատնտեսության ճյուղում ակնկալվում է 2-4% իրական աճ: Ընդ որում, քանի որ բուսաբուծության ենթաճյուղի արտադրության ծավալները մեծապես կախված են կլիմայական պայմաններից, ապա դրան բնորոշ ռիսկերը երկակի բնույթ ունեն, մինչդեռ անասնապահության ենթաճյուղում ակնկալվում է շուրջ 4% կայուն աճ:

Համախառն պահանջարկ

